Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալություն միգրացիայի համատեքստում

Նախարարների կոմիտեի Հանձնարարական CM/Rec(2019)11 և Բացատրական հուշագիր

www.coe.int/children

Կառուցելով Եվրոպան երեխաների համար և նրանց հետ

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալություն միգրացիայի համատեքստում

Նախարարների կոմիտեի

Հանձնարարական CM/Rec(2019)11 և

Բացատրական հուշագիր

Եվրոպայի խորհուրդ

Բնօրինակ հրատարակություն.
Effective guardianship
for unaccompanied and
separated children
in the context of migration
Recommendation CM/Rec(2019)11
of the Committee of Ministers
and Explanatory Memorandum
© Council of Europe, October 2022

Տեքստը ստեղծվել և օգտագործվել է Եվրոպայի խորհրդի թույլտվությամբ: Ոչ պաշտոնական լեզվով այս թարգմանությունը հրատարակվում է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների ծրագրի շրջանակում, սակայն թարգմանիչ(ներ)ի/հրատարակիչ(ներ)ի բացառիկ պատասխանատվության ներքո:

Հատվածների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է ոչ առևտրային նպատակներով՝ տեքստի ամբողջականությունը պահպանելու, հատվածը համատեքստից դուրս չօգտագործելու, թերի տեղեկատվություն չտրամադրելու կամ ընթերցողին տեքստի բնույթի, ծավալի կամ բովանդակության վերաբերյալ այլ կերպ չմոլորեցնելու պայմանով: Բնօրինակ տեքստը պետք է նշվի հետևյալ կերպ՝
© Եվրոպայի խորհուրդ, սեպտեմբեր 2024

Բնօրինակ փաստաթղթի ամբողջական կամ մասնակի վերարտադրման/թարգմանության վերաբերյալ բոլոր այլ հարցումները պետք է հասցեագրվեն Եվրոպայի խորհրդի Հաղորդակցությունների տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int): Փաստաթղթի բնօրինակի կամ հայերեն թարգմանության վերաբերյալ ընդհանուր հաղորդակցությունը պետք է հասցեագրվի Ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով գլխավոր տնօրինությանը (www.coe.int/children):

Բնօրինակի կազմը և դասավորությունը՝
Փաստաթղթերի և հրապարակումների
մշակման վարչություն (SPDP),
Եվրոպայի խորհուրդ

Լուսանկարը՝ © Shutterstock

Հայերեն հրատարակությունը՝
© Council of Europe, սեպտեմբեր 2024
Տպագրվել է Եվրոպայի խորհրդում

Բովանդակություն

ԱՌԱՋԱԲԱՆ	**5**
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ CM/REC(2019)11 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԱՌԱՆՑ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՆ և ԸՆՏԱՆԻՔԻՑ ԱՆՁԱՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	**7**
Նախաբան	7
ՀԱՎԵԼՎԱԾ CM/REC(2019)11 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ	**11**
I. Նպատակը և շրջանակը	11
II. Սահմանումներ	12
III. Խնամակալության արդյունավետ համակարգի առաջնորդող սկզբունքներ	13
IV. Արդյունավետ խնամակալության համակարգի ուղեցույցների ներդրում	15
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ CM/REC(2019)11 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ	**27**
Ինչո՞ւ է անհրաժեշտ նոր փաստաթուղթը	27
Հանձնարարականի մշակման գործընթացը	28
Նախաբան	29
Հանձնարարական	29
Հանձնարարականի հավելված	29
Ստուգաթերթ հանձնարարականի իրականացման քաղաքականություն մշակողների համար	68
Ստուգաթերթ խնամակալության մարմինների համար	71
Ստուգաթերթ խնամակալների համար	73
Խնամակալության հետ կապված հիմնական տեղեկություններ երեխաների համար	75

Առաջաբան

Միգրացիան ճանապարհորդություն է դեպի անհայտություն, և շատերի, հատկապես երեխաների համար, այն գրեթե միշտ տրավմատիկ է: Տարիքի, սեռի կամ այլ խոցելիության պատճառով նրանց ճանապարհը լցված է ռիսկերով և խոչընդոտներով: 2022 թվականին Եվրոպան ականատես եղավ, թե ինչպես մեր մայրցամաքի սրտում պատերազմը ստիպեց միլիոնավոր ուկրաինացի երեխաների տեղահանվել կամ լքել իրենց հայրենիքը, նրանցից շատերը՝ միայնակ՝ առանց ծնողի կամ այլ չափահաս խնամողի պաշտպանության: Այս հանգամանքները և Եվրոպայում սահմանները հատած երեխաների անհետացման տագնապալի հաղորդումները պահանջում են անվտանգ և վստահելի խնամակալության համակարգ Եվրոպայում ապահով ապաստարան փնտրող երեխաների համար: Խնամակալի անհապաղ նշանակումը չափազանց կարևոր է նրանց իրավունքների պաշտպանության և երեխայի լավագույն շահերի ապահովման համար՝ առանց բացառության:

Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության մասին այս Հանձնարարականը, որն ընդունել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն 2019 թվականին՝ որպես բեկումնային փափուկ իրավունքի գործիք՝ ամուր խարսխված մարդու իրավունքների միջազգային և եվրոպական չափանիշների վրա, սահմանում է հստակ առաջնորդող սկզբունքներ խնամակալության միջոցով այդ երեխաների պաշտպանության, օգնության և անվտանգության համար: Դրա շարունակական իրականացմանն աջակցում է Եվրոպայի խորհրդի՝ Եվրոպայում միգրացիայի և ապաստանի համատեքստում խոցելի անձանց պաշտպանության գործողությունների ծրագրով (2021-2025) և Երեխայի իրավունքների ռազմավարությամբ (2022-2027): Հանձնարարականի Բացատրական հուշագիրը, որը Եվրոպայի խորհրդի Երեխաների իրավունքների ղեկավար կոմիտեն մշակել է 2022 թվականին, ներկայացնում է մեր անդամ պետություններում խնամակալու-թյան կազմակերպման տարբեր ուղիներ՝ բավարարելու համար միգրացիայում երեխաների հատուկ կարիքները:

Մարյա Ռուոտանեն
Ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով
գլխավոր տնօրեն

Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)11 հանձնարարականն անդամ պետություններին միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության մասին

(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից
2019 թվականի դեկտեմբերի 11-ին
Նախարարների տեղակալների 1363-րդ նիստում)

Նախաբան

Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15.բ հոդվածի պայմանների հիման վրա՝

Նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների միջև ավելի մեծ միասնության, այդ թվում՝ մարդու իրավունքների ոլորտում խթանելով համընդհանուր չափանիշները և համագործակցությունը.

Վերահաստատելով բոլոր մարդկանց հավասար արժանապատվության սկզբունքը և ընդգծելով պետության իրավազորության ներքո գտնվող բոլոր երեխաների մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք իրականացման, հարգման, պաշտպանության և խթանման երաշխավորման կարևորությունը՝ առանց որևէ հիմքով խտրականության.

Հաշվի առնելով միջազգային իրավական փաստաթղթերով, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով (1989թ.) և դրա կամընտիր արձանագրություններով, «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող «Մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին» ՄԱԿ-ի արձանագրությամբ (2000թ.), «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով (2006թ.), «Անչափահասների պաշտպանության նկատմամբ իրավասու մարմինների լիազորությունների և կիրառվող իրավունքի մասին» կոնվենցիայով (1961թ.), «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայով (1993թ.) և «Փախստական երեխաների և բնակության երկրից

տեղահանված այլ երեխաների նկատմամբ այն կիրառելու մասին» համապատասխան հանձնարարականով (1994թ.), «Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» կոնվենցիայով (1996թ.), ինչպես նաև փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության այլ փաստաթղթերով երեխաների հանդեպ պետությունների ստանձնած պարտավորությունները և հանձնառությունները.

Հաշվի առնելով համապատասխան եվրոպական իրավական փաստաթղթերում ամրագրված իրավունքները և պետությունների ստանձնած պարտավորություններն ու հանձնառությունները, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (ETS No. 5) և դրան կից արձանագրությունների, Եվրոպական սոցիալական խարտիայի (ETS No. 35 և դրա վերանայված տարբերակը՝ ETS No. 163), «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման առնչությամբ ֆիզիկական անձանց պաշտպանության մասին» կոնվենցիայի (ETS No. 108) և դրա արձանագրության (CETS No. 223), «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիայի (ETS No. 126), «Երեխաների իրավունքների իրականացման մասին» եվրոպական կոնվենցիայի (ETS No. 160), «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի» (CETS No. 197), «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (CETS No. 201) և «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի (CETS No. 210) հիման վրա.

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի նախադեպային իրավունքը և հաշվի առնելով այս ոլորտում Նախարարների կոմիտեի և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի համապատասխան հանձնարարականները, բանաձևերն ու հայտարարությունները, ինչպես նաև միջազգային մշտադիտարկման մարմինների և հանձնաժողովների համապատասխան առաջարկությունները.

Լինելով խորապես մտահոգված, որ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներն առավել խոցելի են և, որպես այդպիսին, կանգնած են իրենց հիմնարար իրավունքների և ազատությունների ոտնահարման մեծ ռիսկի առջև, մասնավորապես՝ կյանքի, գոյատևման և զարգացման իրավունքի, խտրականությունից զերծ լինելու իրավունքի, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի, քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքի, ապաստան հայցելու իրավունքի, առողջապահության ամենաբարձր հասանելի չափանիշների և առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքի, կրթության իրավունքի, բնակարանի իրավունքի, արդարադատության մատչելիության և բռնության բոլոր ձևերից պաշտպանված լինելու իրավունքի.

Գիտակցելով, որ երեխաները ստիպված են լինում լքել իրենց տունը և/կամ գաղթել՝ ուղեկցությամբ, առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված, տարբեր պատճառներով, ինչպիսիք են՝ հակամարտությունը կամ վատ վերաբերմունքի և հետապնդման այլ ձևերը, բռնությունը, ընտանիքի վերամիավորումը, միջավայրի փոփոխությունները, որոնք ազդում են նրանց կյանքի և կենսապայմանների վրա, կամ ավելի լավ տնտեսական, սոցիալական կամ մշակութային պայմանների որոնման համար.

Ընդունելով, որ միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներն իրավատեր են, և որ բոլոր երեխաներին պետք է երաշխավորվեն պաշտպանության, ընդունելության և խնամքի հավասար չափանիշներ.

Գիտակցելով, որ անհրաժեշտ է ձեռնարկել բաց կացարաններում համապարփակ և երեխաների կարիքներին միտված միջոցներ՝ ապահովելու միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների պաշտպանությունն ու աջակցությունը՝ արդյունավետորեն կանխելու անտեսումը, սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգը կամ շահագործման այլ ձևերը, հանցավոր գործունեության մեջ ներգրավվածությունը, հարկադիր աշխատանքը, օրգանների հեռացումը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, ազատությունից ապօրինի կամ կամայական զրկումը, խոշտանգումը, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը, ներգրավվածությունը զինված հակամարտություններին, երեխաների և հարկադիր ամուսնությունը և բռնության այլ վնասակար դրսևորումները կամ ձևերը, ներառյալ՝ գենդերային հիմքով բռնությունը.

Գիտակցելով լրացուցիչ պաշտպանության և աջակցության միջոցների անհրաժեշտությունն այն դեպքերում, երբ միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաները, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող կամ բռնության, վերաթրաֆիքինգի կամ վերազոհականացման վտանգի կամ խոցելի ցանկացած այլ իրավիճակում հայտնված երեխաները, գտնվում են առավել խոցելի իրավիճակում.

Հաշվի առնելով, որ երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում առաջնահերթություն պետք է տրվի երեխայի լավագույն շահերին, անկախ նրանից՝ դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության պետական, թե մասնավոր հաստատությունների, դատարանների, վարչական կամ օրենսդիր մարմինների կողմից, և դա պետք է իրականացվի նրանց կյանքի բոլոր բնագավառներում՝ անկախ որևէ հանգամանքից.

Նկատի ունենալով, որ պետությունները պետք է գիտակցեն երեխաների իրավունքը՝ ազատորեն արտահայտելու իրենց տեսակետներն իրենց առնչվող բոլոր հարցերում, և որ նրանց տեսակետներին տրվի նրանց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան անհրաժեշտ կշիռ և, որ պետությունները պարտավոր են ապահովել այդ իրավունքի հարգումը.

Համոզված լինելով, որ խնամակալության արդյունավետ համակարգը կարևոր երաշխիք է միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքների պաշտպանության համար և, որ խնամակալները

կարևոր դերակատարում ունեն երեխաների լավագույն շահերի պաշտպանության և այդ երեխաների կողմից իրենց իրավունքների իրացման գործում.

Համոզված լինելով, որ խնամակալությունը կարևոր է՝ ապահովելու համար, որ կայուն, իրավունքների վրա հիմնված լուծումներ գտնելու պետական ջանքերը նախաձեռնվեն և իրականացվեն առանց հապաղման,

Հանձնարարում է անդամ պետությունների կառավարություններին.

1. սահմանել միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության միջոցների համապարփակ և հետևողական շրջանակ, որը հաշվի կառնի անդամ պետություններում պարտավորությունների կազմակերպման ձևը,

2. գնահատել իրենց օրենսդրությունը, քաղաքականությունը և գործելակերպը և, անհրաժեշտության դեպքում, միջոցներ ձեռնարկել և հատկացնել ռեսուրսներ՝ ապահովելու սույն հանձնարարականի իրակա-նացման համար անհրաժեշտ բարեփոխումները,

3. ապահովել, որ սույն հանձնարարականը թարգմանվի և հնարավորինս լայնորեն տարածվի բոլոր իրավասու ազգային մարմինների, համապա-տասխան մասնագետների և շահառուների, ներառյալ՝ միգրացիայում գտնվող առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հարցերով զբաղվողների և հասարակական կազմակեր-պությունների շրջանում,

4. Եվրոպայի խորհրդի հանձնաժողովի միջոցով ստեղծել համաեվրոպական մակարդակով փորձագետների հարթակ՝ խթանելու պետությունների կողմից սկզբունքների և ընդունված ուղեցույցների կիրառումը, որը կգործի նաև որպես փորձի և լավ գործելակերպի փոխանակման կանոնավոր ֆորում՝ նպատակ ունենալով աջակցել անդամ պետություններին՝ ամրապնդելու իրենց ներպետական խնամակալության համակարգերը և դյուրացնելու նրանց միջև միջսահմանային համագործակցությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսները,

5. Նախարարների կոմիտեում համապատասխան միջկառավարական հանձնաժողովի միջոցով ուսումնասիրել սույն հանձնարարականի կատարումը՝ դրա ընդունումից երեք տարի հետո և դրանից հետո՝ նույնպիսի պարբերականությամբ:

Հավելված CM/Rec(2019)11
Հանձնարարականի

Առաջնորդող սկզբունքներ և կիրառելի ուղեցույցներ՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության համար

I. Նպատակը և շրջանակը

1. Սույն առաջնորդող սկզբունքների և կիրառելի ուղեցույցների նպատակն է աջակցել պետություններին՝ ապահովելու, որ իրենց իրավազորության շրջանակներում գտնվող առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին, որպես առանց ուղեկցության երեխա ճանաչվելուց անմիջապես հետո, արդյունավետորեն տրամադրվի խնամակալություն, որպեսզի նրանց իրավունքները և լավագույն շահերը հավուր պատշաճի պաշտպանվեն և հաշվի առնվեն նրանց վերաբերող բոլոր գործընթացներում և որոշումներում՝ միջազգային և եվրոպական չափանիշներին համապատասխան:

2. Հաշվի առնելով այս ոլորտում միջազգային և եվրոպական իրավական փաստաթղթերը, ինչպես նաև համապատասխան ուղեցույցները և փորձառությունը, այս սկզբունքները և կիրառելի ուղեցույցները, մասնավորապես, միտված են.

ա. աջակցելու պետություններին՝ արդյունավետ կատարելու իրենց պարտավորություններն ու պարտականությունները միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ՝ առաջնորդելով բոլոր իրավասու շահառուների քաղաքականությունը, որոշումները և գործունեությունը,

բ. ուղղորդել խնամակալության չափորոշիչներ մշակելիս և կիրառելիս, այդ թվում՝ մշակելով միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքները պաշտպանելու և նրանց լավագույն շահերի նկատմամբ հարգանք ապահովելու համար միասնական շրջանակ՝ հաշվի առնելով անդամ պետություններում պարտավորությունների կազմակերպման տարբեր ձևերը,

գ. քաջալերել պետություններին՝ նպաստել խնամակալության հետ կապված կայուն և խոստումնալից գործելակերպերի փոխանակմանը և խթանել այն՝ ապահովելու միգրացիայում առանց ուղեկցության և

ընտանիքից անջատված երեխաների իրավունքների պաշտպանությունը՝ միաժամանակ նրանց նկատմամբ կիրառվող միգրացիոն քաղաքականության ընթացքում ապահովելով իրավունքների վրա հիմնված մոտեցում,

3. Նշված առաջնորդող սկզբունքները և կիրառելի ուղեցույցները վերաբերում են միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության միջոցներին,

4. Սկզբունքները և միջոցները, հնարավորության սահմաններում, պետք է կիրառելի լինեն նաև այն երիտասարդների նկատմամբ, ովքեր խնամակալության կամ այլ միջոցներով շարունակական խնամքի և աջակցության կարիք ունեն անցումային ժամանակահատվածում՝ 18 տարին լրանալուց հետո կամ հատուկ իրավիճակներում, ինչպես սահմանված է ընդունող պետության օրենսդրությամբ:

II. Սահմանումներ

1. Սույն հանձնարարականի նպատակով.

ա. «երեխա»՝ 18 տարեկանը չլրացած ցանկացած անձ,

բ. «առանց ուղեկցության երեխա»՝ երեխա, որը բաժանվել է և՛ երկու ծնողից, և՛ այլ հարազատներից և որին չի խնամում որևէ չափահաս անձ, որն օրենքի կամ սովորույթի ուժով պատասխանատու է դրա համար,

գ. «ընտանիքից անջատված երեխա»՝ երեխա, որը բաժանվել է երկու ծնողից կամ նախկինում օրենքի կամ սովորույթի ուժով իր հիմնական խնամողից, բայց՝ ոչ անպայմանորեն այլ հարազատներից: Ուստի, սա կարող է ներառել ընտանիքի այլ չափահաս անդամների խնամքի ներքո գտնվող երեխաներին,

դ. «խնամակալ»՝ անձ, որը նշանակված է կամ որին հանձնարարված է օժանդակել, աջակցել, և, օրենքով նախատեսված դեպքերում, ներկայացնել առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաներին՝ նրանց առնչվող գործընթացներում: Երբ մարմինը կամ կազմակերպությունը նշանակվում է որպես խնամակալ երեխային օժանդակելու, աջակցելու և նրա իրավունակությունն իրականացնելու համար, վերջինս հանձնարարում է սույն ուղեցույցներում սահմանված խնամակալի պարտականությունների կատարումը որևէ ֆիզիկական անձի: Խնամակալը գործում է անկախ՝ երաշխավորելու երեխայի իրավունքները, լավագույն շահերը և բարեկեցությունը: Խնամակալը հանդես է գալիս որպես երեխայի և նրա նկատմամբ պատասխանատվություն կրող բոլոր շահառուների միջև կապող օղակ: Սույն գործառնական սահմանումը հաշվի է առնում, որ կիրառվող եզրույթը, ինչպես նաև խնամակալի գործառույթն ու նշանակման եղանակը, կարող են տարբերվել՝ ըստ տարբեր պետությունների իրավակարգավորումների,

ե. «խնամակալության մարմին»՝ մարմին, որն իրականացնում է միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության կառավարման իր պարտականությունը, ներառյալ՝ գործերի վարումը և աջակցումը: Սույն եզրույթը հաշվի է առնում, որ գոյություն ունեն պետության կողմից «խնամակալությունը» սահմանելու և դրա կատարումը կազմակերպելու տարբեր ձևեր,

զ. «կայուն, իրավունքների վրա հիմնված լուծում»՝ համապարփակ, անվտանգ և կայուն լուծում, որը երաշխավորում է, որ երեխան կարող է զարգանալ մինչև չափահաս տարիքն այնպիսի միջավայրում, որը կբավարարի նրա կարիքները և կպաշտպանի նրա իրավունքները, ինչպես սահմանված է «Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայով, և երեխային չի կանգնեցնի խտրականության, բռնության, հալածանքի կամ որևէ այլ լուրջ վնասի վտանգի առջև: Նման լուծումը ենթադրում է, որ լավագույն շահերը պետք է մանրակրկիտ սահմանվեն և երեխայի տեսակետը պետք է հաշվի առնվի՝ երկարատև լուծում մշակելիս և իրականացնելիս,

է. «կենսունակության ծրագրեր»՝ ներդրված քաղաքականության գործիք, որը հասանելի է անդամ պետություններին՝ միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների կարիքները բավարարելու և նրանց միգրացիայից բխող մարտահրավերներին դիմագրավելու համար, ինչպես սահմանված է առանց ուղեկցության միգրանտ անչափահասների կենսունակության ծրագրերի մասին Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին տրված CM/Rec(2007)9 հանձնարարականում: Կենսունակության ծրագրերը հիմնված են երեխայի և իրավասու մարմինների միջև սահմանափակ տևողությամբ համատեղ նախաձեռնության վրա: Կախված կոնկրետ նպատակներից՝ դրանք կարող են իրականացվել ընդունող երկրում, ծագման երկրում կամ երկուսում էլ:

III. Խնամակալության արդյունավետ համակարգի առաջնորդող սկզբունքներ

Սկզբունք 1. Միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքների պաշտպանություն՝ խնամակալության միջոցով

Պետությունները պետք է գործարկեն խնամակալության արդյունավետ համակարգ, որը հաշվի կառնի միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հատուկ կարիքներն ու հանգամանքները՝ նրանց իրավունքները պաշտպանելու և առաջ մղելու և նրանց լավագույն շահերն ապահովելու համար:

Սկզբունք 2. Խնամակալության կառուցակարգերը և միջոցները

Պետությունները պետք է ընդունեն և իրականացնեն համապատասխան իրավական, քաղաքական, կարգավորող և/կամ վարչական կառուցակարգեր՝

միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալությունն ապահովելու համար:

Սկզբունք 3. Խնամակալների նշանակում՝ առանց անհարկի ուշացման

Պետությունները պետք է ապահովեն, որ միգրացիայում առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխան ունենա առանց անհարկի ուշացման նշանակված խնամակալ՝ հաշվի առնելով երեխայի անհատական հատկանիշները, մինչև երեխայի չափահաս դառնալը նրան աջակցություն ցուցաբերելու համար, և որ 18 տարին լրանալուց հետո, անցումային ժամանակաշրջանում, ըստ անհրաժեշտության, հատուկ իրավիճակներում նրան հասանելի լինի խնամքն ու աջակցությունը՝ խնամակալության կամ այլ միջոցով:

Սկզբունք 4. Խնամակալների իրավական պարտավորությունները և խնդիրները

Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն իրավազորելու խնամակալներին՝ տեղեկացնել, օժանդակել, աջակցել և, օրենքով նախատեսված դեպքերում, ներկայացնել միգրացիայում գտնվող առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին՝ նրանց առնչվող գործընթացներում, պաշտպանել նրանց իրավունքները և լավագույն շահերը և կապող օղակ հանդիսանալ երեխայի և նրա համար պատասխանատու մարմինների, գործակալությունների և անհատների միջև: Պետությունները պետք է ապահովեն, որ խնամակալները վայելեն իրենց դերին համապատասխան անկախություն ու անաչառություն:

Սկզբունք 5. Տեղեկատվություն, արդարադատության և իրավական պաշտպանության միջոցների մատչելիություն, ներառյալ՝ երեխաների համար գանգատների բարենպաստ ընթացակարգեր

Պետությունները պետք է ապահովեն, որ միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին տրամադրվի համապատասխան տեղեկատվություն և խորհրդատվություն և, որ նրանց հասանելի լինի գանգատների անկախ ընթացակարգ և իրավական միջոցներ՝ իրենց իրավունքները արդյունավետ իրացնելու կամ իրենց իրավունքների խախտումների դեպքում միջոցներ ձեռնարկելու համար:

Սկզբունք 6. Ինստիտուցիոնալ միջոցառումներ

Պետությունները պետք է ապահովեն իրավասու մարմնի կազմավորումը, որը պատասխանատու է միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության կառավարման համար՝ հաշվի առնելով անդամ պետություններում խնամակալության համար պարտավորությունների կազմակերպման ձևը:

Սկզբունք 7. Ռեսուրսներ, կադրերի հավաքագրում, որակավորում և վերապատրաստում

Պետությունները պետք է համապատասխան ռեսուրսներ հատկացնեն միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության ապահովման համար, ներառյալ՝ երաշխավորելով, որ խնամակալները պատշաճ կերպով ստուգված են,

հուսալի են և որակավորված և, որ նրանց աջակցում են իրենց պարտականությունների կատարման ողջ ընթացքում:

Սկզբունք 8. Համագործակցություն և համակարգում ներպետական մակարդակով

Պետությունները, իրենց ներքին համակարգերին համապատասխան, պետք է ընթացակարգեր ստեղծեն և միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու արդյունավետ համագործակցություն և համակարգում միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ պատասխանատվություն կրող մարդկանց և խնամակալի և/կամ խնամակալության մարմնի միջև:

Սկզբունք 9. Միջազգային համագործակցություն

Պետությունները պետք է արագ, կառուցողական և արդյունավետ կերպով ապահովեն միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հարցերով միջազգային համագործակցության ամենալայն շրջանակը, այդ թվում՝ ընտանիքի հայտնաբերման և կայուն, իրավունքի վրա հիմնված լուծումների մշակման և իրականացման համար, և համապատասխան ձևերով ներգրավեն իրենց խնամակալության մարմինը և/կամ խնամակալներին:

IV. Արդյունավետ խնամակալության համակարգի ուղեցույցների ներդրում

Սկզբունք 1. Միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքների պաշտպանություն՝ խնամակալության միջոցով

Պետությունները պետք է գործարկեն խնամակալության արդյունավետ համակարգ, որը հաշվի կառնի միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հատուկ կարիքներն ու հանգամանքները՝ նրանց իրավունքները պաշտպանելու և առաջ մղելու և նրանց լավագույն շահերն ապահովելու համար:

1. Խնամակալության համակարգ ստեղծելիս և կիրառելիս պետք է լիովին հաշվի առնվեն երեխաների վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային պարտավորությունները:

2. Յուրաքանչյուր առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխա ունի իրավասու մարմինների կողմից տրամադրվող հատուկ պաշտպանություն և օգնություն, ինչպես նաև խնամակալի աջակցություն և օգնություն ստանալու իրավունք:

3. Պետությունները պետք է ապահովեն, որ խնամակալության միջոցառումները հաշվի առնեն երեխաների լավագույն շահերը և հատուկ հանգամանքները, ներառյալ հատուկ խոցելիության հանգամանքները, որոնցում նրանք հայտնվում են գտնվելով իրենց ծագման երկրների

սահմաններից դուրս, ինչպես նաև խոցելիության ցանկացած գործոն, որը պահանջում է լրացուցիչ պաշտպանություն և օգնություն:

4. Պետությունները պետք է ապահովեն խնամակալության համար գործուն ընթացակարգեր՝ մեղմելու այդ երեխաների նկատմամբ խտրականության, նրանց անտեսման, սեռական բռնության, հարկադիր աշխատանքի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, առևանգման, մանկական ամուսնության և բռնության այլ ձևերի ենթարկվելու սրված ռիսկերը:

5. Պետությունները պետք է ապահովեն, որ խնամակալությունը նպաստի երաշխավորելուն, որ այդ երեխաների համար կայուն, իրավունքների վրա հիմնված լուծումների բացահայտմանն ուղղված ջանքերը ձեռնարկվեն և իրականացվեն առանց ուշացման, ներառյալ ընտանիքի վերամիավորման հնարավորությունը՝ հիմնված երեխայի լավագույն շահերի որոշման վրա:

Սկզբունք 2. Խնամակալության ընթացակարգերը և միջոցները

Պետությունները պետք է ընդունեն և գործարկեն համապատասխան իրավական, քաղաքական, կարգավորող և/կամ վարչական ընթացակարգեր՝ միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալությունն ապահովելու համար:

1. Պետությունները պետք է գործարկեն խնամակալության արդյունավետ համակարգ՝ հաշվի առնելով կարիքների զարգացող բնույթը և երեխաների հետ կապված պետության տարբեր պարտավորությունների կազմակերպման եղանակը, մասնավորապես, այն առումով, թե ինչպես են խնամակալները գործում, համակարգում և համագործակցում այլ ծառայությունների և շահառուների հետ՝ երեխայի իրավունքների իրացման համար:

2. Պետությունները պետք է ընդունեն և գործարկեն խնամակալության համապարփակ իրավական, քաղաքական, կարգավորող և/կամ վարչական ընթացակարգ՝ ներառյալ հետևյալ դրույթները.

ա. մասնագիտական չափանիշներ, պահանջներ և որակավորումներ.

բ. խնամակալների ընտրության, ստուգման, հավաքագրման և նշանակման ընթացակարգեր.

գ. խնամակալների պարտականությունները, իրավունքները և պարտավորությունները, ինչպես նաև օժանդակ միջոցները և խնամակալների ռեգիստրը.

դ. վերապատրաստման պահանջները.

ե. ընթացակարգեր՝ ապահովելու, որ երեխաներին տրամադրվի տեղեկատվություն և օգնություն, և որ նրանց տեսակետներն արտահայտվեն, հաշվի առնվեն և պատշաճ կշիռ ունենան համապատասխան ընթացակարգերի բոլոր փուլերում.

զ. երեխաների համար հասանելի անհատական գանգատի կառուցակարգեր և հարակից ընթացակարգեր.

Է. միջգերատեսչական և բազմամասնագիտական համագործակցության և համակարգման ընթացակարգեր և գործընթացներ ազգային և միջազգային մակարդակներում.

Ը. անհրաժեշտության դեպքում՝ գաղտնիության և տվյալների պաշտպանության պահանջներ.

Թ. խնամակալության մարմնի կողմից խնամակալների մշտադիտարկում, հսկում և վերահսկում.

Ժ. երեխաների խնամակալության միջոցների մշտադիտարկում, այդ թվում՝ անկախ մարմնի կողմից:

3. Խնամակալի նշանակման և փոփոխության, ինչպես նաև խնամակալության դադարեցման հետ կապված հանգամանքներն ու ընթացակարգերը պետք է սահմանվեն օրենքով՝ հաշվի առնելով երեխայի լսվելու իրավունքը, երեխայի լավագույն շահերը, կայունության և շարունակականության կարիքը և, անհրաժեշտության դեպքում, ենթակա լինեն դատական վերանայման:

4. Պետությունները պետք է ապահովեն խնամակալության համակարգի մշտադիտարկում կանոնավոր պարբերականությամբ, այդ թվում՝ երեխաների հետ խորհրդակցելու միջոցով:

Սկզբունք 3. Խնամակալների նշանակում՝ առանց անհարկի ուշացման

Պետությունները պետք է ապահովեն, որ առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխայի խնամակալը նշանակվի առանց անհարկի ուշացման՝ հաշվի առնելով անհատական հատկանիշները, որպեսզի երեխային աջակցություն ցուցաբերի մինչև նրա չափահաս դառնալը, և որ 18 տարին լրանալուց հետո անցումային ժամանակաշրջանում, ըստ անհրաժեշտության, հատուկ իրավիճակներում նրան հասանելի լինի խնամքն ու աջակցությունը՝ խնամակալության կամ այլ միջոցով:

1. Յուրաքանչյուր առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխա պետք է ունենա խնամակալ՝ անկախ նրա ներգաղթյալի կարգավիճակից:

2. Պետությունները պետք է ապահովեն, որ մեկ այլ իրավասու մարմնի (օրինակ՝ դատարանի) որոշման հիման վրա խնամակալը նշանակվի առանց անհարկի ձգձգումների, անմիջապես այն բանից հետո, երբ միգրացիայում գտնվող երեխայի մասին զեկուցվում է կամ նա ճանաչվում է որպես առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխա:

3. Խնամակալի նշանակման հետաձգման հետ կապված բացառիկ դեպքերում, պետությունը պետք է ապահովի, որ որևէ բաց չլինի միգրացիայում առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխայի իրավունքների հնարավոր իրականացման կամ արդյունավետ պաշտպանության համար:

4. Երբ առկա է անորոշություն, թե արդյոք անձը երեխա է, նույնիսկ տարիքի գնահատման ներպետական ընթացակարգերն իրականացնելուց հետո, պետությունը պետք է ապահովի, որ անձն ունենա խնամակալ կամ իրավասու մարմնի կողմից պահպանվի նրա իրավունքների հարգման երաշխիքը:

5. Միգրացիայում գտնվող առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված յուրաքանչյուր երեխա պետք է լինի տեղեկացված և նրա տեսակետը պետք է հաշվի առնվի խնամակալի նշանակման գործընթացում՝ հաշվի առնելով նրա անհատական հանգամանքները, օրինակ՝ տարիքը, հասունության աստիճանը, զարգացող կարողությունները, համապատասխան թարգմանության և մշակութային միջնորդության անհրաժեշտությունը:

6. Միգրացիայում առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված յուրաքանչյուր երեխա պետք է կարողանա որոշակի հանգամանքներում պահանջել խնամակալի փոփոխություն կամ, եթե որպես խնամակալ նշանակվել է կազմակերպություն, խնամակալի պարտականությունները կատարող անձի փոփոխություն:

7. Խնամակալի նշանակումը պետք է տևի այնքան, մինչև խնամակալությունը փոխանցվի, պատասխանատվությունը ստանձնեն ծնողները կամ երեխան հասնի չափահասության տարիքի:

8. Սկզբունքները և միջոցները, հնարավորության սահմաններում, պետք է կիրառելի լինեն նաև այն երիտասարդների նկատմամբ, ովքեր խնամակալության կամ այլ միջոցներով շարունակական խնամքի և աջակցության կարիք ունեն անցումային ժամանակահատվածում՝ 18 տարին լրանալուց հետո կամ հատուկ իրավիճակներում, ինչպես սահմանված է ընդունող պետության օրենսդրությամբ:

Սկզբունք 4. Խնամակալների իրավական պարտավորությունները և խնդիրները

Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն իրավազորելու խնամակալներին՝ տեղեկացնել, օժանդակել, աջակցել և, օրենքով նախատեսված դեպքերում, ներկայացնել միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին՝ նրանց առնչվող գործընթացներում, պաշտպանել նրանց իրավունքները և լավագույն շահերը և կապող օղակ հանդիսանալ երեխայի և նրա համար պատասխանատու մարմինների, գործակալությունների և անհատների միջև: Պետությունները պետք է ապահովեն, որ խնամակալները վայելեն իրենց դերին համապատասխան անկախություն ու անաչառություն:

1. Կիրառվող միջոցները պետք է լիազորեն և արտոնեն խնամակալներին տեղեկացնել, օժանդակել և աջակցել միգրացիայում առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաներին, և, ըստ անհրաժեշտության և օրենքով նախատեսված դեպքերում, լրացնել նրանց սահմանափակ իրավունակությունը այդ երեխաներին առնչվող գործընթացներում և որոշումներում: Մասնավորապես, խնամակալի դերը պետք է ներառի.

ա. ապահովելը, որ երեխաները տեղեկացված լինեն և հասկանան իրենց իրավունքները,

բ. երեխաների պաշտպանության իրավասու համակարգին իրազեկելը, երբ երեխաները ենթարկվում են բռնության, դաժան վերաբերմունքի, անտեսման կամ շահագործման, և միջնորդելը և/կամ նպաստելը՝

երեխաներին համապատասխան պաշտպանության և խնամքի տրամադրմանը,

գ. երեխաների բարեկեցությունն ու զարգացումն ապահովելը, այդ թվում՝ լսելով երեխային և հաշվի առնելով նրա տեսակետը՝ նպաստելով նրա պատշաճ խնամքի, կեցության, առողջապահության, կրթության և մասնագիտական ուսուցման և ցանկացած այլ համապատասխան մասնագիտական աջակցության ծառայությունների մատչելիությանը,

դ. անցումային տարիքում երեխաներին ուղղորդելը, այդ թվում՝ կենսունակության անհատականացված ծրագրերի միջոցով,

ե. երեխաներին նախապատրաստելը/ապահովելը, որ երեխաները կարողանան օգտվել և հնարավորություն ունենան մասնակցելու իրենց կարգավիճակին և իրավունքների իրացմանը վերաբերող ընթացակարգերի մշակման և որոշումների կայացման գործընթացներին, այդ թվում՝ իրենց ինքնությանը, տարիքին և կայուն, իրավունքների վրա հիմնված լուծումներին վերաբերող գործընթացներին, և որ երեխաներին աջակցություն տրամադրվի իրենց առնչվող գործընթացներին մասնակցելու համար,

զ. երեխաների սահմանափակ իրավունակությունն ընդլայնելը,

Է. վարչական և դատական վարույթներում ներկայացուցչություն և, անհրաժեշտության դեպքում, իրավախորհրդատու ստանալու հարցում երեխաներին աջակցելը,

ը. անհայտ կորած երեխաների դեպքերի մասին հաղորդելը,

թ. իրավասու մարմինների հետ համագործակցելը՝ ապահովելու երեխայի լավագույն շահը, օրինակ՝ նույնականացման և տարիքի գնահատման և ընտանիքի հայտնաբերման գործընթացներում,

ժ. երեխայի անունից դրամական միջոցներն ու գույքը կառավարելը,

ժա. երեխային լրացուցիչ պաշտպանության միջոցներ տրամադրելու հիմքերը գնահատելը, այդ թվում՝ նման միջոցների տևողությունը երկարաձգելը, և այդ կապակցությամբ խնամակալության մարմնին խորհրդատվություն տրամադրելը:

2. Խնամակալը պետք է իրավասու լինի ձեռնարկել երեխայի լավագույն շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններ, մասնավորապես՝

ա. գնահատել երեխայի լավագույն շահերը իրեն առնչվող բոլոր գործողություններում,

բ. օրենքով նախատեսված դեպքում նախաձեռնել երեխայի համար իրավաբանի/իրավաբանական հարցերով ներկայացուցչի նշանակման գործընթաց՝ երեխային համապատասխան իրավական գործընթացներում ներկայացնելու համար, եթե դա չի մտնում այլ մարմնի պարտականությունների մեջ,

գ. երեխայի լավագույն շահերը պաշտպանելու ձախողումների դեպքում վիճարկել իշխանությունների գործողությունները:

3. Խնամակալը պետք է աջակցի, մասնավորապես, այն միջոցների մշակմանն ու իրականացմանը, որոնք վերաբերվում են. յուրաքանչյուր երեխայի խոցելիության գնահատմանը, այդ թվում՝ պաշտպանության ռիսկերի և կարիքների կանոնավոր գնահատմանը, լավագույն շահերի գնահատմանը, տարիքի գնահատմանը և խնամակալության ընթացակարգերին: Օրենքով նախատեսված լինելու դեպքում խնամակալը պետք է օժանդակի ընտանիքի հայտնաբերման գործելակարգերին, կորած երեխաների հայտնաբերման, ներգաղթի կամ ապաստանի գործելակարգերին և վարչական կամ դատական վարույթներին:

4. Խնամակալը պատասխանատու է երեխայի համար, և ձեռնարկված միջոցները պետք է նպաստավոր միջավայր ստեղծեն խնամակալի համար՝ երեխայի հետ վստահության հարաբերություններ զարգացնելու համար: Գործող քաղաքականությունն ու ընթացակարգերը պետք է ապահովեն անձնական շփումների և այցելությունների կանոնավորությունը և սահմանեն գաղտնիության ցանկացած կանոն, որը կիրառելի է նրանց միջև հաղորդակցության համար՝ իրենց մանդատի ընթացքում և դրանից հետո: Խնամակալի կողմից երեխային վերաբերող տեղեկատվության ցանկացած բացահայտման համար պետք է պահանջվի երեխայի նախնական համաձայնությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ բացահայտումն անհրաժեշտ է՝ ելնելով երեխայի լավագույն շահերից:

5. Խնամակալը պետք է գործի որպես երեխայի և համապատասխան մարմինների, գերատեսչությունների և անհատների միջև կապող օղակ: Ձեռնարկված միջոցները պետք է խնամակալին իրավունք տան համագործակցելու և համակարգելու երեխային վերաբերող հարցերը այլ շահառուների հետ, մասնավորապես՝ խնամողների, երեխայի օրինական ներկայացուցչի (ներկայացուցիչների), կրթության ոլորտի մասնագետների, սոցիալական աշխատողների և սոցիալական ծառայությունների, առողջապահության ոլորտի մասնագետների, ընդունելությունների կենտրոնների տնօրենների, ոստիկանության, իրավապահ և դատական մարմինների, միգրացիոն մարմինների, տուժողների աջակցության ծառայությունների և համայնքային ծառայությունների: Միևնույն ժամանակ գործող միջոցները համապատասխան շահառուներից պետք է պահանջեն՝ տեղեկացնել խնամակալին և երեխային համապատասխան ընթացակարգերի և որոշումների մասին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, երեխային վերաբերող հարցերով համագործակցել խնամակալի հետ:

6. Պետությունները պետք է ապահովեն, որ յուրաքանչյուր խնամակալ օգտվի իր դերին համապատասխան անկախությունից և անկողմնակալությունից, պաշտպանություն ապահովեն անտեղի ազդեցությունից կամ միջամտությունից, և ապահովեն, որ նրանք հաշվետու լինեն: Մասնավորապես, երեխային աջակցելու, օժանդակելու և ներկայացնելու հարցում խնամակալները չպետք է իրականացնեն որևէ այլ պարտականություն, որը կարող է հանգեցնել փաստացի կամ հնարավոր շահերի բախման:

Սկզբունք 5. Տեղեկատվություն, արդարադատության և իրավական պաշտպանության միջոցների մատչելիություն, ներառյալ երեխաների համար գանգատների բարենպաստ ընթացակարգեր

Պետությունները պետք է ապահովեն, որ միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին տրամադրվի համապատասխան տեղեկատվություն և խորհրդատվություն և, որ նրանց հասանելի լինի գանգատների անկախ ընթացակարգ և իրավական միջոցներ՝ իրենց իրավունքները արդյունավետորեն իրացնելու կամ իրենց իրավունքների խախտումների դեպքում միջոցներ ձեռնարկելու համար:

1. Պետությունները պետք է ապահովեն, որ երեխաներին տրամադրվի համապատասխան տեղեկատվություն և խորհրդատվություն իրենց իրավունքների և ընթացակարգերի վերաբերյալ՝ ներառյալ այն հարցերի, որոնք առնչվում են իրենց իրավիճակի ըմբռնմանը, խնամակալության միջոցների շրջանակին, խնամակալի և խնամակալության մարմնի դերին և պարտականություններին, գանգատների ներկայացման գործընթացներին և ընթացակարգերին, դատական վարույթի կամ արտադատական այլընտրանքային տարբերակների դիմելու հնարավորությանը և նրանց վրա ազդող որոշումներին կամ վճիռներին:

2. Այդպիսի տեղեկատվությունը և խորհրդատվությունը պետք է տրամադրվի յուրաքանչյուր երեխայի այն լեզվով, որը նա հասկանում է կամ ողջամտորեն ենթադրվում է, որ հասկանում է՝ երեխայի համար դյուրըմբռնելի ձևով, ընդ որում երեխայի՝ տրամադրված տեղեկատվության ըմբռնումը պետք է հաստատվի խնամակալի կողմից: Խնամակալին տեղեկատվության տրամադրումը չպետք է այլընտրանք լինի երեխային տեղեկությունը հաղորդելուն:

3. Պետությունները պետք է ապահովեն գործուն կառուցակարգեր, որոնք թույլ կտան երեխաներին օգտվել խնամակալի, խնամակալության և/կամ խնամակալության մարմնի վերաբերյալ գանգատ ներկայացնելու անկախ և արդյունավետ ընթացակարգից: Նման ընթացակարգերը, ի թիվս այլնի, պետք է լինեն երեխաների համար հեշտ հասանելի, հարմար և թափանցիկ և ուղեկցվեն համապատասխան երաշխիքներով՝ ապահովելու տեղեկատվության գաղտնիության պաշտպանությունը: Գանգատ ներկայացնելը երեխայի համար չպետք է անբարենպաստ հետևանքներ ունենա:

4. Պետությունները պետք է խրախուսեն վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերի օգտագործումը, ինչպիսին է հաշտարարությունը, եթե դրանք լավագույնս կարող են ծառայել երեխայի լավագույն շահերին, թեև դրանք չպետք է խոչընդոտ լինեն երեխայի՝ արդարադատության մատչելիությանը:

5. Պետությունները պետք է ապահովեն, որ յուրաքանչյուր երեխայի հասանելի լինի գանգատի հիման վրա կայացված որոշման դեմ իրավասու մարմնի առջև արդյունավետ պաշտպանության միջոց, այն դեպքերում, երբ գանգատների քննության ընթացակարգը ինքնին դատական ընթացակարգ չէ: Իրավասու մարմինը պետք է լինի անկողմնակալ և անկախ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին

կոնվենցիայում և Նախարարների կոմիտեի՝ 2010թ. երեխաների համար բարենպաստ արդարադատության ուղեցույցներում սահմանված չափանիշ-ներին և երաշխիքներին համապատասխան: Արդյունավետ պաշտպանութ-յան միջոցը ենթադրում է, որ երեխային պետք է հասանելի լինի իր շահերի ներկայացուցչություն և, անհրաժեշտության դեպքում, փաստաբան, ինչպես նաև թարգմանություն: Վարույթը պետք է լինի երեխաների նկատմամբ զգայուն և նրանց հասանելի, ընդ որում արդարադատությունը ժամանակին և անվճար ապահովելու համար պետք է կիրառվի հրատապության սկզբունքը: Որոշումը պետք է բացատրվի երեխայի համար դյուրըմբռնելի ձևով՝ հարմարեցված երեխայի տարիքին և հասունությանը:

Սկզբունք 6. Ինստիտուցիոնալ միջոցառումներ

Պետությունները պետք է ապահովեն իրավասու մարմնի ձևավորումը, որը պատասխանատու է միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության կառավարման համար՝ հաշվի առնելով անդամ պետություններում խնամակալության համար պարտավո-ությունների կազմակերպման ձևը:

1. Պետությունները պետք է ապահովեն, որ իրավասու մարմինը պատասխանատու լինի խնամակալության կառավարման, այսինքն՝ խնամակալների հավաքագրման, ստուգման և վերապատրաստման համար՝ երաշխավորելու, որ երեխաների պաշտպանության համարժեք քաղաքակա-նությունները ներառված են խնամակալության համակարգում, ինչպես նաև խնամակալների վերահսկման համար: Երեխայի շահերի հետ ցանկացած բախում կանխելու համար պետությունները պետք է սահմանեն այդ մարմնի համար համապատասխանության հստակ չափորոշիչներ:

2. Իրավասու մարմինը պետք է պատասխանատու լինի խնամակալների և երեխաների համար համապատասխան ընթացակարգերի և աջակցության միջոցների կամ ծառայությունների սահմանման համար, որոնք ներառում են.

ա. նախնական և շարունակական վարչական օժանդակություն, խորհրդատվություն և աջակցության միջոցառումներ կամ ծառայություններ, ինչպես նաև վերապատրաստում և զարգացում, որպեսզի խնամակալները կարողանան համապատասխանել պահանջվող մասնագիտական չափանիշներին, պահպանել դրանք և բարելավել իրենց պարտականությունների հետ կապված գիտելիքներն ու հմտությունները,

բ. խնամակալների վարքագծի գործառնական ընթացակարգերի չափանիշների սահմանում,

գ. խնամակալների հաղորդակցության, ցանցային հաղորդակցության և ինքնօգնության կառուցակարգեր,

դ. խնամակալների համար ներդաշնակեցված ընթացակարգեր և գործընթացներ՝ անհայտ կորած կամ բռնության, չարաշահման, թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված երեխաների դեպքերը զեկուցելու և գրանցելու համար,

ե. երեխաների համար հարմարեցված տեղեկատվական նյութեր՝ միգրացիայում առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաների համար, որոնք ներառում են, ի թիվս այլնի, տեղեկություններ, որոնք վերաբերվում են խնամակալների գործառույթներին, իրավունքներին և պարտականություններին, խնամակալի մատչելիությանը, հաղորդակցության սկզբունքների գաղտնիությանը, երեխայի իրավունքների վերաբերյալ անհատական բողոքարկման կառուցակարգերին, մատչելի աջակցության և պաշտպանության միջոցներին և ծառայություններ մատուցողներին, այլ շահառուների դերին ու պարտականություններին և ցանկացած վերաբերելի քրեական, վարչական և քաղաքացիական վարույթին:

3. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ խնամակալները պատասխանատու լինեն կառավարելի թվով գործերի համար, որոնք թույլ են տալիս կատարել իրենց պարտականությունները՝ հաշվի առնելով դրանց բարդությունը և երեխայի համար խնամակալի անհատական ուշադրության և համապատասխան անհատականացված աջակցության կանոնավոր հասանելիության անհրաժեշտությունը:

4. Պետությունները պետք է ապահովեն խնամակալների պարտականությունների և գործառույթների իրականացման և իրավասու մարմնի գործառույթների կատարման կանոնավոր մշտադիտարկում, հսկողություն և վերահսկողություն, այդ թվում՝ երեխաների մասնակցությամբ և ապահովելով նրանց հետ հետադարձ կապը:

5. Ձեռնարկված միջոցները պետք է ապահովեն, որ իրավասու մարմինն ունենա երեխայի համար այլ պարտականությունների կատարումից անհրաժեշտ գործառնական անկախություն:

6. Իրավասու մարմինը պետք է պատասխանատու լինի իր խնամքի տակ գտնվող յուրաքանչյուր երեխայի վերաբերյալ անհատական գործի նյութերի պահպանման համար: Համապատասխան թղթապանակում պետք է ներառվեն խնամակալության հետ կապված տեղեկություններ՝ խնամակալության ողջ ընթացքում:

7. Պետությունները պետք է ապահովեն, որ հաշվառում վարելու պահանջներն ու միջոցները, անհրաժեշտության դեպքում, նրանց հնարավորություն տան ապացույցներ տրամադրելու ցանկացած վերաբերելի վարույթի և գանգատարկման գործընթացի վերաբերյալ, և որ այդ գրառումների գաղտնիությունը համապատասխանի տվյալների պաշտպանության միջազգային չափանիշներին:

Սկզբունք 7. Ռեսուրսներ, կադրերի հավաքագրում, որակավորում և վերապատրաստում

Պետությունները պետք է համապատասխան ռեսուրսներ հատկացնեն միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության ապահովման համար, ներառյալ՝ երաշխավորելով, որ խնամակալները պատշաճ կերպով ստուգված են, հուսալի են և որակավորված և, որ նրանց աջակցում են իրենց պարտականությունների կատարման ողջ ընթացքում:

1. Պետությունները պետք է կանոնավոր հիմունքներով տվյալներ հավաքեն՝ նպատակ ունենալով պարզել միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության հետ կապված երեխաների թվաքանակը, կարիքները և հատկացված ռեսուրսները, և նախատեսեն խնամակալության միջոցների վերանայման հնարավորություն՝ ապահովելու համար, որ դրանք արձագանքեն փոփոխվող կարիքներին, ներառյալ արտակարգ իրավիճակներում:

2. Պետությունները պետք է ապահովեն, որ խնամակալության մարմնին հատկացվեն կայուն և համարժեք ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսներ:

3. Պետությունները պետք է սահմանեն գործընթացներ՝ երաշխավորելու, որ խնամակալության իրավասու մարմնի աշխատակազմը պահպանի բարձր մասնագիտական չափանիշներ, ներառյալ՝ գաղտնիության հետ կապված, դրսևորի բարձր բարեվարքություն և ունենա անհրաժեշտ հմտություններ:

4. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ խնամակալներն ունենան անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձառություն՝ կապված երեխաների զարգացման, երեխայի իրավունքների, երեխաների բարեկեցության և պաշտպանության համակարգի և հասանելի ծառայությունների հետ՝ հաշվի առնելու նրանց վստահված երեխաների հատուկ և մշակութային կարիքները:

5. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ խնամակալներին և խնամակալության մարմնին տրամադրվի համապատասխան աջակցություն՝ իրենց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար, որը պետք է ներառի նախնական և շարունակական կրթություն և վերապատրաստում:

Սկզբունք 8. Համագործակցություն և համակարգում ներպետական մակարդակում

Պետությունները, իրենց ներքին համակարգերին համապատասխան, պետք է ստեղծեն ընթացակարգեր և ձեռնարկեն միջոցներ միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ պատասխանատվություն կրող մարդկանց և խնամակալի և/կամ խնամակալության մարմնի միջև արդյունավետ համագործակցություն և համակարգում ապահովելու համար:

1. Պետությունները պետք է սահմանեն միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հետ կապված՝ խնամակալի և խնամակալության մարմնի դերերը, խնդիրներն ու պարտականություններն այլ իրավասու մարմինների և շահառուների հետ հարաբերություններում՝ ինչպիսիք են, մասնավորապես, այլ ազգային և տեղական իշխանությունները, սոցիալական ծառայությունները, երիտասարդական ծառայությունները և կազմակերպությունները՝ հաշվետվողականության և թափանցիկության ապահովման համար:

2. Պետությունները պետք է ստեղծեն գործառնական համակարգման կառուցակարգ, որը կներառի խնամակալության մարմինը, որպեսզի

սահմանված քաղաքականությունն ապահովի միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների շարունակական բարեկեցությունը, նրանց լավագույն շահերը և, որ կայուն, իրավունքների վրա հիմնված լուծումների որոնումն ու իրականացումը բոլոր համապատասխան հարցերում արժանանա նրանց առաջնային ուշադրության, և որ համապատասխան մասնագետները համագործակցեն և համակարգեն իրենց գործողությունները:

3. Խնամակալների, խնամակալության մարմնի և բոլոր այլ շահառուների միջև կանոնավոր հիմունքներով համագործակցությունն ու համակարգումը բարելավելու համար պետությունները պետք է մշակեն կանխագրեր, համաձայնագրեր, ստանդարտ գործառնական ընթացակարգեր և ուղղորդման կառուցակարգեր՝ պաշտպանելու միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին՝ նույնականացման պահից մինչև կայուն, իրավունքների վրա հիմնված լուծումների իրականացումը, ներառյալ՝ առանձին դեպքերի կառավարման պարագայում:

4. Պետությունները պետք է ապահովեն, որ ուղղորդման կառուցակարգերն անդրադառնան խնամակալի և խնամակալության մարմնի դերին՝ միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխայի անհետացման դեպքում և այն իրավիճակներում, երբ երեխան բռնության, դաժան վերաբերմունքի, թրաֆիքինգի կամ շահագործման զոհ է կամ կանգնած է նման վտանգի առաջ:

5. Պետք է ստեղծվեն համագործակցության և համակարգման գործընթացներ և ուղիներ՝ ապահովելու համար, որ պահպանվի գաղտնիությունը, այդ թվում՝ երեխայի հետ և երեխայի, խնամակալի և այլ շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության փոխանակման առնչությամբ՝ որպես առաջնային խնդիր դիտելով երեխայի լավագույն շահերը և հաշվի առնելով տվյալների պաշտպանության միջազգային չափանիշները:

6. Պետությունները պետք է դյուրացնեն խնամակալների և այլ շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ համագործակցությունը և համակարգումը՝ պարբերաբար տրամադրելով բազմագերատեսչական և բազմամասնագիտական վերապատրաստում և գործիքներ:

7. Պետությունները պետք է ապահովեն համագործակցության և համակարգման մշտադիտարկում և շարունակական գնահատում՝ համապատասխան շահառուների մասնակցությամբ:

Սկզբունք 9. Միջազգային համագործակցություն

Պետությունները պետք է արագ, կառուցողական և արդյունավետ կերպով ապահովեն միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հարցերով միջազգային համագործակցության ամենալայն շրջանակը, այդ թվում՝ ընտանիքի հայտնաբերման և կայուն, իրավունքի վրա հիմնված լուծումների մշակման և իրականացման համար, և պատշաճ ձևով ներգրավեն իրենց խնամակալության մարմինը և/կամ խնամակալներին:

1. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ հավուր պատշաճի սահմանելու խնամակալի և խնամակալության մարմնի դերն ու պար-

տականությունները միջազգային համագործակցության համատեքստում, այդ թվում՝ ընտանիքի հայտնաբերման և ընտանեկան հանգամանքների գնահատման, խնամքի և խնամակալության պարտականությունների փոխանցման, կայուն, իրավունքների վրա հիմնված լուծումների հաստատման, երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, երեխաների անհետացման կանխարգելման և անհայտ կորած երեխաների հայտնաբերման նպատակով:

2. Պետությունները պետք է իրավական հիմք ունենան միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների հետ կապված հարցերում միջազգային համագործակցություն ապահովելու համար՝ ինչպես իրենց նախաձեռնությամբ, այնպես էլ արձագանքելով հարցմանը:

3. Պետությունները պետք է ունենան հստակ ուղիներ կամ կառուցակարգեր՝ միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների վերաբերյալ տեղեկատվության կամ այլ տեսակի աջակցության հարցումների փոխանցման և կատարման համար, ինչպես նաև հստակ և արդյունավետ գործընթացներ՝ առաջնահերթությունների և հարցումների ժամանակին կատարման, ինչպես նաև գաղտնիության և տվյալների պաշտպանության պարտավորություններին համապատասխան ուղարկված և ստացված տեղեկատվության պահպանման համար՝ լիովին հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը և, անհրաժեշտության դեպքում, ներգրավելով խնամակալին և/կամ դատարանին և/կամ խնամակալության մարմնին:

4. Երեխայի իրավունքները, երեխայի բարեկեցությունը և նրա լավագույն շահերն ապահովելու համար այն դեպքերում, երբ նրանց իրավիճակը մտահոգում է մեկից ավելի պետությունների, կամ երբ երեխան տեղափոխվում է մեկ այլ պետություն, պետությունները պետք է համագործակցեն ամենաարդյունավետ միջոցներով, ներառյալ՝ բանակցություններ վարելով կամ, ապահովելով խնամակալների և խնամակալության հաստատությունների ժամանակին համագործակցությունը օտարերկրյա գործընկերների հետ:

5. Պետությունները պետք է համագործակցեն և խթանեն միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության հետ կապված գիտելիքների, փորձի և լավ գործելակերպի կանոնավոր փոխանակումը:

Բացատրական հուշագիր՝ Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների արդյունավետ խնամակալության մասին Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)11 հանձնարարականի

Ինչո՞ւ է անհրաժեշտ նոր փաստաթուղթը

1. Միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներ են համարվում ծնողներից, հարազատներից և նրանց խնամքի համար պատասխանատու այլ մեծահասակներից բաժանված երեխաները: Հաշվի առնելով երեխաների՝ ծնողներից և նրանց խնամքի համար պատասխանատու այլ մեծահասակ անձանցից բաժանված լինելու հանգամանքը՝ պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ երեխաների պաշտպանության և օգնություն տրամադրելու գործընթացները կազմակերպելու նպատակով: Որպես նրանց պաշտպանության առաջին քայլ՝ պետք է դիտվի խնամակալի նշանակումը՝ օրենքով կամ դատարանի որոշմամբ, որը պատասխանատվություն է կրելու երեխայի լավագույն շահերն ապահովելու համար[1]:

2. Հանձնարարականի նախաբանում հղում է կատարվում միջազգային և եվրոպական այն փաստաթղթերին, որոնք արդեն իսկ նախատեսում են երեխաների պաշտպանությունը և երաշխիքների հատուկ միջոցներ: Այդուհանդերձ, առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաները բախվում են բազմաթիվ խնդիրների և նրանց խոցելիությունից բխող խոչընդոտների, որոնք հաղթահարելու համար պահանջվում է օրենքով սահմանել հատուկ կառուցակարգեր և երաշխիքներ՝ նրանց իրավունքների պաշտպանությունը լիովին ապահովելու համար[2]:

---

[1] Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) ընդունել է, որ «…ներկայում առկա է լայն կոնսենսուս, ներառյալ միջազգային իրավունքում, այն գաղափարի շուրջ, որ երեխաներին վերաբերող բոլոր որոշումներում գերակայողը նրանց լավագույն շահերն են»: Տե՛ս ՄԻԵԴ 3-րդ հոդվածի առնչությամբ *Rahimi-ն ընդդեմ Հունաստանի*, թիվ 8687/08, § 108, 5 ապրիլի 2011թ. և 8-րդ հոդվածի առնչությամբ, *Neulinger-ն և Shuruk-ն* ընդդեմ Շվեյցարիայի, թիվ 41615/07, § 135, 6 հուլիսի 2010թ.: Տես նաև «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի (ԵԻԿ) 3-րդ հոդվածը, մասնավորապես 3 § 1 հոդվածը:

[2] ՄԻԵԴ ընդգծել է, որ առանց ուղեկցության երեխաները չափազանց խոցելի են: Տե՛ս *Mubilanzila Mayeka-ն և Kaniki Mitunga-ն ընդդեմ Բելգիայի* գործով վճռում, թիվ 13178/03, § 55, 12/10/2006թ. այս եզրակացությունը պատճառաբանվել է հետևյալ ձևակերպմամբ. *«… Դիմումատուի նկատմամբ*

3. Հանձնարարականը և դրա առաջնորդող սկզբունքներն ու կիրառելի ուղեցույցները հասցեարգրված են ինչպես որոշում կայացնողներին, այնպես էլ այն պրակտիկ մասնագետներին, որոնք աշխատում են խնամակալության միջոցով ապահովել առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների պաշտպանությունը, ընդունելությունը, խնամքը և բարեկեցությունը: Դրանք պարունակում են կոնկրետ ցուցումներ օրենսդրության մշակման, հանրային քաղաքականության և ինստիտուցիոնալ միջոցառումների պլանավորման վերաբերյալ՝ երեխաների համար արդարադատության և արդյունավետ իրավական պաշտպանության հասանելիության ապահովման, ինչպես նաև համապատասխան շահագրգիռ կողմերի միջև համագործակցության և համակարգման հատուկ ասպեկտների վերաբերյալ, այդ թվում՝ միջազգային մակարդակով

4. Հանձնարարականը համախմբում և ամբողջականացնում է երեխաների պաշտպանության վերաբերյալ օրենսդրությունը, ծառայում է որպես ուղեցույց անդամ պետություններին՝ դրա արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Հարկ է նաև նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միգրացիայումում առանց ուղեկցության երեխաների գործերով իր վճիռներում սկսել է վկայակոչել Հանձնարարականը[3]:

Հանձնարարականի մշակման գործընթացը

5. Հանձնարարականը մշակվել է Եվրոպայի խորհրդի երեխաների իրավունքների հարցերով հատուկ հանձնաժողովի փորձագիտական խմբի կողմից՝ Եվրոպայի խորհրդի համապատասխան մարմինների և միջազգային միջկառավարական ու հասարակական կազմակերպությունների հետ խորհրդակցությունների արդյունքում: Հանձնարարականը մշակող փորձագետների խումբը կազմված է եղել Եվրոպայի խոհրդի անդամ պետությունների միջազգային և միջառկայական փորձագետներից: Այն կոնսենսուսով ընդունվել է Եվրոպայի խոհրդի նախարարների կոմիտեի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 11-ին՝ Եվրոպայի խոհրդի անդամ պետությունները ներկայացնող նախարարների տեղակալների 1363-րդ նիստում:

դիրքորոշումը պահմանավորված էր նրա շատ երիտասարդ տարիքով, այն փաստով, որ նա ապօրինի ներգաղթյալ էր օտար երկրում և, որ նա մնացել էր առանց ընտանիքի ուղեկցության, որից նա անջատվել էր, և փաստորեն թողնվել իր իսկ հույսին: Հետևաբար, նա հայտնվել էր ծայրահեղ խոցելի վիճակում»:

Տե՛ս նաև 2013թ. «Ընդունման պայմանների մասին» թիվ 33 ԵՄ հրահանգի (2013/33/EU), հոդված 21 և 2008թ.«Վերադարձի մասին» թիվ 115 ԵՄ հրահանգի (2008/115/EC), հոդված 3(9):

[3] Տե՛ս ՄԻԵԴ, *Moustahi-ն ընդդեմ ֆրանսիայի*, No. 9347/14, 25 հունիսի 2020 թ., § 28:

Նախաբան

6. Նախաբանում նշվում է, որ առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաներին հասանելի են երեխաների իրավունքները պաշտպանող, միջազգային և եվրոպական առանցքային իրավական փաստաթղթերով ճանաչված իրավունքները ու պաշտպանությունները՝ բացառելով որևէ խտրականություն: Նաև նշվում է, որ այդ երեխաները բախվում են լրացուցիչ խոչընդոտների և ռիսկերի, որոնք պահանջում են լրացուցիչ երաշխիքներ և պաշտպանություն: Այս փաստաթղթի նպատակն է որպես ուղեցույց ծառայել անդամ պետություններին՝ երաշխավորելու համապարփակ և երեխաների համար բարենպաստ միջոցներ՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքները պահպանելու և պաշտպանելու համար:

7. Հանձնարարականը կիրառելիս անդամ պետություններն կարող են գործադրել ավելի բարձր չափանիշներ կամ պաշտպանության ավելի բարենպաստ միջոցներ առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաների համար:

Հանձնարարական

8. Հանձնարարականը կոչ է անում անդամ պետություններին մի շարք գործնական քայլեր ձեռնարկել առկա շրջանակներն ամրապնդելու և գնահատելու համար, այդ թվում՝ Հանձնարարականի իրականացման և տարածման նպատակով ռեսուրսների հատկացմամբ: Այն նաև կոչ է անում հետամուտ լինել պետությունների միջև համագործակցության հետագա զարգացմանը, ինչը կարևոր նախապայման է երեխաներին տրամադրվող խնամքի և պաշտպանության շարունակականությունն ապահովման համար, նույնիսկ անդրսահմանային համատեքստում:

9. Հանձնարարականում նաև անդամ պետություններին առաջարկվում է Նախարարների կոմիտեի շրջանակում եռամյա պարբերականության դիտարկել Հանձնարարականի կատարումը, ստեղծել փորձագետների համաեվրոպական հարթակ՝ դրա իրականացմանը նպաստելու համար և հանդես գալ որպես փորձի ու լավագույն գործելակերպի փոխանակման համաժողով:

Հանձնարարականի հավելված

10. Հանձնարարականի Հավելվածում ներկայացված են մանրամասն ցուցումներ անդամ պետություններին, որտեղ նշվում են Հանձնարարա-կանի նպատակները և շրջանակները (I), հիմնական սահմանումները (II),

առաջնորդող սկզբունքները (III) և կիրառելի ուղեցույցները (IV): Հարկ է նշել, որ հանձնարարականում «երեխա» եզրույթը վերաբերում է 18 տարին չլրացած ցանկացած անձի՝ անկախ ազգային օրենսդրությամբ չափահասության սահմանումից, և որ «խնամակալ» եզրույթը վերաբերում է ինչպես օրենքի համաձայն խնամակալ նշանակված անձանց, այնպես էլ այլ անձանց, որոնց խնամակալություն կատարելը հանձնարարվում է դատարանի որոշմամբ՝ արտացոլելով խնամակալության հարցում տարբեր մոտեցումներ:

11. Հատկանշական է նաև, որ սույն Հանձնարարականը վերաբերում է միգրացիայում բոլոր երեխաներին, որոնք զրկված են ծնողական խնամքից՝ անկախ նրանից, թե նրանք հեռացել են իրենց ծագման երկրից առանց ծնողների կամ նրանց խնամքի համար պատասխանատու այլ մեծահասակների ուղեկցության, թե նրանցից անջատվել են ճամփորդության ընթացքում:

12. Հանձնարարականում նշված ինը առաջնորդող սկզբունքները նկարագրում են այն ամենը, ինչ պահանջվում է խնամակալության արդյունավետ համակարգի (III), ինչպես նաև անդամ պետություններում խնամակալության համակարգերի ներդրման համար (IV): Սույն Բացատրական հուշագիրը պարունակում է այս ինը սկզբունքների վերաբերյալ լրացուցիչ գործնական առաջարկություններ:

Սկզբունք 1. Միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքների պաշտպանություն՝ խնամակալության միջոցով

13. Հանրաճանաչ սկզբունք է՝ պետությունը պետք է հատուկ պաշտպանություն և աջակցություն ցուցաբերի երեխային, որը ժամանակավորապես կամ մշտապես զրկված է իր ընտանեկան միջավայրից, կամ որին չի կարելի թույլ տալ մնալ այդ միջավայրում՝ նրա լավագույն շահերից ելնելով[4]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ առանց ուղեկցության երեխաներին խնամքից զրկելը կարող է հավասարեցվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի»[5]: ՄԱԿ-ի Երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղեցույցներում նշվում է, որ ոչ մի երեխա չպետք է մնա առանց խնամակալի կամ նրա համար պատասխանատու ճանաչված այլ

[4] Տե՛ս ՄԱԿ-ի ԵԻԿ 20-րդ հոդվածը, «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» ԵՍ կոնվենցիայի 10-րդ հոդվածը, «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին» ԵՍ կոնվենցիայի 31-րդ հոդվածը:

[5] Տե՛ս ՄԻԵԴ, *Rahimi-ն ընդդեմ Հունաստանի*, թիվ 8687/08, 2011 թ. ապրիլի 5: Տե՛ս նաև ՄԻԵԴ, *Abdullahi Elmi-ն և Aweys Abubakar-ն ընդդեմ Մալթայի*, թիվ 25794/13 և 28151/13, 2016 թ. նոյեմբերի 22 և ՄԻԵԴ, *Moustahi-ն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 9347/14, 2020 թ. հունիսի 25, §§ 65–67:

մեծահասակի կամ իրավասու պետական մարմնի աջակցության և պաշտպանության[6]: Լանցարոտեի կոմիտեն ևս կարևորել է առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված յուրաքանչյուր երեխայի համար խնամակալի նշանակման անհրաժեշտությունը, որը կարող է վճռորոշ լինել երեխայի մոտ վստահության ամրապնդմանը և կնպաստի երեխայի սեռական շահագործման և նրա նկատմամբ սեռական բռնության դեպքերի բացահայտմանը[7]: Ըստ էության, խնամակալությունը երաշխավորում է, որ ծնողական խնամքից զրկված յուրաքանչյուր երեխա իր կողքին ունենա որևէ մեծահասակի, որը պետք է աջակցի և սատարի նրան և, անհրաժեշտության դեպքում, կարող է հանդես գալ նրա անունից: Դա կենսական երաշխիք է՝ երբ երեխան գտնվում է պետության խնամքի ներքո, նա կարող է օգտվել ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով և միջազգային իրավական այլ համապատասխան նորմերով նախատեսված իրենց բոլոր իրավունքներից[8]:

14. Ընտանիքից զրկված, և իրենց ծագման կամ մշտական բնակության երկրի սահմաններից դուրս գտնվող երեխաներին ուղեկցում են մի շարք հատկանիշներ, հանգամանքներ և կարիքներ, որոնք պետք է հաշվի առնվեն խնամակալության համակարգերում: Դրանք, մասնավորապես, այն առանձնահատուկ խոցելի իրավիճակներն են, որոնցում կարող են հայտնվել երեխաները, այդ թվում՝ խտրականության, անտեսման, շահագործման, սեռական, ֆիզիկական կամ հոգեբանական բռնության, դաժան վերաբերմունքի, թրաֆիքինգի և մարդկանց շահագործման վտանգի սրացում: Իրենց ծագման երկիրը կամ բնակության վայրը լքելիս և նոր պետություն հասնելու ճանապարհին ունեցած տարաբնույթ փորձառությունների հետևանքով այդ երեխաները կարող են տառապել հոգետրավմայով, ինպես նաև ունենալ ֆիզիկական կամ հոգեկան առողջության հատուկ կարիքներ: Արդյունավետ խնամակալությունը հարմարեցվում և արձագանքում է այդ հատուկ կարիքներին և հանգամանքներին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ անդամ պետությունները պոզիտիվ պարտականություն ունեն պաշտպանելու առանց ուղեկցության երեխաներին, նույնիսկ, երբ նրանք չեն գտնվում իշխանությունների խիստ հսկողության ներքո[9]:

---

[6] Տե՛ս «Երեխաների այլընտրանքային խնամքի մասին» ՄԱԿ-ի ուղեցույցի 19-րդ հոդված:

[7] Տե՛ս «Փախստականների ճգնաժամից տուժած երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու մասին» Լանցարոտեի կոմիտեի 2017 թվականի մարտի 3-ի հատուկ զեկույցը

[8] Տե՛ս Հիմնարար իրավունքների գործակալություն, «Խնամակալություն ծնողական խնամքից զրկված երեխաների համար. ձեռնարկ՝ ամրապնդելու խնամակալության համակարգերը՝ թրաֆիքինգից տուժած երեխաների հատուկ կարիքները հոգալու համար», Լյուքսեմբուրգ, Հրապարակումների գրասենյակ, (2014a), էջ 31:

[9] Տե՛ս ՄԻԵԴ, *Rahimi-ն ընդդեմ Հունաստանի*, վերոնշյալ, §§ 87-94: Տե՛ս նաև *V.M. -ն և այլք ընդդեմ Բելգիայի*, (ՄՊ), թիվ 60125/11, գործը, «Դատաքննության ենթակա գործերի ցանկից հեռացնելու մասին» որոշում 17/11/2016:

15. Խնամակալության համակարգերում պետք է հաշվի առնեն նաև գենդերային, մշակութային և լեզվական տարբերությունները, որոնք հատուկ հատկանիշներ են: Բացի դրանից՝ միգրացիայի համատեքստում երեխաների խնամակալությունը միտված է լուծել նաև նրանց առջև ծառացած առանձնահատուկ խնդիրները, ինչպիսիք են տարիքային գնահատման գործընթացները, ընդունելության պատշաճ պայմանները, կրթական և առողջապահական ծառայությունների հասանելիությունը, ընտանիքի հայտնաբերումն ու ընտանեկան կապերի վերականգնումը, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից, ներգաղթի և միջազգային պաշտպանության ընթացակարգերը, առողջապահական ծառայությունները, երեխայի հնարավոր արտաքսումը ծագման երկիր[10], խտրականությունից պաշտ-պանությունը, ինչպես նաև կայուն լուծումների վերհանումը և իրականա-ցումը: Ավելին՝ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների խնամակալության արդյունավետ համակարգը պետք է հիմնված լինի օրենքով նախատեսված այլ ծառայու-թյունների հետ համագործակցության և համակարգման հիման վրա, ներառյալ՝ երիտասարդական, սոցիալական, իրավապահ մարմինները և ներգաղթի ծառայությունները, որոնց հետ երեխան պետք է համագործակցի՝ իր ներգաղթյալի կարգավիճակն ապահովելու համար:

16. Միգրացիայի համատեքստում երեխաների իրավունքների վերաբերյալ միջազգային ուղեցույցն ընդգծում է խնամակալների կարևոր դերը՝ նրանց իրավունքների պաշտպանությունը և արդյունավետությունը ապահովելու հարցում[11]:

17. Արդյունավետ խնամակալությունը կարևորագույն նշանակություն ունի ոչ միայն միգրացիայի համատեքստում երեխաների համար, այն նաև բերում մի շարք իրավական, գործնական և տնտեսական առումներով օգուտներ պետությանը: Մասնավորապես, խնամակալի կողմից տրամադրվող անկախ աջակցությունը և ներկայացուցչությունը թույլ է տալիս պետությանը փոխգործակցել երեխայի հետ բարդ և զգայուն վարչական ու դատական ընթացակարգերի ընթացքում, որոնց միջոցով երեխան պետք է անցնի՝ նրա հարցերին կայուն լուծում գտնելու համար: Արդյունավետ խնամակալությունը կարող է նաև նպաստել ավելի հիմնավորված ընթացակարգերի և որոշումների իրականացմանը՝ հաշվի առնելով, որ խնամակալի աջակցու-

[10] Տե՛ս վերոնշյալ, *Mubilanzila Mayeka-ն և Kaniki Mitunga-ն ընդեմ Բելգիայի*, §§ 66-69:

[11] Տե՛ս ՄԱԿ-ի երեխաների իրավունքների հանձնաժողովի 6-րդ ընդհանուր մեկնաբանությունը (2005)՝ «Ծագման երկրից դուրս առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ» և Համատեղ ընդհանուր 22 և 23 մեկնաբանությունները (2017)՝ «Միջազգային միգրացիայի համատեքստում երեխաների իրավունքներին առնչվող ընդհանուր սկզբունքների մասին», «Ծագման, տարանցման, նպատակակետի և վերադարձի երկրներում միջազգային միգրացիայի համատեքստում երեխաների իրավունքների վերաբերյալ պետական պարտավորությունների մասին»:

թյան շնորհիվ երեխաներն, ամենայն հավանականությամբ, ավելի լավ կներգրավվեն գործընթացում[12]: Խնամակալը կարող է նաև հանդես գալ որպես միջնորդ երեխայի ընտանիքի կամ ծագման երկրում այլ դերակատարների միջև, ինչը կարող է էական նշանակություն ունենալ, մասնավորապես, երբ ընտանիքի անդամները միջամտում են երեխայի գործողություններին: Այն դեպքում, երբ երեխան ներգրավված է մի շարք տարբեր ընթացակարգերում, արդյունավետ խնամակալությունը կարող է ապահովել, որ դրանց ընթացքում միասնական մոտեցում ապահովվի: Բացի դրանից, երբ խնամակալը հանդես է գալիս որպես երեխայի համար պատասխանատու անձ և միջամտում է երեխային սպասարկող ծառայություններին, խնամակալությունը կարող է նպաստել ծառայությունների ընդհանուր մատուցման ավելի լավ համակարգմանը և ներդաշնակեցմանը: Հետևաբար՝ պետության համար և՛ պատասխանատվություն է, և՛ օգուտ միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար արդյունավետ խնամակալությունն ապահովելը:

18. Ներկայումս անդամ պետություններում գործում են խնամակալության տարբեր մոդելներ՝ սկսած միգրացիայի համատեքստում երեխաների համար խնամակալության հատուկ համակարգերից մինչև խնամակալության ընդհանուր դրույթների կիրառումը բոլոր երեխաների նկատմամբ, ներառյալ միգրացիայի համատեքստում գտնվող երեխաներին: Որոշ պետություններում խնամակալության պարտականությունների կատարումը դրված է մասնագիտացված սոցիալական աշխատողների վրա, իսկ մյուսներում խնամակալ կարող են ունենալ միգրացիայի համատեքստում երեխաների միայն որոշ կատեգորիաները (օրինակ՝ նրանք, ովքեր հայցում են միջազգային պաշտպանություն), իսկ մի շարքում էլ միգրացիայի համատեքստում երեխաներին խնամակալությունը ընդհանրապես հասանելի չէ, փոխարենը նրանց խնդիրներով հիմնականում զբաղվում են նրանց որդեգրող ծնողները[13], սոցիալական աշխատողները, խնամքի կենտրոնների և միգրացիայի ծառայության աշխատողները:

19. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ խնամակալի բացակայությունը մեծացնում է երեխայի իրավունքների լուրջ խախտումների ռիսկը վտանգը[14]: Նույնպես, միգրացիայի համատեքստում երեխաների նկատմամբ խնամակալության ընդհանուր համակարգի

---

[12] Տե՛ս ՄԻԵԴ՝ «Երեխաներին առնչվող դատական գործընթացներում խնամակալների կամ սոցիալական աշխատողների աջակցության վերաբերյալ», *V. ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 24888/94 գործը, § 87:

[13] Տե՛ս վերոնշյալ՝ *Mubilanzila Mayeka-ն և Kaniki Mitunga-ն ընդդեմ Բելգիայի*, §§ 57 & 83:

[14] Նույնը: Տե՛ս նաև վերոնշյալ՝ *Rahimi-ն ընդդեմ Հունաստանի*: Տե՛ս նաև «Անօրինական միգրանտների կալանավորման վերաբերյալ» 2017 թվականի մարտի ԵԽ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի կողմից մշակված կանոնները (CPT/Inf(2017)3:

կիրառումը մի շարք խնդիրներ է առաջացնում, մասնավորապես, երբ խնամակալները չունեն համապատասխան գիտելիքներ այդ երեխաների առջև ծառացող վտանգների վերաբերյալ, ինչպիսիք են սեռական շահագործման կամ թրաֆիկինգի զոհ դառնալու ռիսկը: Հակառակ դրան, երբ խնամակալության համակարգը կենտրոնանում է միգրացիայի համատեքստում երեխաների իրավիճակի վրա կամ հաշվի է առնում այդ երեխաների խնդիրների առանձնահատկությունները, խնամակալությունը դառնում է ավելի արդյունավետ: Օրինակ՝ դանիական, հոլանդական և բելգիական խնամակալության համակարգերն ունեն միգրացիայի համատեքստում երեխաների համար հատուկ ծառայություններ, որոնք ապահովում են խնամակալների համար մասնագիտացված վերապատրաստում և աջակցություն (այդ թվում՝ թարգմանիչների, մշակութային միջնորդների և իրավաբանների հասանելիություն): Խնամակալության շվեդական համակարգը նախատեսում է որոշ ռիսկերի չեզոքացում, ինչպիսիք են միգրացիայում երեխաների խնամակալությունից անհետանալու ռիսկը՝ պահպանելով խնամակալության գործառույթը տեղեկատվության բացակայության դեպքում: Իռլանդիայում միջազգային պաշտպանություն փնտրող ընտանիքից անջատված երեխաների սոցիալական աշխատողների հատուկ խումբը պատասխանատու է երկիր ժամանող առանց ուղեկցության երեխաների համար:

20. Ռեսուրսներ. պետությունները կարող են օգտվել հանձնարարականի նախաբանում նշված ռեսուրսներից՝ միգրացիայի համատեքստում երեխաների համար արդյունավետ խնամակալության համակարգ ստեղծելու համար:

Սկզբունք 2. Խնամակալության կառուցակարգերը և միջոցները

21. Պետությունները պետք է ունենան կառուցակարգեր և միջոցներ, որոնք հստակ սահմանում են, թե ինչպես է պլանավորվում և իրականացվում միգրացիայի համատեքստում երեխաների խնամակալությունը: Համապատասխան կառուցակարգերի առկայությունը թույլ է տալիս խուսափել խնամակալության հատուկ կամ ոչ պաշտոնական պայմանավորվածություններից բխող ռիսկերից:

22. Խնամակալության շրջանակները և միջոցառումները որոշվում են՝ հաշվի առնելով, թե ինչպես են բաշխվում երեխաների նկատմամբ պետական պարտականությունները, մասնավորապես՝ խնամակալների կողմից իրենց գործողությունների համակարգումը և համագործակցությունը այլ ծառայությունների հետ՝ երեխայի իրավունքների պահպանության համար:

23. Պետություններն ունեն մի շարք պարտավորություններ առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ, ներառյալ նրանց նույնականացումը, խնամքը և խնամակալությունը, անհատական

կարիքների գնահատումը, ծառայությունների մատչելիության ապահովումը, ընտանեկան կապերի վերականգնումը, երբ դա բխում է նրանց լավագույն շահերից, և կարգավիճակի որոշումը: Պետությունները կիրառում են տարբեր կառուցակարգեր, որոնք նրանք համարում են առավել նպատակահարմար՝ հաշվի առնելով իրենց երկրի առանձնահատկությունները և հանգամանքները: Սովորաբար, այդ պարտավորությունների կատարմանը նպաստում են բազմաթիվ ծառայություններ: Խնամակալության կառուցակարգերը և միջոցներն անդրադառնում են խնամակալի դերին, գործունեությանը և իրավասություններին: Գործնականում երեխայի խնդիրների լուծման մեջ ներգրավված բոլոր ծառայությունները պետք է լավ պատկերացում ունենան, թե ինչպես է գործում խնամակալությունը և փոխկապակցված իրենց գործառույթների հետ: Այդ կառուցակարգերը և միջոցառումները պետք է ունենան կանոնադրական հիմք, որպեսզի բացառվի ձգձգումները կամ որոշակիության բացակայությունը, երբ ծառայությունները կքննարկեն խնամակալների գործառույթները և այլ ծառայությունների հետ նրանց փոխհարաբերությունները, ինչպես նաև հստակության և որոշակիության բացակայության հետ կապված ուշացումները (համագործակցության վերաբերյալ հետագա ցուցումներ ստանալու համար տե՛ս 8-րդ սկզբունքը):

24. Այդպիսի կառուցակարգերը և միջոցները պետք է նաև հաշվի առնեն յուրաքանչյուր պետության իրավիճակը, ներառյալ՝ առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների թիվը: Դրանք պետք է նաև մեխանիզմներ նախատեսեն խնամակալության համակարգի դինամիկ և փոփոխվող կարիքներին արձագանքելու համար՝ հաշվի առնելով ժամանող երեխաների թվաքանակը և հանգամանքները, ինչպես նաև ժամանումների բնույթը, այդ թվում՝ ժամանակավոր կամ արտակարգ զանգվածային ներհոսքի կամ ավելի երկարատև կացության (տվյալների և ապացույցների հավաքագրման վերաբերյալ հետագա ցուցումներ ստանալու համար տե՛ս 6-րդ սկզբունքը):

25. Անդամ պետությունները կարող են սեփական հայեցողությամբ ընտրել այնպիսի միջոցներ (իրավական, քաղաքական, կարգավորիչ կամ վարչական), որոնք կբացահայտեն և կսահմանեն միգրացիայի համատեքստում երեխաների խնամակալության անհրաժեշտ չափորոշիչները[15]: Անդամ պետություններին առաջարկվում է ապահովել խնամակալության համակարգի էական չափորոշիչները լուսաբանող համապարփակ շրջանակ: Սկզբունքները նախատեսում են, որ այն առնվազն ներառի.

[15] Միևնույն ժամանակ, այդ հայեցողությունը պետք է իրականացվի Կոնվենցիոն սկզբունքներին համապատասխան, այլ ոչ կամայականության սկզբունքի հիման վրա: Տե՛ս ՄԻԵԴ-ի վճիռը *Hokkanen-ն ընդդեմ Ֆինլանդիայի* գործով, 1994թ. սեպտեմբերի 23, A շարք, թիվ 299-A, էջ 20, § 55:

ա. Մասնագիտական չափանիշներ, պահանջներ և որակավորում

26. Ներպետական կառուցակարգերը պետք է սահմանեն և հստակեցնեն խնամակալների համար կիրառելի մասնագիտական չափանիշները, պահանջները և որակավորումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր պետությունում գործող խնամակալության կառուցվածքը: Անկախ խնամակալի կարգավիճակից (մասնագետ, կամավոր, պատվիրակված գործառույթներ իրականացնող և այլն), անդամ պետության բոլոր խնամակալները պետք է համապատասխանեն նույն նվազագույն չափանիշներին, պահանջներին և որակավորմանը, ինչը չի բացառում, մասնավորապես, պրոֆեսիոնալ խնամակալների լրացուցիչ մասնագիտական որակավորում ստանալը, որոնք պարտադիր չեն կամավոր խնամակալների համար: Կարևոր է, որ այդ նվազագույն չափորոշիչները սահմանվեն, որպեսզի յուրաքանչյուր խնամակալ (անկախ ներպետական օրենսդրությամբ իր կարգավիճակից) հասկանա իր դերն ու պարտականությունները և իր գործառույթներն իրականացնելիս հավատարիմ մնա պաշտպանիչ սկզբունքներին: Դրանց մեջ կարող է ներառվել խնամակալ դառնալուց առաջ նվազագույն կրթություն ստանալու պահանջը (վերապատրաստման վերաբերյալ հետագա ցուցումներ ստանալու համար տե՛ս 7-րդ սկզբունքը):

բ. Խնամակալների ընտրության, ստուգման, հավաքագրման և նշանակման ընթացակարգերը

27. Կառուցակարգերը պետք է հստակեցնեն խնամակալների ընտրության կամ ստուգման ընթացակարգերը, ինչպես նաև ժամկետները, որոնց ընթացքում այն պետք է տեղի ունենա, և վերստուգումների հաճախականությունը: Դրանք պետք է սահմանեն խնամակալների հավաքագրման և վերահսկման համար պատասխանատու մարմին, ինչպես նաև խնամակալների նշանակման կարգը: Այս կառուցակարգերը պետք է հստակություն ապահովեն խնամակալների և երեխաների համար այն դեպքերում, երբ խնամակալը կարող է հեռացվել, փոխարինվել:

28. Պատշաճ ձևով խնամակալության տրամադրման նախապայմանն այն է, որ խնամակալները պետք է լինեն պահանջներին համապատասխան անձինք՝ երեխաների և հատկապես խոցելի երեխաների հետ աշխատելու համար: Դրան կարելի է հասնել ապահովելով հավաքագրման թափանցիկ ընթացակարգ՝ ներառյալ խնամակալի պարտադիր ստուգումը կամ ընտրությունը հավաքագրման սկզբնական փուլում և այնուհետև կանոնավոր վերստուգումները խնամակալության ողջ ընթացքում (յուրաքանչյուր պետություն ինքնուրույն կարող է որոշել վերստուգումների հաճախականությունը):

29. Խնամակալի գործառույթը նախատեսում է երեխայի հետ մշտապես շփվելու և նրա դաստիարակությամբ զբաղվելու պարտականություն:

Հետևաբար, շատ կարևոր է, որ նախկինում բռնի վարք, անտեսում, ֆիզիկական, հոգեբանական, հուզական կամ սեռական բռնություն, անազնիվ կամ խարդախ վարքագիծ դրսևորած բոլոր թեկնածուները զրկվեն խնամակալ դառնալու հնարավորությունից: Դրան կարելի է հասնել, օրինակ, քրեական գործերի/սեռական հանցագործություն կատարած անձանց վերաբերյալ գրանցամատյանների պարտադիր ստուգմամբ (ըստ կիրառելիության), նախորդ գործատուներից տեղեկանքի հարցմամբ, համոզվելով, որ նրանք համապատասխանում են խնամակալին ներկայացվող պահանջներին և նրանց նախկին վարքագիծը չի բացառում երեխաների հետ նրանց շփումը[16]: Անձին խնամակալության ծառայությանն ընդգրկելու համար պետությունները պետք է նախատեսեն խնամակալի նշանակման թափանցիկ ընթացակարգ՝ ազգային առանձնահատկությունների համապատասխան (օրինակ՝ տարբեր պետություններում այդ նշանակումը կատարում են տարբեր մարմիններ՝ խնամակալության ծառայությունը, դատախազությունը կամ դատարանը): Այն դեպքում, երբ պետությունում գործում է միայն ժամանակավոր խնամակալի նշանակման համակարգ, անհրաժեշտ է ապահովել, որ երկարաժամկետ նշանակումները կատարվեն առանց ուշացման:

գ. Խնամակալների պատասխանատվությունը, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցության միջոցները

30. Իրավական հստակության նպատակով, ինչպես նշված է 4-րդ սկզբունքում, խնամակալների պարտավորությունները, իրավունքներն ու պարտականությունները պետք է հստակորեն սահմանվեն ներպետական կառուցակարգերով: Հաշվի առնելով պարտականությունների և պարտավորությունների լայն շրջանակը՝ խնամակալներին հասանելի աջակցության միջոցները նույնպես պետք է սահմանվեն ներպետական կառուցակարգերով:

31. Խնամակալի դերը տարբեր կարող է լինել՝ կախված ներպետական համակարգերից: Խնամակալը դերն առանցքային է երեխային օգնելու հարցում՝ հասկանալ ընդունող պետության գործընթացներն ու ընթացակարգերը, որոնք կազդեն նրա և նրա իրավունքների վրա: Խնամակալը պետք է օգնի երեխային լավ պատկերացնել, թե ինչ կարող է և ինչ չի կարող անել խնամակալը, և ինչ պետք է անի երեխան, եթե նա համաձայն չէ խնամակալի որոշման հետ: Խնամակալի դերը նախատեսում է նաև ապահովել երեխայի մասնակցությունը նրան առնչվող տարբեր ընթացակարգերում, այդ թվում՝ տրամադրելով երեխային բոլոր հնարա-

[16] Տե՛ս նաև «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիայի 5-րդ հոդվածը և «Փախստականների ճգնաժամից տուժած երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու մասին» Լանցարոտեի կոմիտեի հատուկ զեկույցի 18-րդ և 19-րդ հանձնարարությունները:

վորությունները՝ արտահայտելու իր կարծիքն ու մտահոգությունները բաց և ոչ անբարյացակամ մթնոլորտում, որը թույլ կտա հաշվի առնել և պատշաճ կշիռ տալ երեխայի տեսակետին (երեխայի մասնակցության վերաբերյալ լրացուցիչ հստակեցումները տե՛ս ստորև)։ Հաշվի առնելով, որ խնամակալը սովորաբար պատասխանատու է երեխայի կրթության և բժշկական խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար, ներպետական կառուցակարգերը նախատեսում են, որ որպես խնամակալի պարտականություն՝ իր կողմից որոշումների կայացման ընթացքում հաշվի առնել նաև երեխայի տեսակետը։ Կամայական որոշումներից պաշտպանություն ապահովելու և արդար ընթացակարգեր մշակելու համար անդամ պետությունները կարող են դիտարկել խնամակալներին գործիքակազմ և աշխատակարգեր տրամադրելու հնարավորություն՝ օգնելով նրանց ճիշտ որոշումներ կայացնել իրենց պարտականությունների և պարտավորությունների լայն շրջանակն իրականացնելիս։

դ. Վերապատրաստման պահանջները

32. Կառուցակարգերը պետք է սահմանեն խնամակալների նախնական և շարունակական վերապատրաստման պահանջները։ Ազգային առանձնահատկություններով պայմանավորված՝ վերապատրաստման պահանջները տարբեր կարող են լինել։ Խնամակալները պետք է վերապատրաստվեն իրենց դերի և պարտականությունների, երեխաների պաշտպանության համակարգերի, երեխաների և խոցելի երիտասարդների պաշտպանության, երեխաներին առնչվող ընթացակարգերի հիմնական սկզբունքների, ինչպես նաև տարբեր մշակութային ծագում ունեցող երեխաների (որոնց մայրենի լեզուն ընդունող պետության պաշտոնականը լեզուն չէ) հետ աշխատանքի և անկախ իրավաբանական խորհրդատվություն ստանալու երեխայի իրավունքների վերաբերյալ։ Նպատակահարմար է, որպեսզի խնամակալության ծառայությունները պարբերաբար անցկացնեն վերապատրաստման դասընթացներ խնամակալների համար՝ ապահովելով, որ իրենց պրակտիկան համապատասխանի երեխաների և, մասնավորապես, առանց ուղեկցության և առանձնացված երեխաներին վերաբերվող անընդհատ փոփոխվող օրենսդրական և այլ ակտերին։

ե. Համապատասխան գործընթացների յուրաքանչյուր փուլում երեխաների կարծիքների արտահայտումը, դրանց հաշվի առնելը և անհրաժեշտ կարևորումն ապահովելու ընթացակարգեր

33. Պետությունները կարող են դիտարկել խնամակալներին ուղղորդման կամ ստուգաթերթեր տրամադրելու հնարավորությունը, որը թույլ կտա խնամակալներին օգնել երեխաներին արտահայտել իրենց կարծիքները բոլոր այն ընթացակարգերում, որոնք ազդում են նրանց վրա։ Դրանք պետք է

ներառվեն ներպետական կառուցակարգերում կամ միջոցառումներում և ընդգրկեն տարբեր ընթացակարգեր՝ սկսած կացարանի և կրթություն տրամադրման մինչև կրոնի, լեզվի և մշակութային կրթության ընտրության վերաբերյալ որոշումները: Խնամակալները պետք է նաև երեխաներին հնարավորություն ընձեռեն կարծիք արտահայտելու իրենց ներգաղթյալի կարգավիճակի վերաբերյալ, օրինակ՝ որոշ անդամ պետություններում երեխաներն ապաստանի համար սովորաբար ինքնուրույն չեն կարող դիմել, քանի որ 18 տարեկանը լրանալուց հետո նրանք նոր ձեռք են բերում քաղաքացիության իրավունք: Այդուհանդերձ, երեխային պետք է տեղեկատվություն տրամադրել նրա համար բարենպաստ ձևով և հնարավորություն տալ արտահայտելու իր տեսակետը նման որոշումների վերաբերյալ (տե՛ս 66-րդ կետը)[17]:

34. Մի շարք անդամ պետություններում երեխային պաշտպանության մարմիններ ուղղորդելուց առաջ երեխայի համաձայնությունը չի պահանջվում: Որոշ դեպքերում երեխայի համաձայնությունը չի պահանջվում նրանց անունից գործողություններ ձեռնարկելու համար, օրինակ՝ թրաֆիքինգից տուժած երեխաների նկատմամբ ուղղորդման ներպետական մեխանիզմը կիրառելիս: Սակայն, անհրաժեշտ է ծանոթանալ երեխայի կարծիքին և երեխային հասանելի ձևով բացատրել, թե ինչու է ուղղորդում կատարվել կամ որոշում կայացվել առանց նրա համաձայնության: Դա շատ կարևոր է նաև երեխային բժշկական օգնություն ցուցաբերելու պարագայում: Օրինակ, Ֆրանսիայում այդ հարցի վերաբերյալ երեխայի համաձայնությունը ստանալն իրավական պարտավորություն է: Խնամակալը պետք է օգնի երեխային հասկանալ, թե արդյոք որոշում կայացնողը հաշվի է առել նրա տեսակետը և այն պատճառները, որոնք ստիպել են նրան նման որոշում կայացնել երեխայի վերաբերյալ[18]:

գ. Երեխաների համար մատչելի, անհատական գանգատների ներկայացման մեխանիզմները և դրանց հետ կապված ընթացակարգերը:

35. Ներպետական կառուցակարգերը նախատեսում են գանգատների ներկայացման մեխանիզմներ՝ ապահովելու խնամակալության համա-տեքստում երեխայի արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը: Դրանք իրավական պաշտպանության միջոցներ են սահմանում

---

[17] Տե՛ս ՄԻԵԴ, *Kutzner-ն ընդդեմ Գերմանիայի*, թիվ 46544/99, § 77, 26.02.2002, *Saviny-ն ընդդեմ Ուկրաինայի*, թիվ 39948/06, 18.12.2008թ.:

[18] Տե՛ս ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի երեխայի լսված լինելու իրավունքի վերաբերյալ թիվ 12 ընդհանուր մեկնաբանությունում՝ երեխայի լսված լինելու իրավունքի վերաբերյալ մանրամասն առաջարկությունները (2009թ.):
Տե՛ս նաև Նախարարների կոմիտեի ուղեցույցները՝ երեխաների համար բարենպաստ արդարադատության վերաբերյալ

խնամակալի նշանակման անհարկի ձգձգումների, խնամակալի լիազորությունների իրականացման կամ խնամակալության գործընթացի դադարեցման վերաբերյալ գանգատների դեպքում:
5-րդ սկզբունքը պարունակում է մանրամասն տեղեկություն նվազագույն չափորոշիչների վերաբերյալ, որոնք կիրառելի են նման գանգատների մեխանիզմների համար[19]:

Է. Ներպետական և միջազգային մակարդակներում միջգերատեսչական և բազմաբնույթ համագործակցության և համակարգման մեխանիզմներ և գործընթացներ

36. Ընդհանուր առմամբ ընդունված է, որ տվյալ գործընթացի ողջ ընթացքում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաները պետք է համագործակցեն տարբեր մասնագետների հետ: Չափազանց կարևոր է, որ կառուցակարգերով նախատեսվի այս տարբեր իրավասու մասնագետների միջև համագործակցություն, այդ թվում՝ նաև միջսահմանային համագործակցություն (ըստ անհրաժեշտության)՝ ապահովելու ամբողջական, երեխայակենտրոն մոտեցում: Այն կարող է ներառել խնամակալների, կրթական մարմինների, սոցիալական ծառայությունների, բժշկական մասնագետների, իրավաբան մասնագետների և դատական մարմինների միջև համագործակցության կամ համակարգման դրույթ: Կառուցակարգերը հստակություն են ապահովում այս համագործակցության միջոցների (օրինակ՝ կանոնավոր հանդիպումների, նամակագրության կամ համագործակցության այլ ձևերի) և հաճախականության վերաբերյալ: Հնարավոր է, որ անհրաժեշտ լինի նախատեսել համագործակցության գործընթացների հաճախականության վերանայում՝ ելնելով երեխայի կարիքներից և ռիսկի պրոֆիլից: Օրինակ՝ բազմաթիվ բարդ կարիքներ ունեցող երեխայի դեպքում մասնագետներից կարող է պահանջվել ավելի սերտ համագործակցություն, քան համեմատաբար ցածր ռիսկային պրոֆիլ ունեցող երեխայի: Կառուցակարգերը նաև հստակեցնում են խնամակալության այլ մարմինների և համապատասխան մշտադիտարկման մարմինների հետ միջազգային մակարդակով համակարգման եղանակները: 8-րդ և 9-րդ սկզբունքները պարունակում են առաջարկություններ նման համագործակցության և համակարգման բովանդակության և միջոցների վերաբերյալ:

---

[19] Այս հարցի վերաբերյալ տե՛ս, *mutatis mutandis, Scozzari-ն և Giunta-ն ընդդեմ Իտալիայի*, [ՄՊ], թիվ 39221/98 և թիվ 41963/98, 13.07.2000, *MD-ն և այլք ընդդեմ Մալթայի*, թիվ 64791/10, 17.07.2012թ, մասնավորապես § 55: Տե՛ս նաև *R.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, թիվ 34141/96, 30.05.2006թ, *T-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության*, թիվ 19315/11, 17.07.2014թ.:

ը. Գաղտնիության և տվյալների պաշտպանության պահանջները

37. Կառուցակարգերը պետք է սահմանեն երեխայի անձնական տվյալները պաշտպանության իրավական պարտավորությունը, ներառյալ գաղտնիության չափանիշները և այն հանգամանքները, որոնցում երեխայի մասին գաղտնի տեղեկատվությունը կարող է բացահայտվել կամ տարածվել ծառայությունների միջև և տեղեկատվության տրամադրումը երեխաների համար բարենպաստ եղանակով: Կառուցակարգերը սահմանում են այն հանգամանքները, որոնց դեպքում խնամակալը կարող է տրամադրել երեխայի մասին գաղտնի տեղեկությունները կամ տվյալները՝ առանց երեխայի համաձայնության, օրինակ, եթե կան մտավախություններ, որ երեխան ներկայում կամ անցյալում ենթարկվել է թրաֆիքինգի կամ շահագործման այլ ձևերի, և անհրաժեշտ է ուղղորդման ներպետական մեխանիզմի կիրառում: Մեկ այլ օրինակ՝ կարող լինել այն իրավիճակը, երբ երեխան հայտնում է իր նկատմամբ սեռական շահագործման կամ դաժան վերաբերմունքի մասին, և անհրաժեշտ է լինում նրան ուղղորդել այլ աջակցության ծառայություններ:

թ. Խնամակալի մշտադիտարկում, վերահսկողություն և ուղղորդում խնամակալության մարմնի կողմից

38. Ներպետական կառուցակարգերը պետք է նախատեսի մշտադիտարկման երեք մակարդակ. i) խնամակալներ, ii) խնամակալության համակարգ և iii) երեխաների խնամակալության կառուցակարգեր:

39. Ներպետական կառուցակարգերը պետք է սահմանեն խնամակալության մարմինների մեխանիզմներն ու լիազորությունները՝ խնամակալության մարմիններին մշտադիտարկելու, վերահսկելու և ուղղորդելու համար՝ խնամակալին նշանակման պահից սկսած և իր գործառույթների իրականացման ողջ ընթացքում (ինչպես նախատեսված է 4-րդ սկզբունքով), ինչպես նաև այն պայմանները, որոնք ավարտին են հասցնում խնամակալությունը: Կանոնակարգերը նաև պետք է նախատեսեն խնամակալների մասնագիտական շարունակական ուսուցման և վերապատրաստման վերահսկողություն՝ լինի դա ուղղակիորեն՝ շարունակական ուսուցման, թե արտաքին համապատասխան կառույցների կողմից հավաստագրված վերապատրաստման իրականացնելու կանոնակարգման միջոցով (վերապատրաստման վերաբերյալ ավելի մանրամասն ցուցումներ ստանալու համար տե՛ս 7-րդ սկզբունքը): Գերմանիայում խնամակալների նկատմամբ իրավական և տեխնիկական հսկողությունն իրականացնում է Երիտասարդների սոցիալական պաշտպանության ծառայությունը:

Ժ. Երեխաների խնամակալության կառուցակարգերի մշտադիտարկում անկախ մարմնի կողմից[20]

40. Ներպետական կառուցակարգերը պետք է նաև նախատեսեն անկախ մարմին, որը պատասխանատու է ինչպես խնամակալության համակարգի ընդհանուր, այնպես էլ ինչպես երեխաների խնամակալության միջոցների մշտադիտարկման համար: Այդ գործառույթները կարող են վերապահվել երեխաների իրավունքների պաշտպանին կամ մեկ այլ համապատասխան անկախ մարմնի: Սահմանվում են նաև անկախ մարմնին դիմելու ընթացակարգեր՝ ներառյալ մշտադիտարկման մեխանիզմների կիրառելի ժամկետների պահպանումը:

Սկզբունք 3. Խնամակալների նշանակում՝ առանց անհարկի ուշացման

41. Միգրացիայի համատեքստում իրենց քաղաքացիության երկրից կամ քաղաքացիություն չունենալու դեպքում մշտական բնակության վայրից հեռացած, առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների կարիքները հոգալու համար նշանակվում է խնամակալ՝ անկախ նրանց կացության կարգավիճակից և անկախ իրենց ծագման երկրից դուրս գտնվելու պատճառներից: Դա ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված խտրականության բացառման սկզբունքի հիմնարար պահանջն է[21]: Սա ենթադրում է, որ նախևառաջ երեխաներին որպես երեխա վերաբերվեն՝ անկախ նրանց ներգաղթյալի կարգավիճակից[22]: Խնամակալն առանց ուղեկցության բոլոր երեխաների համար իրականացնում է նույն ընդհանուր գործառույթը՝ օգնություն և աջակցություն է ցուցաբերում, այդ թվում՝ երկարատև լուծումներ գտնելու և իրականացնելու հարցում: Օրինակ, որպես փախստական չճանաչվող երեխաներին խնամակալի կողմից տրվող օգնությունը կարող է կենսական նշանակություն ունենալ՝ երեխայի խնամքը և խնամակալությունը ընտանիքի անդամներին կամ ծագման երկրի կամ այլ երկրների իշխանություններին փոխանցելու վերաբերյալ ճիշտ որոշում կայացնելու համար: Ցանկացած նմանօրինակ փոխանցում պետք է հաշվի

---

[20] Տե՛ս ՄԻԵԴ, *MD-ն և այլք ընդդեմ Մալթայի*, 64791/10, 17.07.2012թ., մասնավորապես՝ §§ 55: Տվյալ գործով ՄԻԵԴ արձանագրել է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում՝ անկախ դատական ատյանից օգտվելու հնարավորություն չունենալու պատճառից: Այս առումով նպատակահարմար է մեջբերել ՄԻԵԴ հետևյալ մեկնաբանությունը. *«երեխաներին առնչվող հարցերում դատական մարմինների բուն գործառույթն է վերահսկել վարչական գործողությունները ցանկացած ոլորտում և երաշխավորել կամայականության բացակայությունը»:*

[21] Տե՛ս ՄԱԿ ԵԻԿ 2-րդ հոդվածը, ՄԻԵԿ 14-րդ հոդվածը և 12-րդ արձանագրությունը: Տե՛ս նաև «Թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի 3-րդ հոդվածը և «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին» ԵԽ կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

[22] Տե՛ս ՄԱԿ երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 6 (2005) ընդհանուր մեկնաբանությունը՝ «Ծագման երկրի սահմաններից դուրս գտնող առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ վերաբերմունքի մասին»:

առնի երեխայի լավագույն շահերը (լրացուցիչ ցուցումների համար տե՛ս 9-րդ սկզբունքը):

42. Խնամակալի բացակայությունը թրաֆիքինգի զոհ դարձած կամ թրաֆիքինգի վտանգի տակ գտնվող երեխայի դեպքում երեխային ենթարկում է կրկնակի թրաֆիքինգի զգալի ռիսկի: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ անդամ պետությունները պետք է փոփոխեն ցանկացած ներպետական օրենսդրական դրույթ, որը խնամակալի նշանակումը պայմանավորում է երեխայի մասնակցությունից որոշակի ընթացակարգերի, օրինակ՝ միջազգային պաշտպանության համար դիմում ներկայացնելուն: «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» կոնվենցիայի պահանջն է, որ «անմիջապես այն բանից հետո, երբ առանց ուղեկցության երեխան տուժող ճանաչվի, յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ ապահովում է օրինական խնամակալի կողմից երեխայի շահերի ներկայացումը»[23]:

43. Խնամակալի նշանակումն առանց անհարկի ուշացման նշանակում է, որ խնամակալը պետք է նշանակվի է այն պահից, երբ երեխային նույնականացվում և ճանաչվում է որպես առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված: Երեխային ժամանակին տեղեկատվության, աջակցության և օգնության տրամադրումը կենսական երաշխիք է նրա իրավունքները պաշտպանելու և դրանց ցանկացած ոտնահարմանը վերջ տալու համար: Խնամակալի անհապաղ նշանակումն առաջին քայլն է երեխային ամբողջական պաշտպանելու այնպիսի ռիսկերից, ինչպիսիք են խնամակալությունից զրկվելը, մաքսանենգների կողմից կազմակերպված հետագա ճամփորդությունը կամ թրաֆիքինգի զոհ դառնալը:

44. Խնամակալի նշանակումը նաև նպաստում է անհատական կարիքների ժամանակին գնահատման նախաձեռնմանը, ընդունելության և խնամքի պատշաճ կազմակերպման և կարգավիճակի որոշման ցանկացած անհրաժեշտ ընթացակարգերի կիրառմանը: Սկզբունքորեն, երեխային վերաբերող որևէ որոշում չպետք է կայացվի մինչև խնամակալի նշանակումը, բացառությամբ՝ երեխայի անմիջական անվտանգությունն ու կարիքներն ապահովելու դեպքերի: 6-րդ և 7-րդ սկզբունքները տեղեկատվություններ են տրամադրում գործնական միջոցների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են խնամակալների հավաքագրումը և նրանց համապատասխան աջակցության տրամադրումն ապահովելու համար, որն անհրաժեշտ է խնամակալներին իրենց գործառույթներն իրականացնելու համար:

45. Խնամակալությունը պետք է պահպանվի այնքան ժամանակ, քանի դեռ երեխայի համար պատասխանատվությունը չի փոխանցվել այլ համապատասխան կառույցի, ծնողական պատասխանատվությունը չի վերականգնվել

[23] Տե՛ս «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայի 10 (4) հոդված:

կամ մինչև երեխայի չափահասությունը: Անդամ պետություններին առաջարկվում է դիտարկել երեխայի 18 տարեկանը լրանալուց հետո անցումային շրջանում խնամակալությունը երկարաձգելու հնարավորություն՝ նրա շարունակական խնամքը և աջակցությունն ապահովելու նպատակով: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը կոչ է անում անդամ պետություններին երեխայի անվտանգ անցումը հասուն տարիք ապահովելու համար, ըստ անհրաժեշտության, պահպանել խնամակալության միջոցները նրա 18 տարեկան լրանալուց հետո[24]: Նման խնամակալություն և աջակցություն հնարավոր է ձեռք բերել նաև այլ միջոցներով, օրինակ՝ Գերմանիայի երիտասարդների սոցիալական ապահովության կանոնագրքում առկա են դրույթներ, որոնք նախատեսում են խորհրդատվություն և աջակցություն 18 տարեկանը լրացած երիտասարդների համար, Իռլանդիայում 1991 թ. «Երեխաների խնամքի մասին» օրենքով նույնպես «հետխնամակալության աջակցություն» է նախատեսվում: Ֆրանսիայում օգնությունը և աջակցությունը կարող է շարունակվել 18 տարեկանից հետո՝ «երիտասարդ մեծահասակ կոնտակտային անձի» միջոցով:

46. Անձի չափահասության վերաբերյալ կասկածի դեպքում պետք է նշանակվի ժամանակավոր խնամակալ, տվյալ անձին անչափահասի կանխավարկածի սկզբունքին համապատասխան տարիքի գնահատման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկացնելու և օգնություն ցուցաբերելու համար[25]: Ֆրանսիայում նշանակվում է ժամանակավոր խնամակալ՝ օգնելու երեխային որոշակի ընթացակարգերում, ինչպիսին է ապաստանի հայցումը: Մի քանի անդամ պետություններում երեխայի տարիքի վերաբերյալ կասկածի դեպքում, նախքան տարիքային գնահատման համար բժշկական զննում անցկացումը, պահանջվում է խնամակալի համաձայնություն կամ թույլտվություն[26]: Կոմիտեն այդ առնչությամբ նշում է Խորվաթիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի և Լեհաստանի օրինակները[27]: Համապատասխան կանոնակարգ է գործում նաև Գերմանիայում:

47. Այն դեպքերում, երբ հիմնական խնամակալ անհապաղ նշանակվելը հնարավոր չէ, օրինակ՝ պայմանավորված ժամանող միգրանտների մեծ թվով, ապա պետությունները պետք է նախատեսեն ժամանակավոր խնամակալի նշանակման կարգը:

---

[24] Տե՛ս նաև ԵԽ խորհրդարանական վեհաժողովի 2020 թվականի թիվ 2354 բանաձևը «Արդյունավետ խնամակալություն առանց ուեկցության և ընտանիքից անջատված միգրանտ երեխաների համար» և 2020 թվականի սեպտեմբերի 2-ի ուղեկցող զեկույցը՝ Doc 15133:

[25] Տե՛ս ՄԻԵԴ, *Abdullahi Elmi-ն և Aweys Abubakar-ն ընդդեմ Մալթայի*, թիվ 25794/13 և 28151/13, § 146, 22/11/2016թ.:

[26] Տե՛ս ՄԻԵԴ, *Yazgül Yilmaz-ն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 36369/06, 1 փետրվարի 2011թ.:

[27] Տե՛ս Աղյուսակ «Ե»՝ Կոմիտեի հատուկ զեկույցը «Փախստականների ճգնաժամից տուժած երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու մասին»:

48. Այն դեպքում, եթե խնամակալի պարտականությունները դրվում են որևէ այլ մարմնի կամ հաստատության վրա, երեխային կցվում է հատուկ անձ՝ խնամակալի պարտականությունները կատարելու համար: Օրինակ, Գերմանիայում խնամակալության հարցերով զբաղվում է երիտասարդների հարցերի ծառայությունը, ընդ որում՝ անմիջական խնամակալությունը կատարում է նրա կողմից հատուկ նշանակված աշխատակիցը: Որպեսզի խնամակալության ինստիտուտն արդյունավետորեն պաշտպանի երեխայի իրավունքները, կարևոր է, որ երեխան ճանաչի իր խնամակալին: Իռլանդիայում, երեխաների խնամակալությունն իրականացնում է երեխաների և ընտանիքի հարցերով զբաղվող «Տուսլա» գործակալությունը, որի մասնագիտացված աշխատակիցը ծնողական խնամքի գործառույթներ է ստանձնում երեխայի նկատմամբ:

49. Ընտանիքից անջատված երեխայի պարագայում անհրաժեշտ է որոշել, թե ով պետք է իրականացնի խնամակալությունը՝ նրան ուղեկցող ընտանիքի չափահաս անդամը, ընտանիքի անդամ չհանդիսացող մեծահասակը կամ խնամակալը: Դա տեղի է ունենում միայն այն բանից հետո, երբ երեխայի լավագույն շահերի գնահատման արդյունքում հաստատվում է անձի համապատասխանությունը երեխայի խնամակալության պահանջներին, ինչպես նաև անցյալում նրա մասնակցությամբ բռնության և շահերի բախման դեպքերի բացակայությունը: Եթե նրան ուղեկցող ընտանիքի չափահաս անդամի, ընտանիքի անդամ չհանդիսացող մեծահասակի կամ խնամակալի թեկնածությունը հաստատվում է և նա կարող է և ցանկանում է երեխային ամենօրյա խնամք ապահովել և պաշտպանել երեխայի բարեկեցությունը, բայց ի վիճակի չէ պատշաճ կերպով ներկայացնել երեխայի լավագույն շահերը երեխայի կյանքի բոլոր ոլորտներում և բոլոր մակարդակներում, ձեռնարկվում են լրացուցիչ միջոցներ (օրինակ՝ խորհրդատուի կամ իրավաբանական ներկայացուցչի նշանակումը): Մինչև երեխայի խնամակալության նպատակով չափահաս անձի կամ անկախ խնամակալի նշանակելու մասին որոշում կայացնելը, պետական մարմինները, երեխայի կարիքների և լավագույն շահերի գնահատման ընթացակարգի համաձայն, պարտավոր են երեխային վերցնել իրենց խնամքի տակ: Երեխայի հետ հարցազրույցը պետք է անցկացվի վերապատրաստված աշխատակցի կողմից (անհրաժեշտության դեպքում՝ թարգմանչի օգնությամբ), երեխաների համար բարենպաստ ձևով, մասնավորապես՝ աղջիկների համար ապահովելով իգական սեռի աշխատակիցների ներկայությունը: Դա հնարավորություն կտա լսելու երեխայի կարծիքն ուղեկցող մեծահասակի մասին, ինչպես նաև հայտնաբերելու երեխային ուղեկցող մեծահասակի կողմից նրա նկատմամբ բռնության ռիսկ կամ շահերի բախման որևէ հնարավորություն երեխայի ու ուղեկցող մեծահասակի միջև: Գոյություն ունի վտանգ, որ երեխային ուղեկցող մեծահասակը կարող է անթույլատրելի ազդեցություն ունենալ երեխայի վրա, օրինակ՝ թրաֆիքինգով զբաղվողները, ներկայանալով որպես

նրա ընտանիքի անդամ, կարող են ահաբեկել կամ ստիպել երեխային անհրաժեշտ ցուցմունքներ տալ: Երեխայի լավագույն շահերի գնահատումը հատկապես կարևոր է այնպիսի բարդ իրավիճակների դեպքում, ինչպիսիք են մանկական ամուսնությունը, երբ ուղեկցող չափահասը կարող է հայտարարել, որ երեխայի ամուսինն է: Գնահատման ընթացքում պետք է հաշվի առնել սեռական բռնության և գենդերային բռնության այլ ձևերին բնորոշ ռիսկերը, ինչպիսիք են կնոջ սեռական օրգանների խեղումը (FGM) կամ հարկադիր ամուսնությունը կամ ընտանեկան բռնությունը, որը երեխայի և նրա «ամուսնու» միջև ուժերի անհավասարության հետևանք է: Ենթադրյալ ամուսինը երբեք չպետք է ընդունվի որպես երեխայի խնամակալ: Շահերի լրացուցիչ բախումներ կարող են առաջանալ նման հանգամանքներում՝ կապված երեխայի իրավունքի օգտվելու ծառայություններից, այդ թվում՝ կրթական, առողջապահական և սոցիալական: Հատուկ ուշադրության են արժանանում նաև գենդերային ասպեկտները՝ հղի աղջիկների և անչափահաս ծնողների խնամակալության կարիքները:

50. Երեխային պետք է տեղեկացնել և քննարկել խնամակալի նշանակման ընթացակարգը: Նա պետք է նաև տեղեկատվություն ստանա խնամակալի դեմ գանգատ ներկայացնելու կամ խնամակալի փոփոխության միջնորդություն ներկայացնելու իր իրավունքի, ինչպես նաև այն հանգամանքների վերաբերյալ, որոնց դեպքում նա կարող է օգտվել այդ իրավունքից: Խնամակալի դերի էությունն է աջակցել ու օգնել երեխային և գործել՝ ելնելով նրա լավագույն շահերից (4-ը սկզբունք պարունակում է մանրամասն ցուցումներ խնամակալի դերի և պարտականությունների վերաբերյալ): Այն դեպքում, երբ երեխային հասկանալի չէ խնամակալի դերը կամ նա չի վստահում նրան, ապա դա կարող է ամբողջությամբ ձախողել այդ գործընթացը: Բելգիայում խնամակալության ծառայությունը հարցում է անցկացրել՝ պարզելու երեխաների կարծիքները, թե որքանով է խնամակալության համակարգը բավարարում նրանց կարիքները: Նորվեգիայում և Ֆինլանդիայում իշխանությունները հնարավորություն են տալիս երեխաներին շփվելու այլ երեխաների հետ, որոնք ունեն նման փորձառություններ և կարող են խնամակալությանը զուգահեռ աջակցություն ցուցաբերել: Մի շարք անդամ պետություններ պատրաստում են տեղեկատվական ուղեցույցներ և նյութեր, որոնք կօգնեն երեխաներին խնամակալության գործընթացում[28]:

51. Խնամակալության շարունակականությունն ու կայունությունը նպաստում է երեխայի և խնամակալի միջև վստահության և ներգրավվածության ամրապնդմանը: Պետք է հստակ սահմանվեն այն հանգամանքները,

[28] Տե՛ս ԵԽ ձեռնարկ *«Ինչպե՞ս միգրացիայում երեխաներին տրամադրել իրենց կարիքներին համապատասխան տեղեկատվություն»* (2019թ), որտեղ կարելի է գտնել պատշաճ գործելակերպի օրինակներ՝ երեխաների հետ շփման առաջնագծի մասնագետների համար:

որոնց դեպքում կարող է խնամակալի փոփոխություն տեղի ունենալ: Մասնավորապես, երեխային չպետք անհարկի տեղափոխել երկրի մեկ այլ հատված, եթե դա չի բխում երեխայի լավագույն շահերից, քանի որ դա խնամակալության նոր կարգավորումներ կպահանջի: Օրինակ՝ Հունաստանում խնամակալության հարերով զբաղվող հասարակական կազմակերպությունն օգնություն և ժամանակավոր խնամակալություն է տրամադրում առանց ուղեկցության երեխաներին՝ ժամանման վայրից մասնագիտացված մանկական կենտրոններ տեղափոխելու ընթացքում:

Սկզբունք 4. Խնամակալների իրավական պարտավորությունները և խնդիրները

52. Խնամակալի վրա դրված է պարտականությունների լայն շրջանակ՝ իրականացնել տարբեր գործառույթներ՝ ելնելով երեխայի լավագույն շահերից: Դրանք են՝ իրազեկել երեխային, օգնել և աջակցել, պաշտպանել նրա հոգեկան բարեկեցությունը և լավագույն շահերը , երեխայի և նրա համար պատասխանատու այլ անձանց միջև կապող օղակի դեր ստանձնել, անհրաժեշտության դեպքում երեխայի իրավազորությունը իրականացնել: Խնամակալների պարտականությունները տարբերվում են երեխայի հետ առնչվող այլ սուբյեկտների պարտականություններից, մասնավորապես՝ փաստաբանների և այլ անձանց, որոնք պատասխանատու են երեխայի ամենօրյա կարիքների բավարարման համար: Խնամակալի պարտականությունները տարբերվում են երեխայի իրավախորհրդատուի պարտականություններից, որը պատասխանատու է երեխային դատական և վարչական գործընթացների շրջանակում իրավական խորհրդատվություն և օգնություն տրամադրելու համար:

53. Տարբեր անդամ պետություններում խնամակալների գործունեությունը կարող է էապես տարբերվել՝ կախված նրանից, թե ինչպես է կազմված խնամակալությունը և խնամքի մեխանիզմները: Դրանց վրա ազդում են երեխայի համար գործող հատուկ պայմանները և նրան հասանելի ծառայությունները: Տարբեր երկրներում դրանք զգալիորեն տարբերվում են միմյանցից, ընդ որում՝ կարող են տարբերվել նաև նույն երկրի ներսում: Օրինակ՝ երեխան կարող է տեղավորվել ընդունելության կենտրոնում (որտեղ նրա ամենօրյա կարիքների բավարարման համար արձագանքում են կենտրոնի տարբեր աշխատակիցներ) կամ խնամատար ընտանիքում (որտեղ երեխայի ամենօրյա կարիքների մասին հոգում է խնամատար ընտանիքը), կամ երեխան կարող է տեղավորվել նրա կյանքի մասին հոգ տանող անկախ կառույցում (որտեղ խնամակալն առանցքային դեր կարող է խաղալ երեխայի ամենօրյա կարիքները բավարարելու հարցում): Որոշ երկրներում խնամակալները վարձատրվող մասնագետներ են, որոնք երեխայի կարիքների բավարարման համար մեծ պատասխանատվություն են կրում,

օրինակ՝ ներգրավվելով խնամքի կազմակերպման, կրթության, առողջության և կարգավիճակի որոշման ընթացակարգերի վերաբերյալ ամենօրյա որոշումների կայացման մեջ (ինչպես Նիդերլանդներում): Հակառակը՝ շատ երկրներում խնամակալները հիմնականում կամավորներ են, որոնք աջակցում և օգնում են երեխային՝ նրանց հետ կարելի է խորհրդակցել կամ վերահսկել երեխայի հետ կապված գործողությունները, այլ ոչ թե համակարգել դրանք (օրինակ՝ Դանիայում, Նորվեգիայում և Շվեդիայում): Բելգիայում և Գերմանիայում գործում են հիբրիդային մոդելներ՝ ինչպես արհեստավարժ, այնպես էլ կամավոր խնամակալներ ներգրավմամբ: Խնամակալների կողմից ձեռնարկվող ամենօրյա գործունեությունը պայմանավորված է նրանով, թե ինչպես են խնամակալության մարմինները ղեկավարում և աջակցում խնամակալներին (տե՛ս ստորև 6-րդ սկզբունքը): Նմանապես Իռլանդիայում խնամակալ են նշանակվում մասնագիտացված սոցիալական աշխատողներ, որոնց հանձնարարվում է երեխայի խնամքի ծրագրի մշակումը և պահպանել փոխգործակցությունը մի շարք ծառայությունների, ինչպես նաև միջազգային պաշտպանության/ներգաղթի համակարգի հետ: Անդամ պետություններին խորհուրդ է տրվում մանրակրկիտ ուսումնասիրել և սահմանել այն գործողությունները, որոնք պետք է իրականացնեն խնամակալները՝ պարտականությունները կատարելիս:

54. Բոլոր ազգային համատեքստերում և այլ հանգամանքներում խնամակալներն ունեն ընդհանուր առաջադրանքներ, որոնք նրանք լիազորված և իրավունակ են կատարել, ներառյալ՝

ա. Տեղեկացնել, աջակցել և օգնել երեխային նրան առնչվող գործընթացներում և որոշումներում

55. Պետությունները պետք է սահմանեն, որ խնամակալներն ունեն հստակ պարտականություն՝ ապահովելու, որ երեխան լինի տեղեկացված և հասկանա իր իրավունքները, ինչպես նաև նրան տրամադրեն բոլոր հնարավորությունները՝ արտահայտելու իր կարծիքն ու մտահոգությունները բաց և ոչ առճակատման պայմաններում: Շատ երեխաների համար դա խնդիր է, որը պետք է լուծում ստանա: Եթե երեխային պատշաճ և ժամանակին չտրամադրվի համապատասխան տեղեկատվություն, որտեղ հաշվի է առնվում երեխայի շահերը, մեծ է վտանգը, որ երեխան չի կարողանա համագործակցել իր համար պատասխանատու ծառայությունների հետ կամ նշանակալից մասնակցություն ունենալ դատավարությանը[29]: Խնամակալը երեխայի համար շփման համար առանցքային անձն է: Հետևաբար, երեխային պետք է տրամադրել հստակ տեղեկատվություն խնամակալության և խնամակալի դերի վերաբերյալ, այդ թվում՝ իրենց լսված լինելու իրավունքի,

[29] Տե՛ս ՄԻԵԴ դատական վարույթներին անչափահասների արդյունավետ մասնակցության առնչությամբ, *S.C.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 60958/00, §§ 28-29 և 34, 15/06/2004:

խնամակալի դեմ գանգատ ներկայացնելու և խնամակալի փոփոխություն պահանջելու հնարավորության մասին (ստորև տե՛ս 5-րդ սկզբունքը):

56. Խնամակալի կողմից երեխային ցուցաբերվող օգնությունն ու աջակցությունն ընդգրկում են բազմաթիվ հարցեր՝ կախված երեխայի անհատական հանգամանքներից: Դրանց թվում են՝ աշխատել երեխայի առջև կանգնած ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ, ընդհանուր առմամբ ապահովել նրանց բարեկեցությունը և զարգացումը, ուղղորդել նրանց դեպի չափահասություն, օգնել երեխային մասնակցել ընթացակարգերին, ներառյալ իրավաբանական խորհրդատվության, օգնության և ներկայացուցչության հասանելիության աջակցման միջոցով, և, անհրաժեշտության դեպքում, աշխատել երեխայի իրավաբանի հետ վարչական և դատական գործընթացներում: Այն պետություններում, որտեղ վերո նշվածները նախատեսված են օրենքով, խնամակալը կարող է լրացնել նաև երեխայի սահմանափակ գործունակությունը: Խնամակալն աջակցում և օգնում է երեխայի ընտանիքի հայտնաբերման հարցում, նրա անունից տնօրինում է նրան պատկանող ակտիվներն ու գույքը և գնահատում է՝ անհրաժեշտ են արդյոք պաշտպանության լրացուցիչ միջոցներ:

57. Խնամակալը կարևոր դեր ունի երեխայի շահերի պաշտպանության համար պատասխանատու այլ ծառայությունների հետ համակարգումն ապահովելու գործում: Համապատասխան ծառայությունների ընտրությունը բխում է երեխայի անձնական առանձնահատկություններից, նրա անհատական կարիքներից և հանգամանքներից: Եթե երեխան թրաֆիքինգի կամ շահագործման զոհ է կամ անցյալում է ենթարկվել , ապա ծառայությունը պետք է երեխայի ուղղորդի թրաֆիքինգի ենթարկված անձանց պաշտպանության ազգային մարմին[30]: Եթե երեխան ենթարկվել է բռնության, դաժան վերաբերմունքի կամ անտեսման, այն նախատեսում է համապատասխան տեղեկատվության փոխանցում երեխաների պաշտպանության ծառայություններին, բժշկական ծառայություններին, որոշ հանգամանքներում կրթական հաստատություններին և ոստիկանությանը: Որոշ անդամ պետություններում գումարվում են ռիսկերի գնահատման միջգերատեսչական համաժողովներ՝ ապահովելու, որ երեխայի բարեկեցության համար պատասխանատու բոլոր դերակատարներն իրազեկված լինեն և համակարգեն իրենց գործունեությունը՝ ելնելով երեխայի լավագույն շահերից (օրինակ՝ Ռիսկերի գնահատման միջգերատեսչական համաժողովը Մեծ Բրիտանիայում) (տե՛ս ստորև 8-րդ սկզբունքը):

[30] Տե՛ս «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵՄ կոնվենցիայի 29-րդ հոդված:

բ. Երեխայի լավագույն շահերը պաշտպանելու համար միջոցներ ձեռնարկելը

58. Խնամակալները պետք է իրավազորություն և լիազորություններ ունենան երեխայի լավագույն շահերից գործելու և նպաստելու երեխայի մասնակցությանը համապատասխան ընթացակարգերին: Դա ներառում է երեխայի լավագույն շահերի գնահատում, համապատասխան միջոցների ձեռնարկում՝ ապահովելու նրա շահերի առաջնայնությունը համապատասխան որոշումների կայացման ժամանակ, իրավական խորհրդատուի նշանակման գործընթացի նախաձեռնում, եթե այն նախատեսված չէ պետական մարմինների աշխատակարգով, և պետական մարմիններին պատասխանատվության ենթարկելը՝ անհրաժեշտության դեպքում միջամտելով և վիճարկելով նրանց որոշումները երեխայի վերաբերյալ[31]:

59. ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի թիվ 14 ընդհանուր մեկնաբանությունն արժեքավոր ուղեցույց է, թե ինչպես պետք է գնահատվեն երեխայի իրավունքները:

գ. Աջակցություն կոնկրետ գործընթացների բացահայտմանը և իրականացմանը

60. Խնամակալի պարտականությանն է՝ գործել երեխայի լավագույն շահերից ելնելով և պաշտպանել նրա լավագույն շահերը երեխային վերաբերող բոլոր ընթացակարգերում, որոնք ազդում են նրանց: Անհրաժեշտ է, որ խնամակալները մասնակցեն երեխայի հատուկ խոցելիության և կարիքների բացահայտման գործընթացում, ներառյալ՝ երեխայի անհետանալու ցանկացած ռիսկի գնահատումը, որպեսզի միջոցառումները կամ ընթացակարգերը համապատասխանեն տվյալ երեխայի լավագույն շահերին և անհատական կարիքներին: Խնամակալը գործում է երեխայի շահերից ելնելով՝ վստահության վրա հիմնված փոխհարաբերությունների համատեքստում և պետք է մասնակցի երեխային առնչվող ընթացակարգերի շուրջ որոշումների կայացմանը, այդ թվում՝ միջազգային պաշտպանության, քաղաքացիության տրամադրման կամ ընտանիքի վերամիավորման նպատակով ընտանիքի հայտնաբերման միջնորդություններին կամ անդամ պետություններում կիրառվող որևէ այլ ընթացակարգում: Խնամակալը երեխայի համար հուսալի պաշտպան է տարիքի գնահատման գործընթացում և օգնում է նրան հասկանալու ընթացակարգն ու դրա համատեքստում իր իրավունքները: Երեխայի անհետանալու դեպքում խնամակալը պետք է ներգրավվի որոնման աշխատանքներին: Անդամ պետություններն պետք է ապահովեն խնամակալների իրավազորություն և լիազորություններ՝ աջակցելու այդ գործընթացների

[31] Տե՛ս ՄԻԵԴ, *Հ.Ա.-ն և այլք ընդդեմ Հունաստանի*, թիվ 19951/16, 28.02.2019, § 205, *Rahimi-ն ընդդեմ Հունաստանի*, թիվ 8687/08, §§ 108-110, 5.04.2011թ.:

սահմանմանը և իրականացմանը, սատարելով երեխայի հատուկ պաշտպանության և աջակցությանն իրավունքների իրագործմանը:

դ. Վստահության ձևավորում և գաղտնիության պահպանում

61. Ինչպես ներկայացված է 2-րդ սկզբունքում, խնամակալության ոլորտը կարգավորող օրենսդրությունը խնամակալին տալիս է անհրաժեշտ լիազորություններ և անկախություն՝ պարտականությունները կատարելու համար, այն ներառում է խնամակալներին բավարար պատրաստում և ռեսուրսների տրամադրում, որպեսզի խնամակալները կարողանան կառուցել վստահության հարաբերություն երեխայի հետ, օժտում է իր պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ լիազորություններով և անկախությամբ: Այս ամենը նախատեսում է ինչպես խնամակալներին պատշաճ կերպով վերապատրաստելը, այնպես էլ ռեսուրսներ տրամադրելը, որպեսզի նրանք կարողանան վստահելի հարաբերություններ հաստատել երեխայի հետ: Խնամակալության մարմինները կարող են անտեսման կամ ռեսուրսների պակասի վտանգի տակ հայտնվեն, հատկապես ներպետական համակարգերի վրա ճնշումների ժամանակ:

62. Գաղտնիության պահպանման պարտականությունը վստահության հարաբերությունների կառուցման և խնամակալի պարտականությունների կատարմանը նպաստելու առանցքային տարրն է, որը պաշտպանում է երեխայի անձնական կյանքի իրավունքը (ստորև տե՛ս ռեսուրսների մասին 7-րդ սկզբունքը): Դա խնամակալության գործընթացի դժվարին կողմն է, և կախված է բազմաթիվ տարբեր գործոններից: Վստահության և գաղտնիության բացակայության դեպքում, երեխան չի բացահայտի կամ չի քննարկի խնամակալի հետ բոլոր հանգամանքները, և խնամակալը չի կարողանա գործել նրա լավագույն շահերից ելնելով: Երեխայի վստահության ամրապնդումն իր խնամակալի նկատմամբ կարևոր է, որպեսզի երեխան կարողանա բացահայտել, թե ինչ է տեղի ունենում իր հետ, մասնավորապես՝ սեռական շահագործման կամ սեռական բռնության դեպքում[32]: Ուստի, անդամ պետություններին խորհուրդ է տրվում ձեռնարկել վստահությունն ամրապնդման և գաղտնիության պահպանմանն ուղղված համապարփակ և հստակ միջոցառումներ: Դրանք ներառում են խնամակալների պատշաճ ստուգման և հավաքագրման, վերապատրաստման, որակավորման, անձնական պահանջների, աշխատանքային ծանրաբեռնվածության և անձնական շփումների կանոնավորության և գործերի կառավարման

[32] Տե՛ս «Փախստականների ճգնաժամից տուժած երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու մասին» Կոմիտեի 2017 թվականի մարտի 3-ի հատուկ զեկույցը, 28-30 էջերը:

համակարգերի վերաբերյալ դրույթներ՝ ելնելով խնամակալների գենդերային և մշակութային համապատասխանությունից:

63. Ներպետական համակարգերի համար օգտակար ռեսուրսներ են ընտանիքից անջատված երեխաների խնամակալների հիմնական եվրոպական կանոնները, որոնք ներառում են խնամակալ-երեխա դրական փոխհարաբերությունների չափորոշիչներ (թիվ 8 հիմնական կանոն)[33]: Երեխայի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը պետք է պաշտպանված լինի օրենքով: Նպատակահարմար է նաև ունենալ վարքագծի կանոնագիրք, որը հաշվի է առնում գաղտնիության սկզբունքի հետևանքներ և խնամակալներին կտրամադրի հստակ տեղեկատվություն այն հանգամանքների վերաբերյալ, որոնց դեպքում այլ համապատասխան գործակալություններին և դերակատարներին որոշակի տեղեկատվության բացահայտումը բխում է երեխայի լավագույն շահերից, ինչպես նաև այն հանգամանքների, որոնց առկայության դեպքում նրանք պարտավոր են տարամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, օրինակ՝ որոշ անդամ պետություններում խնամակալները և այլ դերակատարներն օրենքով պարտավոր են երեխային ուղղորդել մասնագիտացված մարմիններ, երբ նրանք հիմքեր ունեն ենթադրելու, որ երեխան ենթարկվել է թրաֆիքինգի, շահագործման կամ բռնության որևէ այլ ձևի:

ե. Խնամակալի՝ երեխայի և համապատասխան պետական մարմինների, գործակալությունների և անհատների միջև կապող օղակ հանդիսանալը

64. Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որոնք թույլ կտան խնամակալներին կապող օղակ և առանցքային կետ հանդիսանալ երեխայի և համապատասխան պետական մարմինների, գործակալությունների և անհատների միջև, որոնք ներգրավված են երեխայի կյանքում: 7-րդ սկզբունքում այդ խնդրին հանգամանորեն է անդրադարձ է կատարվում: Ստանձնելով երեխայի նկատմամբ պատասխանատվությունը՝ խնամակալը կարող է ապահովել, որ երեխային առնչվող բոլոր գործընթացների հիմքում լինի երեխայի իրավիճակի ընդհանուր ըմբռնումը: Այդ կապի ապահովումը կարող է նաև բարելավել ընդհանուր ծառայությունների մատուցման և ռեսուրսների բաշխման որակը:

[33] Հրատարակված է Defense for Children International-ի կողմից, տե՛ս http://www.corestandardsforguardians.eu/:

զ. Անկախություն և անաչառություն[34]

65. Խնամակալի պատասխանատվության կենտրոնում երեխան է: Հետևաբար, չափազանց կարևոր է, որ անդամ պետությունները ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու խնամակալի անկախությունը և անաչառ գործելու նրա կարողությունը՝ առանց որևէ շահերի բախման: Սրա իրականացման չափորոշիչն է. խնամակալը չպետք է երեխայի խնդիրների վերաբերյալ հրահանգներ ստանա որևէ մեկից (օրինակ՝ ոստիկանությունից կամ միգրացիայի գործակալությունից), ինչպես նաև չպետք է ստանձնի որևէ այլ պարտականություն, որը կարող է խանգարել երեխայի անունից գործելու նրա կարողությանը: Անդամ պետությունները չպետք է խնամակալ նշանակեն այնպիսի թեկնածուի, որը ֆինանսական կամ ինստիտուցիոնալ կապեր ունի խնամակալության կամ միգրացիայի ընթացակարգերի որոշման համար պատասխանատու պետական մարմինների կամ գործակալությունների հետ: Պատշաճ գործելակերպի չափորոշիչները ներառում են նաև խնամակալների էթիկայի կանոնների առկայությունը և նրանց անկախությունը երաշխավորելու համար հատուկ վերապատրաստումը:

Սկզբունք 5. Տեղեկատվություն, արդարադատության և իրավական պաշտպանության միջոցների մատչելիություն, ներառյալ՝ երեխաների համար գանգատների բարենպաստ ընթացակարգեր[35]

66. Երեխաների համար բարենպաստ արդարադատության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Ուղեցույցի 2-րդ սկզբունքը վերահաստատում է երեխայի՝ տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու իրավունքը՝ «*իր տարիքին և հասունության աստիճանին հարմարեցված ձևով, լեզվով, որը նա կարող է հասկանալ, և որը հաշվի է առնում նրա գենդերային և մշակութային առանձնահատկությունները*»: Խնամակալը կարևոր դեր է խաղում երեխայի՝ իր վրա ազդող ընթացակարգերի վերաբերյալ ստացած տեղեկատվությունը հասկանալու համար: Խնամակալը նախևառաջ երեխային սեփական դերի և պարտականությունների մասին տեղեկատվության է տրամադրում, որպեսզի երեխան կարողանա հասկանալ, թե ինչ ակնկալել խնամակալից և որ որոշումների համար է պատասխանատու նա, ի տարբերություն որոշումների և ընթացակարգերի, որոնք կախված են այլ մասնակիցներից: Չափազանց կարևոր է, որ երեխան ընկալի, որ խնամակալն անկախ է և գործում է իր լավագույն շահերից ելնելով:

---

[34] Տե՛ս ՄԻԵԴ, *Հ.Ա.-ն և այլք ընդդեմ Հունաստանի*, որտեղ բարձրացվել է խնամակալների անկախության հարցը: ՄԻԵԴ արձանագրել է, որ այն փաստը, որ նույն մարմինը, որը որոշում է կայացրել դիմումատուի կալանքի մասին, նաև օրենքով համարվում էր դիմումատուների խնամակալը, հակասում է ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերին: Տե՛ս մասնավորապես §§ 147, 209-214 էջեր:

[35] Տե՛ս ՄԻԵԴ, *Հ.Ա.-ն և այլք ընդդեմ Հունաստանի*, վերոնշյալ, §§177-183, 3-րդ հոդվածի համակցությամբ 13-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների առնչությամբ:

67. Գոյություն ունեն բազմաթիվ եղանակներ՝ ապահովելու համար, որ երեխային տրամադրվող տեղեկատվությունը «երեխայի համար բարենպաստ» է: Պետությունները պարտավոր են ապահովել, որ խնամակալներին հասանելի լինեն թարգմանչական ծառայությունները և լեզվական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են երեխայի հետ նրա շփման համար: Անդամ պետությունները պետք է տեղեկատվություն տրամադրեն երեխայի լեզվին, մշակույթին և սեռին հարմարեցված ձևով: Լավ գործելակերպը կարող է լինել մշակութային միջնորդների և թարգմանիչների, այդ թվում՝ կին մասնագետների ներգրավումը երեխային տեղեկատվության տրամադրմանն աջակցելու համար: Գործնական աջակցության միջոցառումները ևս կնպաստեն երեխաների իրավունքների պաշտպանությանը, այս առումով, օրինակ, անդամ պետությունները պետք է վերապատրաստեն խնամակալներին երեխաների շահերը հաշվի առնող հաղորդակցման եղանակների վերաբերյալ:

68. Անդամ պետությունները պետք է դիտարկեն միգրացիայի հանատեքստում երեխաներին տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրելու ուղիների լայն շրջանակը՝ հիմնվելով Եվրոպայի խորհրդի համապատասխան ուղեցույցների վրա: Անդամ պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից արդեն իսկ մշակվել է գործիքների լայն շրջանակ: Միգրացիայի համատեքստում երեխաների համար բարենպաստ տեղեկատվության տրամադրման գործնական ուղեցույցը պարունակում է բազմաթիվ օգտակար օրինակներ, այդ թվում՝ խաղային հավելվածների օգտագործման վերաբերյալ, մուլտֆիլմեր և տեսանյութեր[36]:

69. Ինչպես նշված է երեխաների համար բարենպաստ արդարադատության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղեցույցի բացատրական հուշագրում՝ երեխաները պետք է տեղեկացված լինեն իրենց իրավունքների, ինչպես նաև այն գործիքների մասին, որոնք նրանք կարող են օգտագործել իրենց իրավունքներն իրացնելու կամ անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանելու համար: Գանգատ ներկայացնելու մեխանիզմների մատչելիությունը կարևոր է խնամակալության դեմ գանգատների և ընդհանրապես նրանց հատուկ աջակցություն և պաշտպանություն ստանալու իրավունքների և երեխայի ցանկացած այլ իրավունքների խախտման դեպքում: Կանանց համար արդարադատության մատչելիության հավասար պայմանների ապահովման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կողմից ձեռնարկված

[36] Տե՛ս https://www.coe.int/en/web/children/:

աշխատանքները կարող է նաև ուղեցույց ծառայել աղջիկների հատուկ իրավիճակի վերաբերյալ[37]:

70. Երեխան պետք է հնարավորություն ունենա օգտվել իրավական արդյունավետ պաշտպանության իր իրավունքից՝ կապված խնամակալ նշանակելու ձգձգումների, խնամակալի կողմից իր լիազորությունների կատարման կամ խնամակալության դադարեցման պայմանների հետ: Խնամակալության ողջ ընթացքում երեխան պետք է հնարավորություն ունենա գանգատ ներկայացնելու շփման կարգի կամ այն մասին, թե ինչպես է խնամակալը գործում երեխայի անունից, անհամաձայնություն հայտնել խնամակալի կողմից ընդունված որոշումների վերաբերյալ, ներառյալ իր գույքի կառավարման կամ թրաֆիքինգի ռիսկի դեպքում պաշտպանական միջոցների վերաբերյալ որոշումների: Անվճար իրավաբանական խորհրդատվության և օգնության մատչելիությունը չափազանց կարևոր է, որպեսզի երեխան կարողանա վիճարկել այդ որոշումները[38]:

71. Տարբեր պետական մարմիններ, այդ թվում՝ դատական, ինչպես նաև օմբուդսմաններ կարող են ներգրավվել գանգատների և փոխհատուցման կառուցակարգերում: Այդ հարցում կարևոր դեր կարող են խաղալ հատկապես երեխաների իրավունքների պաշտպանները: Անդամ պետությունները կարող են չստեղծել նոր կառուցակարգեր, սակայն պետք է ապահովեն, որ առկա ընթացակարգերը հարմարեցվեն երեխաների կարիքներին՝ երեխաների համար բարենպաստ արդարադատության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղեցույցներին համահունչ: Պատշաճ գործելակերպի չափորոշիչները ներառում են երեխայի գանգատի քննարկման սահմանված ժամկետները, ինչպես նաև միջոցներ՝ ապահովելու, որ երեխան հասկանա իր վերաբերյալ կայացրած որոշումները[39]: Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև պահանջում է, որ անդամ պետություններն ապահովեն անձնական տեղեկատվության գաղտնիությունը և զգայուն տվյալների պաշտպանության համապատասխան երաշխիքները:

72. Անդամ պետություններին առաջարկվում է ներդնել վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներ, օրինակ՝ հաշտարարությունը: Նման մեխանիզմների կիրառումը չպետք է խոչընդոտի երեխայի համար՝ անհրաժեշտության դեպքում վարչական և դատական ընթացակարգերի հասանելիությանը:

---

[37] Տե՛ս Guaranteeing Equal Access of Women to Justice (coe.int) and PGG II: Women's Access to Justice (2019-2021) (coe.int):

[38] Տե՛ս վերոնշյալ ՄԻԵԴ, *H.A.-ն և այլք ընդդեմ Հունաստանի*, § 211:

[39] Տե՛ս ՄԻԵԴ, *T.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ]*, թիվ. 24724/94, 16.12.1999թ, *S.C.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 60958/00, 15.06.2004, *Güveç-ն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 70337/01, 20.01.2009թ.:

73. Գանգատների բոլոր կառուցակարգերը գործում են թափանցիկ, առանց ուշացումների, երեխայի համար բարենպաստ եղանակով, հատուկ ուշադրության արժանացնելով գենդերային ասպեկտները՝ երեխայի նկատմամբ որևէ կանխակալ մոտեցումից խուսափելու համար:

Սկզբունք 6. Ինստիտուցիոնալ միջոցառումներ

74. Խնամակալների կառավարումը վերապահված է իրավասու մարմնին՝ գործակալությանը կամ իրավաբանական անձին (այսուհետ՝ «խնամակալության մարմին»), և անդամ պետություններն ունեն դա իրականացնելու տարբեր մոդելներ: Օրինակ, Բելգիայում խնամակալության հարցերով զբաղվում է արդարադատության նախարարությունը: Լատվիայում խնամակալությունը տնօրինում է հատուկ դատարանը (ծնողազուրկ երեխաների հարցերով): Մեկ այլ տարբերակ է, երբ համակարգի կառավարման լիազորությունը վերապահվել է հասարակական կազմակերպությանը (ինչպես օրինակ՝ Դանիայում): Հունաստանում խնամակալությունն իրականացնում է Հանրային դատախազի գրասենյակը, սակայն խնամակալության հետ կապված խնդիրները լուծմամբ զբաղվում է հասարակական կազմակերպությունը[40]: Խնամակալության մարմինները կարող են պատասխանատու լինել ինչպես որևէ երկրի քաղաքացի հանդիսացող, այնպես էլ քաղաքացիություն չունեցող երեխաների խնամակալության կառավարման համար: Իռլանդիայում երեխաների և ընտանիքի գործակալությունը, որը պատասխանատու է ծառայությունների լայն շրջանակների համար (օրինակ՝ երեխաների պաշտպանության և սոցիալական պաշտպանություն, այլընտրանքային խնամք և ընտանիքի աջակցության) կառավարում է խնամակալության հետ կապված պարտականությունները կատարելու նպատակով ստեղծված հատուկ ծառայությունը[41]: Կիպրոսում առանց ուղեկցության երեխաները գտնվում են Սոցիալական ապահովության ծառայությունների խնամակալության ներքո, որոնք համագործակցության արձանագրություն են ստորագրել անկախ «Հույս երեխաների համար» ՄԱԿ-ի ԵԻԿ քաղաքականության կենտրոնի հետ:

75. Կարևոր է, որ շահերի բախման ցանկացած իրավիճակից խուսափելու համար խնամակալության մարմինը գործառնական առումով անկախ լինի երեխաների խնամքի համար պարտականություններ ունեցող պատասխանատու այլ մարմիններից: Խնամակալության գործառույթները չպետք է կապված լինեն ներգաղթի պարտականությունների հետ:

---

[40] Վերոնշյալ *Հ.Ա.-ն և այլք ընդդեմ Հունաստանի* գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ այս համակարգը, հատկապես, երբ դատախազության և ՀԿ-ի միջև շփումը արագ և արդյունավետ չէ, կարող է առաջացնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված խնդիրներ: Տե՛ս ՄԻԵԴ վճռի § 180:

[41] Տե՛ս https://www.tusla.ie/services/alternative-care/separated-children/:

76. Խնամակալությունը միշտ չէ, որ պետության ողջ տարածքում կառավարվում է միասնական եղանակով: Մի շարք պետություններում այն կառավարում է որևէ պետական մարմի կողմից (օրինակ՝ Նիդերլանդներում), այլ պետություններում այն կազմակերպված է տեղական (օրինակ՝ Միացյալ Թագավորությունում և Լեհաստանում) կամ դաշնային մակարդակով (օրինակ՝ Գերմանիայում): Այնտեղ, որտեղ խնամակալությունը կառավարվում է տեղական մակարդակով, կարևոր է ապահովել, որ խնամակալության չափանիշները համարժեք լինեն պետության ողջ տարածքում գործող չափանիշներին: Կարևոր է նաև ապահովել, որ ընդհանուր ռեսուրսները հասանելի լինեն պետության ողջ տարածքում (օրինակ՝ վերապատրաստման ռեսուրսները կամ կայացրած որոշումների արձանագրությունները):

77. Կառավարման մարմնի առկայությունը կամ անհրաժեշտության դեպքում տարբեր տարածաշրջանային մարմինների միջև համակարգումը, պետք է թույլ տա պետություններին ավելի լավ և արագ արձագանքել խնամակալության փոփոխվող կարիքներին՝ հաշվի առնելով ինչպես ժամանած երեխաների թիվը,այնպես էլ նրանց հանգամանքները, ինչպես նաև պետք է ստեղծել ժամանակավոր խնամակալության համակարգ, ելնելով ներպետական առանձնահատկություններից կամ գործի հանգամանքներից: Ժամանակավոր խնամակալ երբեմն նշանակվում է երեխայի տարիքի վիճարկման, մեծ թվով ժամանող ներգաղթյալների կամ երեխայի իրավիճակին անմիջական արձագանքի դեպքում (օրինակ, եթե երեխայի հետ առաջին հանդիպման ժամանակ՝ անմիջական զննման ընթացքում պարզ է դառնում, որ երեխան ենթարկվել է բռնության, թրաֆիքինգի կամ շահագործման այլ ձևերի):

78. Խնամակալության մարմնի առաջնային նպատակն է ապահովել, որ խնամակալների վերապատրաստման և հավաքագրման ընթացակարգերի չափանիշները համապատասխանեն երեխաների պաշտպանության չափանիշներին, որպեսզի խնամակալներ դառնան ազնիվ, բարեխիղճ, անձինք, որոնք ունեն համապատասխան հմտություններ և պատրաստվածություն: Միգրացիայի համատեքստում երեխաները հաճախ հայտնվում են չափազանց խոցելի իրավիճակներում, և անհրաժեշտ է, որ խնամակալը երեխայի հետ գտնվի վստահության վրա հիմնված հարաբերությունների մեջ: Խնամակալության մարմինը պետք է ապահովի, որ երեխայի պաշտպանության քաղաքականությունը ներդրված լինի համակարգում, ինչպես նաև ապահովվի յուրաքանչյուր երեխայի խնամակալի նկատմամբ վերահսկողությունը: Պատշաճ գործելակերպի չափորոշիչ է խնամակալի վարքագծի կանոնագիրք ունենալը, որն անդրադառնում է հնարավոր բոլոր էթիկական և զգայուն խնդիրներին: Խնամակալության մարմինը նաև առանցքային դեր ունի խնամակալության մասին երեխաների լավ

տեղեկացված լինելու և գանգատների ներկայացման մեխանիզմների մատչելիությունն ապահովելու գործում (տե՛ս 5-րդ սկզբունքը):

79. Խնամակալության մարմինը պետք է որոշակի դերակատարում ունենա խնամակալների շարունակական ուսուցման և նրանց որակավորման բարձրացման գործում՝ ապահովելու, որ նրանք համապատասխանեն իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ մասնագիտական պահանջներին: Օրինակ, մի շարք խնամակալության մարմիններ և ծառայություններ, համագործակցելով Եվրոպական հանձնաժողովի հետ, մշակել են խնամակալության առցանց գործիքակազմ[42]: Խնամակալության մարմինն առանցքային դեր է խաղում խնամակալության պարտականությունը ստանձնող անձանց համար ներդաշնակեցված ընթացակարգերի և ծառայությունների ներդրման գործում: Դրանք ներառում են՝ երեխաների անհայտանալու, բռնության, դաժան վերաբերմունքի, թրաֆիքինգի կամ շահագործման այլ տեսակների ենթարկվելու դեպքում զեկուցման ընթացակարգերը:

80. Խնամակալության մարմինն պետք է ապահովվի, որ խնամակալներն իրենց աշխատանքում ստանան համապատասխան աջակցություն: Որոշ պետություններ իրենց ներպետական համակարգերում, օրինակ՝ Նիդերլանդներ և Դանիա, պատասխանատու մարմինը խնամակալների տրամադրում է աջակցության և խորհրդատվական ծառայությունների լայն շրջանակ, օրինակ՝ մասնագիտական գործընթացների վերաբերյալ իրավական տեղեկատվության հասանելիության, ներառյալ իրենց տարածքից դուրս ընտանիքի վերամիավորման դեպքերում: Այդ մարմինը նաև ապահովում է հոգեբանների, առողջապահական մասնագետների, թարգմանիչների և մշակութային միջնորդների հասանելիությունը: Այդ ամենը թույլ է տալիս խնամակալներին արդյունավետ և հասցեական արձագանքել երեխայի իրավիճակին:

81. Դեպքերի վարումը վստահելով խնամակալության մարմնին՝ պետք է նաև ապահովվի խնամակալների գործերի պատշաճ կառավարումը, մասնավորապես՝ ապահովելով համապատասխան հանձնարարական մեխանիզմներ նրանց նշանակման համապատասխան կառուցակարգեր, որոնք հաշվի կառնեն երեխայի՝ խնամակալի հետ կանոնավոր հանդիպումներ ունենալու կարիքը, գործերի բարդությունը, երեխայի խոցելիության հանգամանքները (օրինակ՝ օրենքի հետ խնդիրներ ունեցող, բռնության կամ թրաֆիքինգի ենթարկված երեխաների պարագայում), անկախ նրանից՝ խնամակալները մասնագետներ են, թե կամավոր է, և խնամակալներին հասանելի աջակցության մակարդակը: Դեպքերի պատշաճ վարման ցուցանիշը խնամակալների կողմից վարվող գործերի առավելագույն

[42] Տե՛ս https://guardianstoolkit.eu/:

քանակն է, որը ներպետական իրավիճակից և այլ գործոններից կախված կարող է տարբեր լինել:

82. Խնամակալության մարմինները պատասխանատվություն են կրում խնամակալների նկատմամբ պատշաճ վերահսկողության համար, օրինակ՝ խնամակալության ողջ ընթացքում, խնամքի տակ գտնվող յուրաքանչյուր երեխայի անհատական գործի վարման միջոցով: Գործը պետք է պարունակի երեխայի վիճակի և ընդունված որոշումների վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը: Արձանագրությունների հաշվառման պահանջներն ու միջոցները պետք է համապատասխանեն տվյալների պաշտպանության միջազգային չափանիշներին:

83. Խնամակալության մարմինն իր լիազորությունների շրջանակներում հստակ դերակատարում ունի՝ ապահովելու, որ պետությունը երեխայի նկատմամբ այլ պարտականությունների հետ նաև խնամակալությանը գործընթացի պատշաճ կերպով համակարգում իրականացնի (ստորև տե՛ս 8-րդ սկզբունքը): Ավելին, խնամակալության մարմնի առկայությունը նաև թույլ է տալիս խնամակալության համակարգի շրջանակում ձևավորել և պահպանել մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, նույնիսկ եթե խնամակալի պարտականություններ կատարող անձինք կարող են ռոտացիայի եղանակով տեղափոխվել այլ աշխատանքի կամ ընդհանրապես ազատվեն աշխատանքից:

84. Պետությունները պետք է նաև ապահովեն խնամակալության մարմինների գործունեության անկախ մշտադիտարկումը և վերահսկողությունը, հնարավորության դեպքում այլ պետական կառույցների, օրինակ՝ երեխաների իրավունքների պաշտպանի կողմից ձեռնարկվող տարեկան ստուգումների շրջանակում:

Սկզբունք 7. Ռեսուրսներ, կադրերի հավաքագրում, որակավորում և վերապատրաստում

85. Պետության համար դժվար կարող է լինել կատարել իր պարտավորությունը՝ ապահովել խնամակալության համակարգի բավարար ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսներով՝ հաշվի առնելով ժամանող երեխաների թվի տատանումը և դրա հիմքում ընկած փոփոխվող հանգամանքները:

86. Խնամակալության համակարգի համար բավարար ռեսուրսների հայթայթմանը և հատկացմանը նպաստելու համար պետք է, որ պետությունները համակարգված կերպով հավաքեն քանակական և որակական տվյալներ իրենց երկրներում միգրացիայի համատեքստում գտնվող առանց ուղեկցության երեխաների մասին: Այդ տվյալները բաժանվում են՝ ըստ երեխաների տարիքային խմբի, սեռի և ծագման երկրի,

այն ընթացակարգերի, որոնցում նրանք ներգրավված են, ինչպես նաև տեղեկություններ են պարունակում ծառայությունների մատուցման եղանակի մասին: Դա նպաստում է խնամակալների հավաքագրման, վերապատրաստման և աջակցության ավելի լավ պլանավորմանը և կազմակերպմանը:

87. Հունաստանում երեխաների հարցերով սոցիալական ծառայությունների գործակալությունը (EKKA) ստեղծել է առանց ուղեկցության երեխաների մասին ամսական «տեղեկատվական վահանակ», որը հիմնված է կենտրոնացված ազգային ավտոմատացված համակարգի վրա՝ ժամանակին և օգտակար տեղեկատվություն է տրամադրում պլանավորման նպատակների համար:

88. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու, որ խնամակալության մարմնի աշխատակազմը և խնամակալներն իրենց պարտականությունները կատարելու համար ունենան անհրաժեշտ փորձ և հմտություններ, կարողանան օգտվել խորհրդատվական ծառայություններից, որոնք, անհրաժեշտության դեպքում, նրանց կտրամադրեն մասնագիտացված ուղղորդում՝ երեխայի լավագույն շահերից ելնելով գործելու համար:

89. Այդ նպատակներին հասնելու համար ներպետական համակարգերը կազմակերպվում են տարբեր ձևերով: Մասնավորապես, որոշ երկրներում (օրինակ՝ Բելգիայում, Ֆինլանդիայում, Նիդերլանդներում և Հյուսիսային Իռլանդիայում) գործում են հատուկ որակավորում ունեցող պրոֆեսիոնալ խնամակալներ: Այլ երկրներում խնամակալները որոշակի չափանիշների և պահանջներին համապատասխանող կամավորներ են, որոնք կարող են մասնագիտական կրթություն չունենալ: Հունաստանում, օրինակ, ազգային օրենսդրությամբ խնամակալների համար նախատեսված է նվազագույն որակավորում: Որոշ դեպքերում պետությունները կարող են որդեգրել հիբրիդային մոդելներ, որոնք նախատեսում են պրոֆեսիոնալ խնամակալների նշանակում հատուկ բարդ դեպքերում կամ, երբ երեխային օգնության և աջակցության սուր կարիք է առաջացել:

90. Անկախ կիրառվող մոդելից, կարևոր է, որ բոլոր խնամակալներն ունենան գիտելիքների և հմտությունների բավարար մակարդակ, այդ թվում՝ մասնագիտացված վերապատրաստման շնորհիվ, որպեսզի ապահովեն երեխայի շահերը և բավարարեն նրա իրավական, սոցիալական, առողջապահական, հոգեբանական, նյութական և կրթական կարիքները:

91. Հետևաբար խնամակալի գիտելիքներն ու հմտությունները պետք է վերաբերեն երեխայի իրավունքներին, խնամքին, պաշտպանությանը և զարգացմանը: Խնամակալները պետք է հասկանան նաև երեխաների

կրոնական և մշակութային հնարավոր տարբերությունները, գենդերային խնդիրները և ինչպես աջակցել տարբեր լեզվական ծագում ունեցող երեխաներին: Խնամակալները պետք է տեղեկացված լինեն և հասկանան, թե ինչպես են կազմակերպվում խնամակալության միջոցառումները և ինչպես են գործում խնամքի տակ գտնվող երեխաների հատուկ ընթացակարգերը (օրինակ՝ ռիսկի գնահատումը, ուղղորդումը կամ երեխայի անհետանալու մասին հաղորդումը): Խնամակալները պետք է տեղեկացված լինեն միգրացիայի ենթատեքստում երեխաների առջև ծառացած ընթացակարգային հարցերի մասին (ներառյալ տարիքի գնահատումը, ընտանիքի հայտնաբերումը, կարգավիճակի որոշումը և այլն): Խնամակալները պետք է նաև տեղեկացված լինեն երեխաների անհետանալու դեպքում գործող ընթացակարգերի, այդ մասին հայտնելու և գործի ընթացքին հետևելու համար հասանելի գործիքակազմի մասին, ներառյալ՝ անհետացած երեխաների համար թեժ գծերի մասին տեղեկատվությունը:

92. Խնամակալի գիտելիքները պարտադիր չէ, որ կրկնօրինակեն սոցիալական աշխատողի կամ իրավաբանի փորձառությունն ու հմտությունները՝ խնամքի և կարգավիճակի որոշման ընթացակարգերի վերաբերյալ, կարևոր է, որ նրանք լավ պատկերացնեն դրանց առնչվող բոլոր խնդիրները, որպեսզի կարողանան օգնել և աջակցել երեխային իրենց վերաբերյալ կայացվող բոլոր որոշումներում: Խնամակալները նաև պետք է հասկանան այլ մասնակիցների գործառույթներն ու պարտականությունները՝ նրանց հետ արդյունավետ համագործակցելու համար (տե՛ս ստորև 8-րդ սկզբունքը):

Սկզբունք 8. Համագործակցություն և համակարգում ներպետական մակարդակով

93. Մասնակիցների միջև համագործակցությունն ու համակարգումը կենսական նշանակություն ունի, հաշվի առնելով, որ խնամակալի և խնամակալության մարմնի դերն ուղղակիորեն հատվում է միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների նկատմամբ պատասխանատվություն կրող այլ մասնակիցների աշխատանքի հետ:

94. Երեխային հետ աշխատող յուրաքանչյուր մասնագետի առաջադրանքներն ու պարտականությունները պետք է պարզաբանվեն և ճիշտ ձևակերպվեն՝ երեխաների պաշտպանությանը համար ձեռնարկված միջոցառումների յուրաքանչյուր փուլում, ներառյալ երեխաների անհետանալու դեպքերը կանխելու համար: Դրանք են՝ խնամակալը, երիտասարդական և սոցիալական ծառայությունները, միգրացիոն և իրավապահ մարմինները, առողջապահության և կրթության ոլորտի մասնագետները, ընդունելության կենտրոնների աշխատողները և այլն:

Խնդիրներ կարող են առաջանալ, երբ խնամակալի դերը այլ մասնակիցների պարտականությունների հետ կապված հստակեցված չէ: Հետևաբար, բոլոր համապատասխան մասնագետների միջև արդյունավետ համագործակցությունը և համակարգումը պահանջում է պետության կողմից խնամակալների դերի և մյուս մասնագետների նկատմամբ պարտականությունների հստակ սահմանում (տե՛ս 1-ին սկզբունքը և կառուցակարգերի վերաբերյալ 2-րդ սկզբունքը):

95. Պետությունները պետք է նաև ստեղծեն տարբեր ծառայությունների միջև համակարգման մեխանիզմ՝ ապահովելու համար, որ երեխայի լավագույն շահերը, ներառյալ նրա շարունակական բարեկեցությունը, ինչպես նաև երկարաժամկետ լուծման որոնումը, առաջին հերթին հաշվի առնվեն նրանց վերաբերող բոլոր գործողություններում: Համակարգման նման ընդհանուր մեխանիզմները կարող են տարբեր ձևերի լինել, ներառյալ առանց ուղեկցության երեխաների վերաբերյալ ռազմավարությունը (օրինակ՝ Շվեդիայում) կամ համակարգող գործակալության նշանակումը (օրինակ՝ Գերմանիայում): Կախված այն հանգամանքից, թե ինչպես են բաշխվում անդամ պարտականությունները անդամ պետություններում, նման համակարգումը կարող է իրականացվել ազգային կամ տարածաշրջանային մակարդակով: Այդ կառուցակարգերն օգնում են ապահովել, որ բոլոր մասնակիցների գործունեությունը ներառվի երեխաների պաշտպանության և բարեկեցության համակարգում, ինչպես նաև կատարել առանց ուղեկցության երեխաների հատուկ պաշտպանության և աջակցության պետության պարտականությունները:

96. Որոշ երկրներում խնամակալության մարմինը կենտրոնական դեր է խաղում շարունակական համակարգման գործում (օրինակ՝ Նիդերլանդներում): Այլ երկրներում խնամակալության մարմինը մասնակցում է աշխատանքներին և խորհրդատվություն է տրամադրում երեխաների պաշտպանության համար՝ բազմաբնույթ համակարգման համատեքստում՝ օրինակ՝ Նիդեռլանդներում ընտանեկան վերահսկողության և խնամակալության անկախ գործակալությունը՝ ՆԻԴՈՍ համագործակցության համաձայնագիր է ստորագրել ոստիկանության և միգրացիոն ծառայությունների հետ՝ թրաֆիքինգի ենթարկված երեխաներին պաշտպանելու համար: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի ուղեցույցի ընդհանուր մեկնաբանությունների 5-րդ և 13-րդ կետերը կարող են օգնություն լինել շահագրգիռ կողմերին այդ ռազմավարական մեխանիզմների մշակման գործում: Երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարությունների վերաբերյալ Եվրոպայի

խորհրդի քաղաքականության ուղեցույցները[43] նույնպես կարևոր են համակարգման մեխանիզմների մշակման համար:

97. Պետությունները պետք է նաև մշակեն աշխատակարգեր, համաձայնագրեր և գործերի փոխանցման մեխանիզմներ, որոնք կանոնավոր հիմունքներով բարելավում են ընթացիկ աշխատանքում համագործակցությունն ու համակարգումը՝ հաշվի առնելով առանց ուղեկցության երեխաների իրավիճակին պետության արձագանքի կարևոր տարրերը, ներառյալ երեխայի հետ առաջին հանդիպումը, նրա նույնականացումը, ռիսկերի գնահատումը և խնամակալության միջոցների կիրառումը, մինչև երկարաժամկետ լուծումներ գտնելը: Բազմաբնույթ համագործակցության կարևորությունն ընդգծված է Եվրոպայի խորհրդի ուղեցույցներում, այդ թվում՝ Նախարարների կոմիտեի՝ երեխաների համար բարենպաստ արդարադատության ուղեցույցներում, երեխաների իրավունքների, երեխաների և ընտանիքների համար բարենպաստ սոցիալական ծառայությունների վերաբերյալ ԵԽ Նախարարների կոմիտեի CM/Rec(2011)12 հանձնարարականում անդամ պետություններին, որը ցուցումներ է պարունակում բազմաբնույթ համագործակցության և համակարգման համար:

98. Առանձնահատուկ նշանակություն ունեն գործակալությունների միջև գործերի փոխանցման մեխանիզմները, որոնք նախատեսում են անհապաղ գործողություններ ռիսկային իրավիճակներում, ներառյալ երեխաների անհետանալու դեպքերում և այն իրավիճակները, երբ երեխան ենթարկվում է բռնության, դաժան վերաբերմունքի, թրաֆիքինգի կամ շահագործման կամ առկա է դրա վտանգը: «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում նախատեսվում է, որ իրավասու մարմինները, ինչպես նաև աջակցող կազմակերպությունները պետք է համագործակցեն թրաֆիքինգի ենթարկված անձանց բացահայտման համար (հոդված 10): «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան անդամ պետություններից պարտավորեցնում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու ազգային մակարդակով բազմաբնույթ համակարգում՝ երեխաներին սեռական բռնությունից և շահագործումից պաշտպանելու համար[44]: «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ցուցումներ է տրամադրում անդամ պետություններին միգրանտների, փախստականների և ապաստան հայցող կանանց և աղջիկներին գենդերային բռնությունից պաշտպանելու համար, ներառյալ

[43] Տե՛ս CM/Rec(2009)10 հանձնարարություն:
[44] Տե՛ս «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիա 10-րդ հոդված:

ապաստանի գենդերային ասպեկտները և բռնության այն ձևերը, որոնց բախվում են միգրանտ աղջիկները, ինչպիսիք են կանանց սեռական օրգանների խեղումը կամ հարկադիր ամուսնությունը[45]: Առանց ուղեկցության երեխաների անհետանալու դեպքում պատշաճ գործելակերպի օրինակ է Բրյուսելում կնքված միջգերատեսչական արձանագրությունը, որը սահմանում է երեխայի անհետանալու դեպքում մասնակիցների գործողություններն ու պարտականությունները և նրանց համատեղ աշխատակարգը:

99. Բոլոր միջգերատեսչական շրջանակները, աշխատակարգերը և ուղղորդման մեխանիզմները պետք է անդրադառնան տվյալների փոխանակման ձևերին և սահմանափակումներին, ինչպես նաև տվյալների պաշտպանության պարտավորությունների կատարման եղանակներին՝ տվյալների օգտագործման և պահպանման կանոններ սահմանելու միջոցով: Պետք է ընդունվեն հստակ դրույթներ, որոնք պետք է սահմանեն, թե ինչ, երբ և ինչպես է փոխանցվելու տեղեկատվությունը, ինչպես նաև համապատասխան ընթացակարգեր, որոնք ապահովում են գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանության շարունակական պահպանումը: Պետությունների համար կարող են խթան հանդիսանալ երեխաների պաշտպանության գործերի վարման միջգերատեսչական ընդհանուր համակարգերը կամ այլ ոլորտներում միջգերատեսչական գործելակերպը, ինչպիսիք են բռնության ենթարկված երեխաների պաշտպանության հարցում միջգերատեսչական համագործակցությունը:

100. Մասնակիցների միջև համագործակցությունը և համակարգումը կարող է ամրապնդվել՝ պարբերական կազմակերպվող միջգերատեսչական վերապատրաստման դասընթացների միջոցով՝ ներգրավելով տարբեր պարտականություններ ունեցող մասնագետների, որոնք կծանոթանան իրենց աշխատանքների ընդհանուր ընթացակարգերին: Պետությունների կողմից պետք է խրախուսվեն նաև փորձնական ծրագրերը, որոնք թույլ են տալիս մասնակիցներին միավորվել լավ գործելակերպ ստեղծելու համար, ինչպես օրինակ՝ Անգլիայում երեխաների իրավունքների պաշտպաններին վերաբերող վերոնշված ծրագրերը:

101. Պետությունները պետք է նաև աջակցեն շահակիցների միջև համագործակցության և համակարգման մշտադիտարկմանը և գնահատմանը՝ ապահովելով երեխաների մասնակցությունը՝ գնահատման մեջ ներառելու նրանց փորձառությունը, հեռանկարները և առաջարկությունները: Այս ոլորտում պարբերական հետազոտությունները կարող են նաև նպաստել արդյունքների բարելավմանը, և այդ առումով լավ աղբյուր են երեխաների համար բարենպաստ արդարադատության և Եվրամիությունում

[45] Տե՛ս https://rm.coe.int/migrant-women-and-istanbul-convention/1680925865:

ծնողական խնամքից զրկված երեխաների խնամակալության համակարգերի վերաբերյալ ԵՄ Հիմնարար իրավունքների գործակալության կողմից իրականացված հետազոտությունները[46]:

102. Եթե երեխան անհետանում է, նրա խնամակալը պարտավոր է այդ մասին հայտնել համապատասխան մարմիններին և համագործակցել նրանց հետ՝ երեխային գտնելու և պաշտպանելու համար: Եթե առկա է վտանգ , որ երեխան թրաֆիքինգի զոհ է դարձել և հնարավոր է ենթարկվի կրկնակի թրաֆիքինգի, այդ դեպքում պետությունները ձևավորում են միջազգային համագործակցության կառուցակարգեր՝ առաջնորդվելով «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի պահանջներով[47]: Նորվեգիայում երեխայի խնամակալը պարտավոր է զեկուցել նրա անհետանալու մասին, ընդ որում՝ առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխայի դեպքում այդ պարտականությունը դրվում է խնամակալի վրա: Նորվեգիայում գործնական կիրառության, համաձայն՝ խնամակալի գործունեությունը դադարեցվում է, եթե որոշ ժամանակ երեխայի գտնվելու վայրն անհայտ է եղել և հավանական է, որ խնամակալի ծառայությունների կարիք այլևս չի լինի: Երբ հետագայում պարզվում է, որ երեխան գտնվում է երկրում, ապա նրան խնամակալ կնշանակեն, եթե նախնական պայմանները դեռևս գործում են (միջազգային համագործակցության վերաբերյալ լրացուցիչ ցուցումներ ստանալու համար տե՛ս 9-րդ սկզբունքը):

Սկզբունք 9. Միջազգային համագործակցություն

103. Միջազգային համագործակցությունը կենսական նշանակություն ունի միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների պաշտպանության համար: Հաճախ անհրաժեշտություն է առաջանում պաշտպանել երեխաներին թրաֆիքինգից և մարդկանց մաքսանենգների ազդեցությունից, շարունակել խնամակալությունից անհետացած երեխաներին փնտրելու աշխատանքները, բացահայտել և հայտնաբերել ընտանիքի անդամներին և հարազատներին, վերականգնել ընտանեկան կապերը, եթե դա բխում է երեխաների լավագույն շահերից և գտնել երկարաժամկետ լուծումներ:

104. Միջազգային համագործակցությունը առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված երեխաների փոխանցման համատեքստում՝ կենսական նշանակություն ունի նրանց իրավունքների պաշտպանության համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտնում է, որ

---

[46] Տե՛ս https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/fra-2015-guardianship-systems-in-the-eu_en.pdf:

[47] Տե՛ս «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիա հոդված 33:

անդրսահմանային տեղափոխման ժամանակ երեխային չպաշտպանելը և այլ պետություն ժամանելու պես նրանց պատշաճ խնամք չտրամադրելը՝ ՄԻԵԿ 3-րդ հոդվածին հակասող անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք է համարվում[48]:

105. Խնամակալները և խնամակալության մարմինները հաճախ երեխայի ու միջազգային համագործակցության այլ մասնակիցների միջև միջնորդի կարևոր դեր են խաղում: Այս ամենը հաշվի առնելով՝ պետությունները պետք է հստակ սահմանեն նրանց պարտականությունները և լիազորությունները միջազգային համագործակցության համատեքստում: Օրինակ, խնամակալն առանցքային դեր է խաղում այլ պետությունների հետ համագործակցություն պահանջող տարբեր ընթացակարգերում, այդ թվում՝ ընտանիքի վերամիավորման հետ կապված: Նիդերլանդներում ՆԻԴՈՍ-ը խորհրդատվական աջակցություն է տրամադրում խնամակալներին՝ իրենց պարտականությունների կատարման ողջ ընթացքում: Այս ոլորտում միջազգային համագործակցության ևս մեկ օրինակ է Եվրոպական խնամակալության ցանցը:

106. Պետությունները պետք է ապահովվեն ընդհանուր և անհատական գործերով միջազգային համագործակցության համար ամուր իրավական հիմքեր: Պետք է հաշվի առնել երեխաների համար ծնողական պատասխանատվության հետ կապված դատական և քաղաքացիական գործերով համագործակցության հնարավոր տարբերակները: Պետություններին առաջարկվում է միանալ այնպիսի միջազգային կոնվենցիաներին և փաստաթղթերին և ամբողջությամբ կիրառել դրանք, ինչպիսին է «Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» Հաագայի կոնվենցիան (19 հոկտեմբերի 1996 թ.): Պետությունները պետք է ապահովեն, որ ծագման երկրների հետ երկկողմ համաձայնագրերում ներառվեն համապատասխան երաշխիքներ. Երեխաներին վերաբերող հարցերի շուրջ համագործակցությամբ կապահովվի նրանց իրավունքները լիարժեք պահպանումը, օրինակ՝ երբ ընտանիքի վերամիավորման մասին որոշում կայացնելու նպատակով դիտարկվում են ընտանեկան հանգամանքները, հաշվի առնելով, որ որոշ դեպքերում պետությունները պետք է ձեռնպահ մնան ծագման երկրի հետ կապ հաստատելուց, օրինակ՝ ապաստանի ընթացակարգերում:

107. Անդամ պետությունները միջազգային համագործակցության շրջանակում հաճախ բախվում են դժվարությունների՝ երկարաժամկետ

[48] Տե՛ս ՄԻԵԴ, *Mubilanzila Mayeka-ն և Kaniki Mitunga-ն ընդդեմ Բելգիայի*, թիվ 13178/03, 12 հոկտեմբերի 2006 թ.:

լուծումների գտնելու առումով, քանի որ նման համագործակցությունը հիմնականում նախաձեռնվում է ներգաղթի մասին օրենսդրության սահմանափակ, այլ ոչ թե ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով նախատեսված ավելի լայն հիմքերի հիման վրա: Հարկ է նկատի ունենալ, որ Եվրոպայի խորհրդի նախկինում ընդգծել է միգրացիայի համատեքստում առանց ուղեկցության երեխաների կյանքին վերաբերող նախագծերի վրա տարբեր երկրների համատեղ աշխատելու կարևորությունը: Առանց ուղեկցության անչափահաս միգրանտների կենսագործունեության ապահովման նախագծերի վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2007)9 հանձնարարականի բացատրական հուշագրում նշվում է, թե «ինչպես պետք է տարբեր պետական գերատեսչությունները և ծառայությունները թե՛ ազգային և թե՛ տեղական մակարդակներում միասին աշխատեն, ինչպես նաև համագործակցեն երեխայի ծագման երկրում իրենց գործընկերների հետ՝ նրա կյանքին վերաբերող ծրագրեր իրականացնելու համար»:

108. Իրավական համագործակցության շրջանակից դուրս պետությունները պետք է նաև ստեղծեն ընթացակարգային կառուցակարգեր կամ մեխանիզմներ, որոնք կարող են կիրառվել առանց ուղեկցության երեխաների վերաբերյալ տեղեկատվության կամ այլ տեսակի օգնության հարցումների փոխանցման և կատարման նպատակով: Հաճախ դա բավականին բարդ խնդիր է: Ընթացակարգերը պետք է լինեն հստակ, արդյունավետ և առաջնահերթ և կատարվեն ժամանակին: Խնամակալն առանցքային դեր պետք է ունենա նմանօրինակ ընթացակարգերում՝ խնամքի շարունակականությունն ապահովելու համար, քանի որ նրա պարտականությունները չեն դադարում այնքան ժամանակ, քանի դեռ երեխայի խնամքը չի փոխանցվել ընդունող երկրում համապատասխան մեծահասակ անձին, լինի դա ընտանիքի անդամը կամ այդ պետության համապատասխան խնամակալության մարմնի ներկայացուցիչը: Դրա հանգուցալուծումը երկու երկրներում երեխաների խնամքի և պաշտպանության, այլ ոչ միայն ներգաղթի կամ հյուպատոսական ծառայությունների մասնագետների ներգրավումն է: Խնամակալները և խնամակալության մարմինները պետք է ակտիվ մասնակցություն ունենան՝ ապահովելու, որ երեխայի անհատական առանձնահատկությունների պատշաճ կերպով հաշվի առնվեն, ինչպես նաև այդ ընթացակարգերում երեխային տեղեկացնելու, օգնելու և աջակցելու գործում: Մասնավորապես, կարևոր է ապահովել, որ երեխայի կարծիքը լսված լինի և նրա բոլոր մտահոգություններին լուծումներ տրվեն: Խնամակալները պետք է նաև կարևոր դեր ունենան միջազգային հարաբերությունների համատեքստում՝ երեխայի ընտանեկան կապերը վերականգնելու կամ պահպանելու և տեղական ծառայությունների հետ ընտանիքների փոխազդեցությունը խթանելու գործում:

109. Պետք է նախատեսվեն հստակ և արդյունավետ երաշխիքներ՝ երեխայի վերաբերյալ ցանկացած տեղեկատվության գաղտնիությունը, ինչպես նաև նրա անվտանգությունն ու անձնական կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու համար: Մասնավորապես՝ երաշխիքները վերաբերում են այն հարցերին, թե արդյոք և ինչպես է տեղի ունենում տեղեկատվության փոխանակումը զգայուն մոտեցում պահանջող դեպքերում և ինչ տեղեկատվություն է փոխանակվում: Ցանկացած միջազգային համագործակցություն տեղի է ունենում միայն երեխայի լավագույն շահերից ելնելով և պաշտպանության նկատառումներով՝ միջազգային պաշտպանության կարիք ունեցող ընտանիքների, բռնության, թրաֆիքինգի կամ շահագործման զոհ դարձած երեխայի անձնական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համատեքստում:

110. Պետությունները պետք է նաև ստեղծեն խնամակալների և խնամակալության մարմինների փոխգործակցության միջոցներ այլ մասնակիցների հետ երեխայի այլ պետություն տեղափոխվելու դեպքում, խնամակալության փոխանցման պայմանները որոշելու համար: Սա կարող է ներառել հետվերադարձի համագործակցության և մոնիտորինգի դրույթներ՝ շարունակական և կայուն աջակցություն ապահովելու և կայուն վերաինտեգրումը խթանելու համար:

111. Պետությունները պետք է պարբերաբար փոխանակվեն գիտելիքներով, փորձով և լավ գործելակերպով այս հարցի վերաբերյալ: Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող խնամակալության ցանցն այս ոլորտում լավ գործելակերպի զարգացման օրինակ է:

Ստուգաթերթ հանձնարարականի իրականացման քաղաքականության մշակողների համար

Սկզբունք 1. Միգրացիայում առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների իրավունքների պաշտպանություն՝ խնամակալության միջոցով

Քաղաքականություն մշակողներն իրենց ազգային խնամակալության համակարգերի ուժեղ և թույլ կողմերը գնահատելիս կարող են հաշվի առնել հետևյալ հարցերը.

1. Արդյո՞ք ձեր պետությունը վավերացրել է համապատասխան միջազգային բոլոր փաստաթղթերը, որոնք նշված են Հանձնարարականի նախաբանում: Խնամակալության արդյունավետ համակարգ ներդնելով՝ անդամ պետությունը կպահպանի այդ փաստաթղթերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:

2. Արդյո՞ք ներպետական օրենսդրությունը նախատեսում է, որ առանց ուղեկցության կամ ընտանիքից անջատված յուրաքանչյուր երեխա պետք է ստանա խնամակալի աջակցությունը և օգնությունը:

3. Արդյո՞ք երեխայի լավագույն շահերի սկզբունքը նախատեսված է ներպետական օրենսդրությամբ և իրականացվում է առանց խտրականության:

4. Արդյո՞ք խնամակալության համակարգն ունի հնարավորություն հոգալու երեխաների հատուկ կարիքներն ու խոցելիությունը: Արդյո՞ք խնամակալն ունի անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ՝ գնահատելու երեխայի անհետանալու ռիսկը և այն ռիսկերը, որոնց նա կարող է ենթարկվել անհետանալու դեպքում, մշակել անվտանգության համապատասխան անհատական խնամքի ծրագրեր, ստեղծել պաշտպանական մեխանիզմներ, ինչպես նաև աջակցել երեխայի վերականգնմանը ցանկացած վնասվածքից, որը նա ստացել է իր ծագման երկրում, ճանապարհորդության ընթացքում կամ հյուրընկալող պետությունում:

5. Արդյո՞ք ներպետական օրենսդրությունը նախատեսում է երկարաժամկետ լուծումներ այդ երեխաների համար: Արդյո՞ք խնամակալները տեղեկացված են այդ ընթացակարգերի մասին և վերապատրաստված՝ իրենց խնամքի տակ գտնվող երեխաների համար այդ ընթացակարգերի մատչելիությունը ապահովելու համար:

Սկզբունքներ 2 և 6. Խնամակալության կառուցակարգերը և ինստիտուցիոնալ միջոցառումները

1. Արդյո՞ք ձեր երկրում գոյություն ունի խնամակալության համակարգ: Արդյո՞ք առկա է խնամակալության հատուկ մարմին, որը լիազորված է վերահսկել խնամակալներին:

2. Արդյո՞ք գործող օրենսդրությունը պարունակում է նվազագույն մասնագիտական չափորոշիչներ խնամակալ լինելու համար՝ հաշվի առնելով 3, 4, 5, 7 սկզբունքների դրույթները: Արդյո՞ք առկա են որակավորման նվազագույն պահանջները: Արդյո՞ք նախատեսվում է ստեղծել խնամակալության որակավորման հատուկ մարմին: Արդյո՞ք նոր որակավորում ստացած կամ հավաքագրված խնամակալների համար նախատեսված է պարտադիր փորձաշրջան, որի ընթացքում նրանք կարող են օգտվել ավելի փորձառու խնամակալների լրացուցիչ աջակցությունից և վերահսկողությունից:

3. Արդյո՞ք առկա են դատվածության վերաբերյալ գրանցամատյաններ անդամ պետությունում: Արդյո՞ք խնամակալության մարմինների համար պարտադիր է ստուգել խնամակալության թեկնածուների դատվածության առկայությունը: Արդյո՞ք առկա է գրանցամատյան, որը պարունակում է

սեռական բնույթի հանցագործությունների համար դատապարտված հանցագործների տվյալները: Արդյո՞ք հավաքագրման գործընթացում այդ գրանցամատյանների ստուգումը պարտադիր է: Արդյո՞ք խնամակալը պետք է կանոնավոր ստուգում անցնի, օրինակ դատվածության վերաբերյալ՝ 3 կամ 5 տարին մեկ:

4. Արդյո՞ք հստակ սահմանված է, թե ով ունի երեխայի համար խնամակալ նշանակելու իրավասություն: Արդյո՞ք գոյություն ունի ներպետական ուղեցույց այն գործոնների վերաբերյալ, որոնք պետք է հաշվի առնվեն խնամակալի նշանակումը դիտարկելիս (օրինակ՝ խնամակալի սեռը, նրա աշխատանքային փորձը, երեխայի կարիքների բարդությունը): Նպատակահարմար է, որպեսզի նոր որակավորում ունեցող/հավաքագրված խնամակալներին լրացուցիչ աջակցություն տրամադրվի և սահմանվի հսկողություն՝ փորձաշրջանի ընթացքում:

Սկզբունք 5. Արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ

1. Արդյո՞ք առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների համար նախատեսված է խնամակալի կամ խնամակալության մարմնի դեմ գանգատ ներկայացնելու արդյունավետ կառուցակարգ: Արդյո՞ք գանգատների ներկայացման կառուցակարգը հագեցված է բավարար ռեսուրսներով՝ ողջամիտ ժամկետում արդյունավետ պաշտպանության միջոցի հասանելիությունն ապահովելու համար:

2. Արդյո՞ք գանգատների ներկայացման կառուցակարգն անկախ է: Արդյո՞ք երեխաների իրավունքների պաշտպանն օժտված է համապատասխան իրավասությամբ խնամակալության մարմնին պատասխանատվության ենթարկելու համար:

3. Արդյո՞ք գանգատների ներկայացման կառուցակարգը հարմարեցված է երեխաների կարիքներին՝ համաձայն ԵԽ երեխաների համար բարենպաստ արդարադատության ուղեցույցներին:

4. Արդյո՞ք առկա է բավարար և երեխաների համար բարենպաստ և բավարար տեղեկատվություն, թե ինչպես կարելի է օգտվել գանգատի ներկայացման կառուցակարգից: Շատ կարևոր է ապահովել, որ երեխաները հասկանան, որ իրենք կարող են գանգատ ներկայացնել առանց պատժվելու վախի և որ դա չի ազդի նրանց իրավունքների վրա այլ ընթացակարգերի համատեքստում (օրինակ՝ խնամակալի վերաբերյալ գանգատ ներկայացնելը բացասաբար չի անդրադառնա ապաստանի դիմումի արդյունքի վրա):

5. Արդյո՞ք հասանելի է իրավաբանական օգնություն՝ ապահովելու, որ երեխան կարողանա օգտվել անվճար անկախ իրավաբանական խորհրդատվությունից՝ իրավական պաշտպանության իր իրավունքն իրացնելու համար:

Սկզբունքներ 8 և 9. Համագործակցություն

Քաղաքականություն մշակողները հաշվի են առնում հետևյալը.

1. Բոլոր ինստիտուցիոնալ և մասնագիտական կառույցների բացահայտում, որոնց հետ պետք է համագործակցեն և համակարգեն աշխատանքները պետական և տեղական մակարդակներում:

2. Համագործակցություն պահանջի և խթանման, իրավական հիմքի ապահովում՝ ներառյալ հաստատության յուրաքանչյուր ներկայացուցչի դերերի ու պարտականությունների սահմանումը, և այն եղանակները, որոնցով համագործակցությունը գործնականում պետք է իրականացվի (կանոնավոր հանդիպումներ, տեղեկատվության կանոնավոր փոխանակում, պետական և տեղական հանգամանքներին համապատասխանող այլ ձևեր):

3. Համատեղ արձանագրության ընդունում՝ կառուցակարգերը պաշտոնական հիմքի վրա դնելու, երեխայի լավագույն շահերից ելնելով համագործակցելու և համակարգելու պարտավորությունները չկատարելու համար հաստատություններին պատասխանատվության ենթարկելու համար: Այս արձանագրությունների մշակման մեջ ներգրավվում են համապատասխան կառույցներում աշխատանքային փորձ ունեցող մասնագետներ՝ ապահովելու, որ դրանք համահունչ լինեն համապատասխան մասնագետների և երեխաների կարիքներին:

4. Խնամակալության մարմինների միջև միջազգային համագործակցության հնարավորությունների և պայմանների ստեղծում (օրինակ՝ համագործակցություն անհետացած երեխաների և երեխաների միջսահմանային թրաֆիքինգի ռիսկերի համատեքստում, կամ պետությունների միջև ընտանիքների վերամիավորման կամ երեխաների փոխանցման համատեքստում՝ հուսալի լուծումներ գտնելու համար):

5. Ուղեցույցների և ընթացակարգերի մշակում միջազգային համագործակցության իրականացման և հաշվետվությունների ներկայացման պահանջների վերաբերյալ:

6. Միջազգային մշտադիտարկման կառույցներին հաշվետվություններ ներկայացնելու և դրանց աշխատանքներին մասնակցելու համար պատասխանատու մարմնի ստեղծում:

Ստուգաթերթ խնամակալության մարմինների համար

Խնամակալության մարմինները քննարկում են ռազմավարության/կարգերի ընդունման հնարավորությունը, որպեսզի հստակություն և իրավական որոշակիություն ապահովեն շահագրգիռ բոլոր կողմերի համար (առանց

ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների, խնամակալների, և այլ մասնագետների, որոնք կարող են փոխգործակցել խնամակալության համակարգի հետ): Ռազմավարությունը/կարգերը պետք է հստակություն ապահովեն ուղեցույցներում նշված բոլոր սկզբունքների հետ կապված իրավական և կարգավորող պահանջների վերաբերյալ, մասնավորապես՝

1. **Խնամակալների ընտրություն և հավաքագրում.** սահմանում են ընտրության և հավաքագրման ընթացակարգերի չափորոշիչներ, ներառյալ նվազագույն որակավորումը, դատվածության բացակայությունը, բնութագիը և տեղեկանքի պահանջները:

2. **Վերապատրաստում**. խնամակալները պետք է աջակցություն ստանան ինչպես նախնական, այնպես էլ շարունակական վերապատրաստման միջոցով՝ իրենց գործառույթների, ինչպես նաև իրենց պատասխանատվության տակ գտնվող երեխաներին վերաբերվող համապատասխան ընթացակարգերի, մասին: Խնամակալության մարմինը կարող է կազմել և թարմացնել ուսուցման մոդուլներ և խնամակալներին տրամադրվող նյութեր:

3. **Նշանակում.** այս ընթացակարգերը պետք են իրավական որոշակիության համար, հստակ սահմանեն, թե ինչպես և ում կողմից է նշանակվում խնամակալը, ինչ ժամկետներում և ինչպես է այդ ընթացակարգը հարմարեցված երեխայի լավագույն շահերին:

4. **Խնամակալներին հասանելի աջակցություն և նյութեր.** խնամակալության մարմինները պետք է մշակեն գործիքներ և նյութեր խնամակալների համար, որոնք թույլ են տալիս նրանց կատարել իրենց գործառույթները՝ ուղեցույցներում նշված բոլոր սկզբունքներին համապատասխան: Դա կարող է ներառել որոշումների կայացման ընթացակարգերի ստուգաթերթերի, խնամակալների իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ ուղեցույցների և տեղեկատվական նյութերի մշակում՝ օգնելու խնամակալներին իրենց խնամքի տակ գտնվող երեխաների հետ տարվող աշխատանքներում իրենց մանդատի ընթացքում: Սա կարող է ներառել նաև գործերի կառավարման և տվյալների հավաքագրման վերաբերյալ ուղեցույց՝ քաղաքականություն մշակողների համար հասանելի տվյալների որակը բարելավելու համար:

5. **Վերահսկողություն խնամակալի մանդատի ընթացքում.** խնամակալության մարմինները կարող են ընդունել խնամակալների գործելակերպի կանոններ՝ հստակեցնելով, թե ինչպես պետք է խնամակալը կատարի իր գործառույթները: Դա պետք է տեղեկություններ ներառի խնամակալի իրավական պատասխանատվության մասին և ցուցիչներ՝ խնամակալին ուղղորդելու համար, թե արդյոք նրա աշխատառոճը համապատասխանում է գործելակերպի կանոններին, թե ոչ:

6. **Գանգատներ և կարգապահական ընթացակարգեր.** մշտադիտարկման և կարգավորման իրենց գործառույթների շրջնակում՝ խնամակալության մարմինները պետք է մշակեն գանգատների և կարգապահական հստակ ընթացակարգեր ինչպես խնամակալների, այնպես էլ երեխաների համար իրավական որոշակիություն ապահովելու համար: Դա անհրաժեշտ է կամայական որոշումներ կայացնելուց պաշտպանություն ապահովելու և երեխային շահերի հնարավոր բախումից պաշտպանելու համար:

7. **Ներպետական և միջազգային մակարդակով համագործակցություն.** խնամակալության մարմինները պետք է առանցքային դեր ունենան ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային համագործակցության մեխանիզմների ստեղծման և մշտադիտարկման գործում: Խնամակալության մարմինները պետք է դիտարկեն միասնական ստանդարտ գործող ընթացակարգերի կամ աշխատակարգերի ընդունման հնարավորությունը՝ պետական և տեղական մակարդակներում բազմաբնույթ, արդյունավետ համագործակցություն ապահովելու համար:

Ստուգաթերթ խնամակալների համար

Նախքան երեխայի համար գործողություններ կատարելը. անհրաժեշտ է ծանոթանալ խնամակալների համար մասնագիտական չափանիշներին և պահանջներին: Ձեր որակավորումները և ստուգման բոլոր ընթացակարգերը պետք է համապատասխանեն ժամանակակից պահանջներին, և դուք պետք է անցած լինեք բոլոր պարտադիր վերապատրաստումները :

Երբ ձեզ նշանակում/հանձնարարում են գործողություններ կատարել կոնկրետ երեխայի համար. ցանկալի է նախապես ծանոթանալ երեխայի ծագման երկրի մասին որոշ ընդհանուր տեղեկություններին: Ի՞նչ լեզուներով են այնտեղ խոսում: Ի՞նչ կրոններ են դավանում: Ո՞րն է երկրի մայրաքաղաքը: Այս տեղեկատվությունը կարող է օգտակար լինել երեխայի հետ փոխհարաբերությունների կառուցման և վստահության մթնոլորտի ձևավորման համար:

Երբ առաջին անգամ եք հանդիպում երեխային. չմոռանաք ներկայացնել ինքներդ ձեզ, բացատրեք, թե որն է ձեր դերը և ինչը չի մտնում ձեր պարտականությունների մեջ (օգնեք երեխային հասկանալ, որ դուք չեք աշխատում ոստիկանությունում կամ ներգաղթի ծառայությունում ևոր դուք անկախ եք):

Յուրաքանչյուր հանդիպման սկզբում մի քանի րոպե հատկացրեք՝ հասկանալու, թե ինչպես է իրեն զգում երեխան, հարցրեք նրա

հետաքրքրությունների և ձգտումների մասին, ո՞ր ֆուտբոլային թիմին է նա երկրպագում, ի՞նչ է երազում անել, երբ մեծանա:

Խնամակալության ընթացքում. բացատրեք երեխային յուրաքանչյուր ընթացակարգի տարբեր փուլերը, երբ դրանք կատարվում են, օգտագործեք նրա տարիքին, սեռին, հասունության մակարդակին և հասկացողությանը համապատասխան լեզու: Հարցրեք երեխային՝ արդյոք նա անհանգստացած է որևէ բանից և օգնեք նրան հասկանալ, թե ի՞նչ ընթացքում են նրա գործերը, որո՞նք են յուրաքանչյուր գործընթացի հնարավոր հետևանքները և, անհրաժեշտության դեպքում, դրանք վիճարկելու հնարավոր ուղիները:

Լսեք յուրաքանչյուր հարցի վերաբերյալ երեխայի կարծիքը և ասեք նրան, որ դուք այն հաշվի եք առնում: Բացատրեք նրան, թե ինչն է բխում և ինչը չի բխում նրա շահերից: Օրինակ՝ երեխան կարող է վախեցած և անհանգստացած լինել իր մատնահետքերը վերցնելու կամ պարտադիր բժշկական զննում անցնելու կապակցությամբ: Օգնեք նրան հասկանալ ընթացակարգի նպատակը և թե ինչի համար են վերցվում տվյալ-ները/նմուշները:

Հասկացեք՝ արդյոք երեխան իրավունք ունի երկարաձգել խնամակալության ժամկետը 18 տարեկանը լրանալուց հետո և բացատրեք, թե ինչո՞ւ է դա հնարավոր կամ ինչու դա հնարավոր չէ և ինչո՞ւ է դա բխելու իր շահերից կամ հակառակը:

Կապ հաստատեք և համակարգեք գործողությունները որոշումների կայացման գործընթացում ներգրավված այլ մարմինների հետ, օրինակ՝ բժշկական օգնություն ստանալու կամ թրաֆիքինգի դեմ պայքարի մեխանիզմներին հասանելիություն ապահովելու համար համապատասխան ուղղորդումներ կատարելով: Հաշվի առեք տվյալների պաշտպանության և գաղտնիության հետ կապված ձեր մասնագիտական պարտավորություն-ները, ինչպես նաև երեխայի լավագույն շահերից ելնելով՝ գործելու պարտականությունը:

Խնամակալության ավարտին. ժամանակ հատկացրեք երեխային/երի-տասարդին բացատրելու համար, թե ինչու է ձեր խնամակալության մանդատն ավարտվել, որ այն ավարտվել է, ոչ թե այն պատճառով, որ երեխան ինչ-որ սխալ է թույլ տվել, այլ որովհետև տեղի է ունեցել իրադարձություն, որի պատճառով նա այլևս կարիք չունի, որ դուք լինեք նրա խնամակալը (փոխվել է նրա ներգաղթի կարգավիճակը, կամ նա վերամիավորվում է ընտանիքի հետ, կամ լրացել է նրա 18 տարին): Օգնեք երեխային/երիտասարդին որոշել իրենց և կազմակերպությունների/ մարդկանց համար հաջորդ քայլերը, որոնք կարող են օգնել նրան շարունակել ինտեգրումը հասարակության մեջ կամ երկարաժամկետ լուծում գտնել:

Կատարեք գործի փակման/զեկուցագրի կազմման հետ կապված ձեր բոլոր պարտավորությունները:

«ProGuard» նախագծի (2019) շրջանակում մշակված խնամողների համար օգտակար գործիքակազմը պարունակում է տեղեկատվություն, գործիքներ և ցուցումներ այն խնամողների համար, որոնք պատասխանատու են առանց ուղեկցության երեխաների համար: Այն լրացուցիչ մանրամասներ է տրամադրում խնամակալների գործառույթների մասին:

Երեխային բարենպաստ տեղեկատվություն տրամադրելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ինչպե՞ս միգրացիայի համատեքստում գտնվող երեխաներին տրամադրել բարենպաստ տեղեկատվություն» ձեռնարկ՝ առաջնագծում աշխատող մասնագետների համար:

Միգրացիայի համատեքստում երեխաների թրաֆիքինգի և անհետացման կանխարգելման և դրանց արձագանքման վերաբերյալ գործնական ուղեցույցը հասանելի է https://missingchildreneurope.eu/?wpdmdl=1323 հղմամբ:

Խնամակալության հետ կապված հիմնական տեղեկություններ երեխաների համար

Դուք իրավունք ունեք, որ ձեզ համար խնամակալ նշանակվի առանց ավելորդ հապաղման: Փորձեք խոսել փաստաբանի հետ, եթե չունեք խնամակալ կամ խնամակալ ունենալու դժվարություններ ունեք (այս մասին իրավաբանական խորհրդատվությունը սովորաբար անվճար է): Դուք չպետք է վճարեք ձեր խնամակալին:

Խնամակալը պարտավոր է օգնել ձեզ՝ հասկանալու ձեր իրավունքները, այն ընթացակարգերը, որոնք ազդում են ձեզ վրա, և որոշումներ կայացնել՝ ձեր լավագույն շահերից ելնելով: Նա պետք է լսի ձեր կարծիքը մինչև որոշում կայացնելը և բացատրի ձեզ իր որոշումը: Դա չի նշանակում, որ նա ամեն անգամ պետք է անի այն, ինչ դուք եք ուզում, երբեմն նա կարող է որոշել, որ ինչ-որ բան բխում է ձեր լավագույն շահերից, նույնիսկ եթե դուք դրան համաձայն չեք: Նա պետք է բացատրի դա ձեզ, որպեսզի դուք հասկանաք, թե ինչպես և ինչու է նա այդպիսի որոշումը կայացրել:

Խնամակալը պետք է հարգանքով վերաբերվի ձեզ և չանի որևէ բան, որը ձեզ համար բարենպաստ չէ: Նա նաև պետք է համոզվի, որ ձեր հետ շփվող մարդիկ, (ներառյալ սոցիալական աշխատողները, ձեր կացարանի խնամքի անձնակազմը, բուժաշխատողները, ուսուցիչները, միգրացիայի պաշտոնյա-ները և այլն) նույնպես հարգեն ձեր իրավունքները: Նա կարող է օգնել ձեզ օգտվել փաստաբանի ծառայություններից և անհրաժեշտության դեպքում

գանգատ ներկայացնել, եթե որևէ բանի հետ համաձայն չեք, օրինակ՝ ձեր տարիքի կամ ներգաղթի կարգավիճակի վերաբերյալ որոշման հետ:

Դուք կարող եք զրուցել ձեր խնամակալի հետ, եթե համաձայն չեք նրա որոշման հետ, և նա պետք է ձեզ բացատրի, թե ինչպես գանգատ ներկայացնել կամ խնդրել խնամակալի փոփոխություն այն դեպքում, եթե ինչ-որ բան է տեղի ունեցել և դուք այլևս չեք կարող աշխատել նրա հետ:

Ձեր խնամակալի նկատմամբ պետք է հսկողություն իրականացվի խնամակալության մարմնի կողմից, նա սովորաբար պետք է վերապատ-րաստվի և ունենա մասնագիտական գիտելիքներ, որպեսզի կարողանա պատշաճ կերպով օգնել ձեզ:

Եթե ինչ-որ բան չեք հասկանում, պարզապես հարցրեք այդ մասին, դուք կարող եք նաև տեղեկություններ որոնել համացանցում, կան բազմաթիվ թերթիկներ, տեսանյութեր և խորհուրդներ, խնդրեք ձեր խնամակալին օգնել ձեզ գտնել ձեր լեզվով տեղեկատվություն:

Միգրացիան խիստ խոցելի է դարձնում երեխաներին, հատկապես նրանց, ովքեր առանց ուղեկցության են և ընտանիքից անջատված՝ մեծացնելով նրանց հիմնարար իրավունքների և ազատությունների խախտման վտանգը:

Սույն Հանձնարարականը, դրա առաջնորդող սկզբունքները և կիրառելի ուղեցույցները հասցեարգրված են ինչպես որոշում կայացնողներին, այնպես էլ այն պրակտիկ մասնագետներին, որոնք աշխատում են ապահովել առանց ուղեկցության և ընտանիքից անջատված երեխաների պաշտպանությունը, ընդունելությունը, խնամքը և բարեկեցությունը՝ խնամակալության միջոցով: Դրանք պարունակում են ցուցումներ օրենսդրության մշակման և հանրային քաղաքականության ու ինստիտուցիոնալ միջոցառումների պլանավորման վերաբերյալ՝ երաշխավորելով այդ երեխաների համար արդարադատության և արդյունավետ իրավական պաշտպանության հասանելիություն: Դրանք նաև ուղեցույց են տրամադրում, թե ինչպես ամրապնդել համապատասխան շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունն ու համակարգումը, ներառյալ՝ միջազգային մակարդակում:

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE